Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Նոր
√2114

1999

1864р.

# ՀԱՅԵԼԻ

## ԳՈՐԾՈՑ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

## ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԻ

### ՏԻԳՐԱՆԵԱՆ

---

“Զամենայն բանս զոր խօսեսցին ամբարիշտք ; մի՛ դներ 'ի սրտի քում,,. Ժողով. Է. 22:

“Մի՛ թողցես զբարեկամն հին, զի նորն ոչ լիցի նման նմա,,. Եկեղեց. Թ. 14:

“Ըօշաքեցէ՛ք զի եւ առեալէք,,. Ղուկ. ԺԳ. 13.

“Դեժաւա՛ ենաղ զի եւ աիրեաց քաջիարին:

“Աղեքսանդրոս—պղնձագործն՝ բազում չարութիւնս եցոյց ինձ, հատուսցէ նմա Տէր ըստ գործոց նորա,,. Բ Տիմ. Դ. 14.

1444
4-2114-60
Հր 2120



«Կապեցին զՅիսուս տարան մատնեցին Պիղատո-սի,, · Մարկ · ԺԵ · 11:
«Ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ,, · Յովհ · ԺԸ · 35:
«Քանզի գիտէր առ նախանձու մատնեցին քահա-նայապետքն,, · 10.
«Նա զմեղս մեր բառնայ, և վասն մեր ցաւա-կի,, Եսայ · ԾԳ · 4:

---

«Այսուհետև պարտ էր զնա մ՛արդոյ՛, զի ե-ղորմած Տեառն 'ի մարմնի եմաս կերպ,, · Գող · Զ 17:
«Քանզի ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են. զօր հանապազ մեռանիմք, որպէս ոչխար 'ի զենումն,, · Սաղմ · ԽԳ · 22.
«Մի երկնչիր, զի ոչինչ ընդդիմութեան յաստա-տեան ... լեր հաւատարիմ մինչև ցմահ, զի տաց քեզ զպսակն կենաց,, · Յայտ · Բ · 10:
Աւրեմ՛
«Համբեր Տեառն և քաջալերեաց. զօրասցին սիրտք քո, և համբեր Տեառն,, · ԻԶ · 14:

# ԳԻՐՔՈՒԿԻՍ ԳԼՈՒԽՆԵՐԸ.

Յառաջաբանութիւն առ ընթերցողն .

Բան առ գրքոյկն · Մկրտիչ վարդապետի վրայօք ·

Քիւրտիսթանի հայերը տգէտ և քրիստոնեայ մնալուն պատճառը · Տիարպէքիրու նկարագիրը · և վանքերը և վիճակները · 1 էն մինչև 9 երեսը թղթահամարին . բաց կարգա :

Քիւրտիսթանու վանօրէից և ազգային կանոններ . քահանայից պատիւ և պատիժ . Մշոյ մինչև Բաբիլոն . և Խարբէժ և Ակլէկիոյ վիճակները · մինչև Պօլիս ճամբորդութիւն · 9 երեսէն մինչև 20 երեսը կարգա :

1844 ին՝ և 1845 ին Պօլիս գալը · Մուշ բանտը մտնալը · Սասուն Պշտո աղայն բերելը · դարձեալ 1947 ին Պօլիս գալը · և յաւելուած մը , 21 երեսէն՝ մինչև 37 երեսը կարգա :

Տիարպէքիր · Շապըն—Կիսար · Խամծարայ · Եօզկատ · առաջնորդ ըլլալը · գործքերը · Պօլիս գալը · 38 երեսէն՝ մինչև 52 երեսը կարգա :

Քիւրտիսթանու առաջնորդ ըլլալը · Խրճիլ չինելը · Յակոբ եպիսկոպոսի աղքատաց ըրած զրկողութիւնը · 52 երեսէն՝ մինչև 62 երեսը կարգա :

1858 ին Պօլիս գալը · Սամաթիոյ Յէնի—մահալէն քարոզիչ ըլլալը · Քիւրտիսթան Բալու Առաջնորդ ըլլալը · 62 երեսէն՝ մինչև 76 երեսը կարգա Բալուայ և Քիւրտիսթանու վարժարանները · գիրք , և ընծայ տրուիլը · պատրիզպանի գործը : 77 երեսէն մինչև 86 երեսը կարգա :

Զար—սանճագ երթալը : Բալուայ վանից աւերումը 51 հազար ղրուշը · Մելիք Պետրոսի բողոքը պատրիզպանին համար · Վանից գողութիւնը · 86 երեսէն՝ մինչև 92 երեսը կարգա :

Բալուա յանցաւորները ։ Մելքճի—պաշի Կիրակոս աղային գրուած գիրը պարտիզպանի գիրը Խարբերդ գալը · Պ. վըօյի տմարդութիւնը · 92 երեսէն՝ մինչև 100 երեսը կարդա ։

Պօլիս Պ. վըօյի գէշութիւնը · խաբելով կոնտակ առնելը · տեղապահին գրուած գիրը · պօյաճու ոտից կոտրելը · Բալու գալը · հաշիւները տեսնալ · Տիէրպէքիր գալը · 100 երեսէն՝ մինչև 104 երեսը ·

Տրուած գրքերու և Թանգարանի ցուցակը և վերակացուքը Ճիշատակները, ընծաները, Թիւրտիսթանու իրաւունքը, փաշային Էմր—սամի գալը, պարտիզպանի մեղայի գիրը, Էրզրում, Էջմիածին երթալ, Պօլիս գալը, 104 երեսէն՝ մինչև 116 երեսը կարդա ։

Պօլսոյ մէջ եղած խօսքերը, դատը, և բոլոր գործքերը · 117 էն՝ մինչև ցվերջ ։



# ԻԸՆ

## ԱՌ

## ԸՆԹԵՐՑՈՂ ԵՂԲԱՅՐՍ

---

Ամէն մարդ գիտէ որ խուլը՝ չի լսեր, համրը՝ չի խօսիր, կոյրը՝ չի տեսներ, կաղը՝ չի քալեր, հիւանդը՝ պառկած տեղէն դուրս չելլեր. անոր համար աւելի զիրենք հալածող և բամբասող թշնամիներ չունին:

Բայց սակայն՝ ինչ ատեն որ ականջը բաց՝ զանազան լուրեր կը լսէ, և աչքը սրատես՝ հեռուէն շատ բաներ կը տեսնէ, ոտքը երագընթաց՝ հարկ եղած տեղուանքը կ'երթայ, լեզուն ճարտարախօս՝ ամէն բանի մէջ պատասխանատու կ'ըլլայ. հարկաւ աջ կողմը բարեկամներով՝ և ձախ կողմը չարակամներով պիտի շրջապատի:

Քանզի՝ սկիզբէն նախանձութիւնը մարդուս հետ միացեր, Ադամային ծննդոց մէջ աննախանձ մարդ չկայ, վասն որոյ Դաւիթ մարգարէն մարդս կը յորդորէ որ քովը գտնուած նախանձը չարերուն զոհ չընէ. ինչպէս որ կ'ըսէ. "Մի՛ նախանձիր ընդ չարս, և մի՛ ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն,,. Սաղմ. ԼԶ:

Հապա ինչ բանի զոհ ընելու ենք մեր քովը գտնուած նախանձը. աՀա Սրբազան Առաքեալ ցոյց կուտայ մեզ ըսելով. "Նախանձաւոր լերո՛ւք շնորհացն որք լաւ են,,. Ա. Կորն. ԺԲ. 31:

Հիմայ բոլոր Պօլսեցւոց յայտնի է որ՝ 1859 Թուականի փրկչին. Տիգրանեան Մկրտիչ վարդապետը. Եէնի—մահալլէ սուրբ Յակոբ եկեղեցին. որն որ յետին աղքատութեան և ծանր պարտուց ներքև անկեալ կը ճնշէր. ան տեղին Քահանայից կարգեցին.

Մինչև ան ատեն, թէ և յիշեալ վարդապետը բարեկամ և թշնամի ունէր Պօլսոյ մէջ. համարեա թէ չունէր. իսկ երբոր սկսաւ քարոզութիւն, և սուրբ Խաչահանգիստ ընելու, բարեկամներ աջ կողմը, թշնամիներ ձախ կողմը սկսան շատնալ:

Ինչպէս տասնապատիկ աւելի էր բարեկամը, թէ ան ատեն և թէ հիմայ. բայց թշնամին որքան և քիչ ալ ըլլայ՝ ես անհոգով կարող է մեծամեծ վնասներ հասցունել, ո-րովհետև Աստուածային շնորհաց հոգին բաժնուած է իրմէ:

Աստուած վեց օրեայ աշխարհը կ'ստեղծէ. շինութեան մէջ կը դնէ, բայց աւերութեան մէջ դնելու քառասուն օր կամաց կամաց անձրևի կաթիլներով ջրհեղեղը կը բերէ. որով իրեն գթութեան և ողորմութեան մէկ երևելի նշանն էր: Իսկ սատանայն երբոր Աստուծմէն Յօբայ համար հրաման առաւ; միջոց չանցունելով չարաչար ցաւօք և վնասներով լցուց Յօբին. Յօբ. Բ.

Սանկ ալ գէշ մարդը՝ իրեն գէշութիւնը, թէև ինքը մինակ ալ ըլլայ՝ կարող է մէկ բոպէի մէջ մեծամեծ վնասներ հասցունել իրեն ընկերոջ. զոր օրինակ՝ ապրանքը գողնալ. տունը կրակի տալ. մարդ սպաննել. անուն կոտրել. սուտ վկայել, զմարդ խաբել. և այլն ասոր պէս:

Բայց տունը շինել, Նաւը տեղը բերել, կոտրածը շինել շատ դժուարին է. վերէն դէպի վար քար գլտորցնելը շատ հեշտ է. իսկ՝ ի վեր հանելը շատ դժուարին է:

Հազար ոչխարին՝ և երկու բիւր գառնուկներուն մէկ գայլ բաւական է վնասելու. և հազար անձինքներուն ալ մէկ օձ և կարիճ շատ է, զանոնք քունին մէջ խայթելու և մահացնելու:

Արդարև Տիգրանեան Մկրտիչ վարդապետին Պօլսոյ մէջ հազարաւոր սրտակից բարեկամներ կան, և կ'երևին. որոց ոչ գոյ թիւ. որ ոչ վնասակար ժանիք, և ատամունք ունին, և ոչ թիւնալի խայթ. այլ և իբրև ոչխար և աղաւնի ընտանի:

Բայց սակայն մէկ երկու օձարնոյթ և գայլասիրտ թշնամիներ ալ յայտնուեցան. որ առ նախանձու սկսան յիշեալ վարդապետին որոգայթներ լարել, ինչպէս որ իրենց կարծիքին համաձայն որպէս թէ և կատարեցին։ Նու արդ՝ ատ գրքոյկս, բարեմտութեամբ իբրև Դանիէլ սուրբ մարգարէ. Յոբէաս կ'աղաղակէ. եթէ Ոչ են բազմաժամանակք իմաստունք, և ոչ ծերք գիտեն զիրաւունս. յորում արդարութիւն ոչ էր։

Մինչև ցայսօր ի՞նչ խօսուէր և ի՞նչ զրուցուէր բոլորն ալ սուտ և զրպարտութիւն ըլլալը գրքոյկը պիտի իմացունէ բոլոր բարեմիտ ընթերցող եղբայրներուն, եթէ աննախանձ սրտիւք, և անկիրք ողով ծայրէ 'ի ծայր կարդանն է։

Քանզի՝ Որ ունի ըմբռնողութիւն գայ առ լոյս։

Արդարև թէ որ Մկրտիչ վարդապետը խուլ և համր, կոյր և բորոտ, կաղ և հիւանդ ըլլարնէ՝ իրեն պաշտօնին մէջ, ո՞չ մի թշնամի կունենար. անպտուղ վայրենի ծառերու նման, և ձմերան դդմի պէս (փուշ փուշի) խաղաղ կը թողէին զինքն. իսկ՝ իրեն պաշտօնին մէջ, արթուն և աշխատաւոր ըլլալուն համար՝ չարերու սրտին նախանձն ալ արթնցաւ, սկսան գէշութիւն ընելու, ինչպէս որ՝ Սուրբ գրքին մէջ օրինակը գտնուելէն ետքը՝ Եգիպտոսի պատմութեանց և փիլիսոփայներու վէպերուն մէջ ալ կը տեսնանք պատկերները։

Նա՛ թէ որ Աբէլ ուղիղ չմատուցանէր պատարագը, Կայէն եղբօրմէ դաշտին մէջ չէր սպաննուեր։ "Յարեաւ Կայէն 'ի վերայ Աբէլի եղբօր իւրոյ և սպան զնա,,. Ծննդ. Դ. 8։

Թէ որ Յակոբ—Սահակայ անդրանկութեան օրհնութիւնը չառնէր հօրմէն, Եսաւ եղբայրը ոխ չէր պահեր սրտին մէջ։ "Եւ ոխացաւ Եսաւ ընդ Յակոբայ վասն օրհնութեանն, որ օրհնեաց զնա հայր իւր. և ասէր Եսաւ 'ի միտս իւր. Մերձեսցին աւուրք սգոյ հօր իմոյ, զի սպանից զՅակոբ եղբայր իմ,,. Ծննդ. ԻԷ. 41։

Թէ որ Յովսէփ—գեղեցիկ ծառայ—պատուիրանին չհագներ՝ և երազ չտեսնէր, եղբարցմէ հորու մէջը չէր ձգուէր.

«Մերկացուցին զպատմուճան ծաղկեայ ՚ի նմանէ, և առին ընկեցին զնա ՚ի գուբն»։ Ծննդ. ԼԷ. 24։

Յովհաննէս—Մկրտիչ քանի որ Հերովդէսին չէր յանդիմանէր՝ վնաս չկար իրեն. երբոր յանդիմանեց, բանտուեցաւ բանտը արգիլուեցաւ և վերջապէս գլխատեցաւ. Մատթ. ԺԱ. 2։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ քանի որ քարոզութեան և բժշկութեան չէր սկսած, զինքը ոչ բամբասող կար և ոչ ալ խաչող. երբոր սկսաւ քարոզել, ու ըսաւ. «Վա՜յ ձեզ կեղծաւորաց. անկէց սկսան զինքը հալածել մինչև ՚ի խաչ հանել. Մարկ. ԺԴ. 2։ Նոյնպէս Առաքեալները երբոր սկսան քարոզել՝ ան օրէն սկսան հալածուիլ և բանտարկուիլ, մինչև անգամ գան ըմպել և չարչարանօք մեռանիլ. Գործ. Դ։

Այսքան օրինակ Հին և Նոր Սուրբ գրքէն հերիք ըլլայ. գանք հիմայ Հայոց Ազգային պատմութեանց և փիլիսոփայից վիպասանութեանց մէջէն քանի մը օրինակալ բերեմք, վերջացունեմք։

Թէ որ Գրիգոր—Լուսաւորիչ՝ Տրդատին կամացը հնազանդէր, այսքան չարչարանք չէր քաշէր. Ա. Հատոր Հայոց Պատմ. Թղթահամար. 374։

Թէ որ Մեծն—Սահակ՝ Նախարարաց հնազանդէր, Վռամայ բանտը չէր մտնար. Ա. Հայոց Պատմ. 516։

Թէ որ Մեծն—Ներսէս՝ Պապ թագաւորին չի յանդիմանէր, դեղամահով չէր վախճանէր. Հայ. Պատմ. Ա. 469։

Թէ որ Գրիգոր—Նարեկացին՝ Հայոց միութեան չաշխատէր, իրեն թշնամիներ ծայթ. այսինքն՝ հաւատոյն պակասեալ, չէին ըսեր և մեծ խռովութիւն չէին հաներ. Բ Պատմ. 852։

Քոլոմպոս՝ թէ որ Նոր երկիրներ գտնալու չաշխատէր, հղթայակապ Սպանիա չէր ղրկուէր. Պատմ. Աշխար. 1050 Թղթահամար։

Սոկրատէս փիլիսոփայն՝ թէ որ քաղաքի երիտասարդաց վարուց և բարուց իմաստութեան կրթութիւններ չի սորվի-ցունէր, իրեն գեղամահուլ վերջանալ չկար ։

Տիգրանեան Մկրտիչ վարդապետն ալ՝ թէ որ Պօլսոյ մէջ և թէ գնացած Նաւթնորդական վիճակները՝ բարեկարգու-թիւններու քարոզելու չպարապէր, իրեն ալ հալածանք և թշնամիք պիտոր չըլլային ։

Նա աս գրքոյկն ալ՝ մխիթարութիւն վշտակիրներուն, և ստութեան դէմ՝ ճշմարտութեան քարոզ պիտոր չըլլար ։

Նա երբոր բարեկարգութիւնները, քարոզները, ճշմար-տութիւնները եղան՝ ստութիւնն ալ իրեն արբանեակներով իբրև ամպ արևուն առջևը սկսաւ ելլել ։ Նոր համար սոյն գրքոյկն ալ՝ իբրև արևելեան հողմ կը շնչէ և կը փա-րատէ ամէն ամպային սևութիւնները, և կը բանայ ճշմր-տութեան արևին երեսը, և կը լուսաւորէ յուսով ճշմար-տութեան, և կը ջերմացունէ սիրով արդարութեանն, ի-րեն ձայնին մտիկ ընողները ։ Քանզի՝ Որ առնէ զճշմարտու-թիւն գայ առ լոյսն ․ կը քարոզէ Տէրն մեր Յիսուս ։

Նա կը խնդրէ գրքոյկը իրեն շօշափող բարեմիտ բարե-կամներէն, որ ծայրէ 'ի ծայր մաքուր մտօք, առանց կրից և ուշի ուշով կարդալ․ եթէ տեղ մը կասկած և կարծիք ու-նեցող մը պատահինէ՝ և տարակուսանաց մէջ իյնի, կրնայ անձամբ Տիգրանեան Մկրտիչ վարդապետէն հարցունել, և կամ յատուկ Ներշնչերով առանձին գրութեամբ կարծիքը լուծելու հարցումը ընել ։

---

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## ԲԱՆՔ ԱՌ ԳՐՔՈՅԿՆ

Ո՛վ ուղէկ ցանկալի՝ ծերոյն պատուական,
Բարեաւ ցուցանէր զոսն՝ յայս մեր ծառայական.
Զի յիմրան հեռի՝ մնայ մեր ցանկան,
Քեւ շնորհանաւ՝ յաւուրս նոր ծաղկան։

---

*Գրքոյկ ծաղիկ նորաբոյս՝ շատ ազգասէր Պօլսեցիք, Հըն-նայարդ և Նորասէր Պրուսեցիք, մաքուր մեղր շինող Մեղուի նման վրադ պիտի թափին, քեզնէ հիւթ և նիւթ պիտի խնդրեն, դուն ի՞նչ հիւթ ունիս անոնց տալու։*

*Պատ. Իմ անոնց տրուելի հիւթս շատ օգտաւէտ է՝ որ անկէց մեղր և մոմ կը շինուի, որն որ՝ ներկայ և ապագայ մարդոց կենացը օգուտներ կ՚ընէ։*

*Մեղրը ուտողը պիտի ըսէ.* «Քաղցր են բանք քո ՚ի քիմս իմ, քան զմեղր բերանոյ իմոյ.» Սաղմ. ՃԺԸ. 103։

*Իսկ մոմն ալ վառած ատենը պիտի ըսեն.* «Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս են շաւղաց իմոց.» Սաղմ. ՃԺԸ. 103։

*Ըհա՛ այդպիսի պատուական հիւթ մը պիտի տամ ես անոնց, որ մաքուր սրտով ինծի կը դիմեն. Եթէ կը բարեհաճիս բարեմիտ ընթերցող, դուն ալ քեզի ատ հիւթէն ա՛ռ։*

### ՕԳՏԱՒԷՏ ԵՒ ՇԱՀԱԲԵՐ ՀԻՒԹ

Մի՛ ումեք չարի չար հատուցանէք, և մի՛ ցանկանաց չարեաց խորհէք, եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն առնիցէք։ Մի՛ յաղթիր ՚ի չարէն, այլ յաղթեա՛ բարեաւն չարին։ Հռմ. ԺԲ. 17։

Գիշերն մերձեցաւ և տիւն մերձեցաւ, 'ի բաց արասցուք այ-սուհետև զգործսն խաւարին. Հռմ. ԺԳ. 12։

Եւ որպէս կամիք զի արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արա-րէք և դուք նոցա. Ղուկ. Զ. 11։

Սորվի՛նք՝ թէ որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն, զի յայտ-նի լիցին գործք նորա՝ թէ Աստուածով գործեցան.,, Յոհ. Գ. 21.

Ահա՛ ասա բարի հիւթերուդ համար շատ մարդիկ պիտի ըսեն քեզ. «Օրհնեալ եկեալ ովսաննայ 'ի բարձունս։,,

Ասոր ալ տուած հիւթիրէդ մաքուր մեղր, այսինքն բարի գործեր յառաջ պիտի գայ. ատիկայ փայելողները պիտի ըսեն Եզեկիէլ մարգարէին գրած բանը. Թէ «Կե-րայ զայն և եղև 'ի բերանի իմում իբրև ըստ քաղցրութեան մեղու.,, Եզեկ. Գ. 3։

Նաև՝ «Կերիցեն տնանկք և յագեսցին. կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից.,, Սաղմ. ԻԱ. 27։

Բ. Գործքդ ալ քաղցր մեղրդ համար ալ նախանձոտ ո-մանք մարդիկ շատ կարգերու պիտի բաժնուին, որոց ոմանք հանդերձեալ ողորմաց պիտի ներկայանան քեզ շողոքորթելու. բայց դուն արթուն կեցիր. «Մի՛ ամենայն ոգւոյ հաւատար.,, Յով. Դ. 1։

Տես Դաւիթ մարգարէն ինչ կ՚ըսէ, ալ տեսակ մար-դոց համար. «Ընդ իս զխաղաղութիւն խօսէին, և ինքեանք բարկութեամբ զնենգութիւն խորհէին.,, Սաղմ. ԼԴ. 20։

Որովհետև ալ տեսակ մարդոց փորը ցուցած է քու վրադ և պիտի ցաւի ալ. ինչո՛ւ ըսես նէ. ահա՛ տես ինչ կը պատասխանեն։

Ո՜չ պիտանի եղև մեզ և հակառակ էր գործոց մերոց, և նա-խատէր զմեզ զյանցանս օրինաց, և բամբասէ զմեզ մեղօք անխրատութեան մերոյ. ծանր է մեզ և տեսանել զնա.,, Ժող. Բ. 12։

Ասոր Երեմիա մարգարէին բանը կ՚սկսին ըսել. «Որո-վայն իմ, որովայն իմ ցաւէ.,, Դ. 19։

Ի վերայ այսր ամենայնի կը մակաբերեն. Դաւիթ մարգարէին գրած բանը, "Ետուն կերակուր ինձ լեղի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ. Սաղմ. ԿԸ. 22. Կրկին աս խօսքերը.

Նման որոյ՝ "Ե՞րբ եկէ ու մեռցի և կորիցէ անունն նորա." Սաղմ. Խ. 6.

Քանզի՝ "Տեսանէք և ոչ ինչ օգնէք, ահաւասիկ աշխարհ ամենայն զհետ նորա գնաց." Յովհ. ԺԲ. 19:

Ուրիշ՝ "Եթէ թողումք զնա այսպէս, ամենեքեան հաւատան ի նա." Յովհ. ԺԱ. 48. Ուստի՝ "Լաւ է մեզ զի այր մեռանիցի." 50.

Կը պատասխանէ գրքոյկը. ես ալ անոնց պիտի ըսեմ մի՛ քնանաք ձեր չար կիրքերուն մէջ. որ ձեզի տրուած մաքուր սերմանը մէջ օտար սերմ չնետուի։

Քանզի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ. "Ի քուն լինել մարդկան եկն թշնամին նորա. և ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն և գնաց. Մատթ. ԺԳ. 25.

Ես պիտի ըսեմ անոնց. "Իսկ դու մարդ հաւասար իմ՝ առաջնորդ իմ՝ և ծանօթ իմ." Սաղմ. ԾԴ.

Զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութեան. Սաղմ. ԻԹ. 19:

Անոնք ալ պիտի պատասխանեն ըսելով զայն բանը՝ որն որ Երեմիա մարգարէին ըսին. "Մահու մեռցիս, զի մարգարէացար յանուն Տեառն." Երեմ. ԻԶ. 9.

Ես ալ Միքիա մարգարէին ըսածը պիտի ըսեմ. "Զի՞ արարից քեզ, կամ ի՞ւ տրտմեցուցի զքեզ. կամ ի՞ւ նեղացուցի զքեզ, տո՛ւր ինձ պատասխանի." Միք. Զ. 3.

Զի ես բարբառեմ զճշմարտութիւն, որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն.

Թէպէտ հեռի եղեն յինէն եղբարք իմ, և ծանեան զօտարս քան զիս, և բարեկամք իմ անողորմ եղեն. Յոբ. ԺԹ. 18.

Իսկ անձինք մեր համբերեսցեն Տեառն զի օգնական և պաշտ-պան մեր է ։ Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր և յանուն սուրբ նորա յուսացաք . Սաղմ. ԼԲ. 20։

Ի քեզ տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան . Սաղմ. Լ. 1։

Ո՛չ խորհուրդքն ձեր խորհէին՝ խոհականն Տէր, ոչ Աստուած ընդ մեզ է . Եսայ .

*Ատանկ խօսքերով չեն համոզուիր, տես յայտնի և համարձակ եկան քեզի հեգնելով պիտի ըսեն .* "Զի՞նչ կամիցի սերմանաքաղս խօսել։ ,,

*Թող զրուցեն, ես ատկէց չեմ ցաւիր . վասն զի՛ հա-զար ութը հարիւր տարի յառաջ սրբազան Պօղոս առաքե-լոյն ըսին աս խօսքը . Գործ . ԺԷ . 18 ։*

*Բայց դուն տես որ, խնդալով իրարու երես կը նային ու քիթերնուն տակէն կը ծաղրեն քեզի ։*

*Աս ալ ինծի հոգ չէ, քանզի մեր Տէր Յիսուս ալ ծաղրեցին երբոր ըսաւ .* Ո՛չ է մեռեալ աղջիկդ, այլ ննջէ, և ծաղր առնէին զնա . Մատթ . Թ . 24 ։ *Ու Պօղոս առաք-եալին ալ ատանկ ըրին .* Ոմանք ծաղրէին զնա . . . . և ոմանք հաւատացին . Գործ . ԺԷ . 23 ։

*Այս քեզի բան մը ըսեմ ատանկ դէշ ծաղրողներու հա-մար մեր տէր Յիսուս կ'ըսէ ։* Վա՜յ ձեզ որք ծիծաղիք այժմ, Ղուկ . Զ . 25 ։

*Ու Յակոբոս առաքեալն ալ կ'ըսէ ։* Ծաղրն ձեր ՚ի սուգ դարձցի ։ Յակոբ . Դ . 9 ։

*Կուզեն թող գիշեր ցերեկ ծիծաղեն . ինծի վնաս մը չունի . բերան իրենց, ծաղրն իրենց ։*

*Գիրքո՛յկ . տես անգամ մը ինչ հրէշ կերպարանքով քեզ կը նային ու կ'ըսեն .* խարդախ *և* նախարդախօս *ես ։*

*Աս ատանկ խօսքերու համար ոչ կը տրտմիմ, և ոչ ալ կը բարկանամ . ատիկայ մեր Տիրոջն ալ ըսին . հրէից կար-դացողները և քահանայները . թէ՝* "Բէեղզեբուղաւ իշխանաւ դիւաց հանէ զդեւս . ,, Ղուկ . ԺԱ . 15 ։ Ես քաղուած ՚ի նո-

ցանէ ամէն · զի գայ ՚ի նմա և մաշէ զնէ · Յոհ · Ժ · 10 ·

*Բայց յիմար, տխմար և տգէտ է խօսքերդ կ'ըսեն · դուն ի՞նչ կ'ըսես ։*

« Յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, զյիմարս աշխարհի ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս . . . հաճոյ թուեցաւ Աստուծոյ յիմարութեամբ քարոզութեանն, ապրեցուցանել զհաւատացեալս · » Ա · Կորնթ · Ա · 21 ·

*Կորքո՛ւկ՝ խօսքերդ շատ հին է .— Այո՛ ։*

Ոչինչ գոյ ՚ի ներքոյ արեգական, զորմէ ասիցէ ոք թէ՝ ահա այս նոր է · Ժող · Ա · 10 ։

*Ու՞ր աչա՛ մէյմէկ նոր խօսքեր ալ կայ հիներուն հետ խառնուած · — Այո՛,*

Որ հանէ ՚ի գանձէ իւրմէ զնոր և զհին · Մատ · ԺԳ · 52 ·

*Ս ՝ան գի՛ իմ քովս հին ալ կայ, նոր ալ · իսկ ես արդէն կը բարբառիմ թէ՝ բոլոր նորերն ալ պիտի հնանան · վասն որոյ* « Յիշեա՛ զվախճան քո, և թո՛ղ զթշնամութիւն · » Սիրաք ։ « Մի՛ ասեր զոր հատուցանէք · » « Զի որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն · զի յայտնի լիցին գործք նորա թէ Աստուծով գործեցան » ։

*Կորքո՛ւկ · քեզի համար կ'ըսեն ատոր կը խօսիս · ի՞նչ կըսես ։*

*Կը պատասխանեմ բարձր ձայնով ·* « Ամենայն որ իբրև զինքն վարկանի զայլս » ։

*Ու՞ր ՚ի վերայ այսր ամենայնի՝ պիտի ըսեմ · սիրտ զոր և բերանը տուզցը մարդոց համար ։* « Դուք ՚ի հօրէ սատանայ էք, և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել · զի նա՝ մարդասպան էր ․ « ՚ի սկզբանէ և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց · զի ոչ գոյ ճշմարտութիւն ՚ի նմա · » « Յորժամ սուտ խօսիցի յիւրոց անտի խօսի, զի սուտ է և հայր նորա սատանայ · » Յոհ · Ը · 44 · Իսկ ես զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ ։

« Զի որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն · » Նն ։

*Կորքո՛ւկ, տես ի՞նչ կ'ըսեն քեզի · դուն ըսած կը լինիս*

թէ՝ — ես դրամ չեմ առներ, ինչո՞ւ այդքան դրամ. և այն հաւաքեցիր:

Այո. Հիւանդի վրայ այցելելու՝ սուրբ Աւետարան և խաչահանգիստ ընելու և աղքատներու պսակի և ննջեցեալի թաղման յուղարկաւորութեան՝ և եկեղեցւոյ մէջ Կենաց փայտին քով հաղորդման ատենը Խունկ դնել. ատպիսի ապօրինաւոր դրամներ, չէ թէ ես՝ այլև ամէն օրինաւոր ճշմարիտ կարգաւորներ չեն առներ և չեն ընդունիր:

Բայց բարեսիրտ Ամիրաներ՝ Պէյեր և էֆէնտիներ, և Աղաներ, և ամենայն արք և կանայք բարեպաշտութեամբ կամաւոր ընծաներ և պարգևներ տուած են:

Ատանկ ընծաներ մեր Տէր Յիսուս ալ կ'ընդունէր. ինչպէս որ կ'ըսէ, "Եւ բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա. Մատթ. Բ. 11.

Եւ առն կին մի ունէր շիշ իւղոյ ծանրագնի, և հեղոյր ի գլուխ նորա. Մատթ. ԻԶ. 7:

Տես Գրքոյկ. բան մ'ալ կ'ըսեն քեզի համար, հաւաքած ընծաներու հաշիւը և առած դրամին գումարը ինչո՞ւ ցոյց չի տար:

Կը պատասխանեմ. ատիկայ ընծայ և դրամ տուողը թող ըսէ. ատոնց ի՞նչ:

Ինչպէ՞ս. ինչ, չէ՞ որ փորերնին կը ցաւի:

Արդարև օրինաւոր հաշիւ կրնային ուզել, երբոր մէկ հաշուետումար ցուցակ մը տային ինծի. թէ ասկէց այսքան. և անկէց այդքան առ. յայնժամ պիտի պարտաւորէի իրենց տուած հաշուեցուցակին համեմատ հաշիւ տալու թէ՝ ահա այսքան առի, և այսքան մնաց:

Բայց ասանկ հաշուեցուցակ մը չտրուեցաւ մեզ:

Եթէ վարդապետական և քահանայական իբրև կամաւոր ընծայ և ողորմութիւն տրուածներու հաշիւը առնուելու լինին, տակաւին շատ տարիներ պէտք է՝ որ կարգը ինծի գայ:

Սրան որոյ կ'ըսեմ. «Մի՛ դատէք զմիմեանս. զի որով դատաստանաւ դատէք դատեսջիք.» «Իսկ որ առնէ զճըշմարտութիւն գայ առ լոյսն. զի յայտնի լիցին գործք նորա թէ Աստուծով գործեցան.»

Հապա առածներդ ի՞նչ ըրիր, և գրքերը ո՞ւր տարիր ենէ:

Առած գրամներս և գրքերս, են կուզես իմանալ, մըտիր գրքոյկիս ծոցը, ծայրէ 'ի ծայր լաւ մը աչքէ անցուր պիտի տեսնայք, ուզածներդ և փնտռածներդ: «Քանզի որ առնէ զճշմարտութիւն.» և այլն:

Գրքոյկ՝ քեզի կ'ըսեն, թէ որ դուն ճշմարտախօս ես. Մկրտիչ վարդապետի 25 տարեկան գործոյ նկարագիրը ցոյց կուտաս. ինչո՞ւ անոր գէշութիւն հասցնողներու և թշնամիներու անունը բացարձակ չես յայտներ:

Իրաւ է խօսքերինին. եթէ ես Քրիստոսի ծառայ չըլլայի, քանի որ Քրիստոսի ծառայ եմ, առանց բան մը ընելու հրաման չունիք Յիսուսէն. այլև Բարի արարէք ատելեաց ձերոց:

Երբեմն շատ հարկաւոր ըլլալուն համար՝ պատմութեան մէջ մէյ մէկ անուն կայ յայտնուած. բայց ո՛չ վասն թշնամութեան և կռից, և կամ վրէժխնդրութեան:

Թշնամւոյն անունը Աստուծոյ առջև, և մերձակայից յայտնի է՝ հնաւորայ յայտնելով և ապագայից ցուցընելով, ինչ օգուտներ կրնայ ըլլալ ազգային, կամ Մկրտիչ վարդապետին:

Օգուտ մը չըլլալէն 'ի զատ. ընական և Աւետարանական պատուիրանազանց մը պիտի ներեւինք այն պատուէրին որ՝ ըսաւ Յիսուս. «Եւ որպէս կամիք զի արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա:»

Ու մանաւանդ յիշեալ վարդապետէն ալ հրաման չկըրցանք առանց բանի մը համար առնել. որովհետև ինքը մինակ արդարութեամբ ճշմարտութիւնը յայտնելու համար

ատ Ծաղին ցանկալի գրքոյկս պատմիչ գործոյ բուսաւ. մի՛-նաց որ ուզողը կրնայ Մկրտիչ վարդապետին քով անդուան Մահօէրներուն մէջ տեսնալ, և մանաւանդ գրքոյկիս մէջ Գե-րապատիւ Աղաներէն ալ իմանալ։

Գրքոյկ. ատ բժշկութիւնները իրա՛ւ է.

Ատիկայ մտիր ծոցս, լաւ մը գտիր ցանկիս մէջ տես և կարդա՛.

Աս տեղիս համառօտութիւնը չի՛ներէր խօսելու.

Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն.

Գրքոյկ՝ ատ քուկին համարձակախօսութեանդ համար, քեզի շատ պիտի նախատեն և անարգեն.

Այո. ես ալ գիտեմ. բայց պիտի տանիմ հեզութեամբ ու պիտի լսեմ անոնց. Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ. և ծառայ քան զտէր իւր. "Եւ եթէ զտանուտէրն Բէեղզեբուղ կոչեցին, որչա՞փ ևս առաւել զընտանիս նորա. Մատ. Ժ. 24. Վասն այնորիկ ամենայնի համբերեմ. Բ. Տիմ. Բ. 10։

Երանի՜ է ձեզ, յորժամ նախատիցեն. և այլն Մատ.

Գրքոյկ՝ դուն տկար ես, չես կարող ատ փտանգը և չարչարանքը տանելու.

Ինծի համար մի՛ լսեր տկար ես. Եւ տկարն Աստուծոյ զօրաւոր է քան զմարդիկ, և զտկարս աշխարհի ընտրեաց Աստուած զի յամօթ արասցէ զհզօր. Ա. Կոր. Ա. 25 Որպէս Դա-ւիթ և զԳողիաթ.

Վասն որոյ՝ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի, (որ է ճշմարտութիւն.) "Զի յորժամ տկարանամ, և յայնժամ զօրանամ. Բ. Կոր. ԺԲ. 10.

Վասն որոյ՝ "Եւ 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ." "Այսուհետև աշխատ ոք զիս մի՛ արասցէ, զի ես զչարչարանս Քրիստոսի 'ի մարմնի իմում կրեմ. Գաղ. Զ. 17.

Քանզի՝ "Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն. զի յայտնի լիցին գործք նորա թէ Աստուծով գործեցան.

Ահա՛ տասնի՛կ ճշմարտախօս ըլլալուդ համար ուր որ եր-թաս, ատասէրները քեզի պիտի բռնեն, անարգելով և քաշքրտելով և զանազան զրպարտութիւններով իրենց մէջէն դուրս պիտի հանեն ։

Այո՛ · ափսոս ես շատոնց գիտեմ · ինչպէս որ Պօղոս առաքեալին ըրին · «Եւ քարկոծեցին զՊօղոս քարշեցին արտա-քոյ քաղաքին, և համարէին զնա մեռեալ ·» Գործ · ԺԴ · 18 ։

Ես քեզի բան մը ըսեմ · աչա՛ ես ճշմարիտ Քրիստոսի աշակերտ եմ · ասանկ և անանկ չեմ գիտեր, ի՞նչ տեսակ ցաւ ըսես մեր գլուխը պիտի պատահի, երբոր մենք ճշմար-տախօս ըլլամք · որ ճշմարտախօսի մը համար այս Յիսուսի մարգարէական սուրբ խօսքերը ըսուեր է · «Հալածեսցեն ըզ-ձեզ եւայլն Մատ · Ե · 11 ։ Ո՛ւյց ատ գլուխը կարգած և ի-մացիր ։

Եւ շատ անգամ ալ ատախօսները և չահասէր ագահ-ները՝ քեզի աղաչելով ճամբու պիտի դնեն · ինչպէս որ Գերգեսացիները դիւահալած մեր Տէր Յիսուսին կ'աղաչէին · «գնալ 'ի սահմանաց նոցա» · Մատ · Ը · 34 ·

Բայց որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն ·

Գորզ՞կ · ոմանք մարդիկ քեզի բարի կ'ըսեն · դուն ի՞նչ կ'ըսես քեզի համար ։

Ես կը պատասխանեմ մեր տիրոջ Յիսուսի, այն բանը որ ըսաւ իշխանին · թէ՝ «Ոչ ոք բարի, բայց մի Աստուած Ղուկ · ԺԸ · 19 ։ Ի վերայ այսր ամենայնի՝ ըստ Յօհաննու Առաքելոյն բարբառիմ · «Եթէ ասիցեմ, եթէ մեղս ոչ ունիմ, զանձինս խաբեմ և ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ · Ա · Յոհ · Ա · 8 ։

Որովհետև · «Սուտ են որդիք մարդկան, և 'ի կշիռս ե-բանոց մեղանչեն և ընքեանք յունայնութեան են 'ի միասին» ։

Քանզի՝ «Ոչ իմացան նոքա զգործս Տեառն, և ոչ 'ի գործս ձեռաց նորա հայեցան» · Սաղմ · ԻԷ · 5 ։

Իսկ՝ «Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն ։

Գրքոյկ, ուր որ երթաս · խռովութիւն կ'ըլլայ, ինչու սանկ կ'ընես:

Յիրաւի նախ Հարաւային հովը՝ միշտ ցրտաշունչ Հիւսիսային հովին դէմ կենալու համար, պտտումներ կը լինի օդին մէջ:

Եւ երբեմն ալ ծովին աղտեղութիւնը պարզելու համար, հովը ծովին մէջ մտած ատենը մեծամեծ ալիքներ ելլելով, ծովը կը խռովի · թէ որ ատ խռովութիւնը չըլլայ, ծովը կը հոտի, և անկէց հոտած շոգը դուրս գալուն պէս՝ մարդկային կենաց վնաս կը պատճառէ:

Ինչ ջուրին մէջ որ հով չի մտներ, այն ջուրը հոտած է. ոչ խմելու և ոչ գործածելու կու գայ, բացի արտաքնոցը թափելէն զատ:

Տես Հրէից և Հեթանոսաց կռապաշտութեան և աւելորդապաշտութեան հոտերը սրբազան Առաքեալները դուրս հանելու համար՝ ի՞նչքան խռովութիւններ ելաւ. մինչև անգամ մեռանիլ, Տես Գործ. ԺԶ. 22: "Եւ ընթացաւ ժողովուրդն ընդ դէմ նոցա, և զօրագլուխքն · պատառեցին զհանդերձս նոցա, և հրամայէին գան հարկանել. և բազում վէրս եդեալ 'ի վերայ նոցա՝ արկին 'ի բանտ:

Տես մեր Տէր Յիսուսին ինչ կ'ընեն. "Եւ լցան ամենեքեան բարկութեամբ . . . և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին . . . գահավէժ առնել զնա. Ղուկ. Դ. 28:

Վերջապէս տես Պօղոս առաքեալին համար ինչ կ'ըսեն. "Գտաք զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն հրէից Գործ. ԻԴ. 5: Եւ զնոյն ըսին մեր Տիրոջը. "Եթէ խռովէ զժողովուրդս. Ղուկ. ԻԳ. 5:

Բայց որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն:

Գրքոյկ. մեր Տէր Յիսուս կ'ըսէ. թէ՝ "Որ գնայ 'ի գիշերի գայթագղի. Յոհ. ԺԱ. 10:

Ուստի բոլոր Պօլսեցիք և Դրսեցիք քեզի ձեռքերնին պիտի առնեն, ներսդ դուրսդ նայելով իրարու ըսեն:

«Տեսցուք թէ ճշմարիտ իցեն բանք նորա, և փորձեսցուք զվախճան նորա. Իմաստ. Բ. 17:

*Դուն ի՞նչ պիտի պատասխանես ասոնց:*

*Ես յայտնապէս բարձր ձայնով պիտի ըսեմ.* «Ընդէ՞ր խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր. շօշափեցէք զիս և տեսէք. Ղուկ. ԻԴ. 38:

*Բայց՝* «Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց. Սաղմ. Ծ. 13:

*Ա՛ռ՝* քննեցէք զիս, և ճանաչեցէք. զգիրս Սաղմ. ԾԳ. 6: Յոհ. Դ. 39:

*Քանզի՝* «Գիշերն մերձեցաւ. Հռոմ. ԺԳ. 12. *Վասն որոյ* «Ի տէր եմ յուսացեալ... զի՞ արասցէ ինձ մարդ». Սաղմ. ԾԴ. 4: «Եթէ ոք գնայ ի տուընջեան ոչ գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ.» Յոհ. ԺԱ. 30: «Զի որդիք լուսոյ էք և որդիք տուընջեան: Ոչ էք գիշերոյ, ոչ էք խաւարի. Ա. Թես. Ե. 5.

*Ինձ պարտ է քարոզել.* «Մինչ օր է»: Յոհ. Թ. Կ. «Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն:

«Զի ի բազում ամաց ողորմութիւն էկի առնել ազգիս իմ, և եկայ պատարագս, որով գտին զիս սրբեալ ի տաճարին ոչ բազմօք և ոչ ամբոխիւ». Գործ. ԻԴ. 17:

Ո՞վ յանդիմանեսցէ զիս. Յոհ. Ը. 46.

*Արդարև* (Բարուքական ծաղկաւէտ), *լաւ մը քննուելէդ ետքը.* «Յայնժամ կացցէ բազմաւ համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրոց.» Իմաստ. Ե. 1: *Ես պիտի ըսեմ.* «Հաստատեցաւ սիրտ իմ ի տէր, և բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ. Ա. Թագ. Բ. 1:

*Արդարև՝* «Հայր իմ և մայր իմ թողին զիս, և Տէր իմ ընկալաւ զիս. Սաղմ. ԻԶ. 10: «Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցէ. Սաղմ. ԻԲ. 1: «Իսկ՝ որ համբերեսցէ, ի սպառ նա կեցցէ: *Քանզի՝* «Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն»:

*Դուրսը՞կ քեզի քար նետող շատ կայ:*

Այո · պտուղ չունեցող ծառին մարդ քար չի նետեր, քար, փայտ, տօխմախ, չէնկէլ, նէրտէ-վան · պտուղ ունեցող ծառին համար պատրաստ է:

Դրքա՛կ · քեզի ատ որոգայթները պատրաստողը քու-կին Պօլսոյ մէջ համարձակ քարոզդ, և ձրիաբար հիւանդաց վրայ աղօթք ընելդ էր · ինչպէս որ Երեմիա մարգարէն կ'ըսէ · ՙՙճանապարհք քո և գնացք քո՝ արարին քեզ զայդ ամե-նայն,, · Դ · 18:

Մինչև անգամ սիրելի բարեկամ բժիշկներ ալ քեզի բամբասեցին:

Այո՛ ատանկ է · բայց ես կ'ըսեմ, հիւանդի վրայ մարմ-նաւոր և հոգևոր բժիշկները, այսինքն՝ խօճայ և հէքիմ 'ի միասին կոչելով ըսելու է · ՙՙԱրի՛ հիւսիս, և եկ հարաւ, շնչեա՛ 'ի պարտէզ իմ՝ զի բղխեսցեն խունկք իմ,, · Երգոց · Դ · 16:

Քանզի՝ մարմնաւոր բժշկին համար Սողոմոն կ'ըսէ ·

ՙՙՊատուեա՛ զբժիշկն վասն պիտոյութեան, քանզի և զնա ստեղծ Բարձրեալն, զի յԱստուծոյ է ամենայն բժշկութիւն, և 'ի թագաւորէ առցէ պարգևս,, · Իմաստ · ԼԸ · 1:

Հոգևոր բժիշկ · քահանային համար ալ Յակոբոս առաք-եալ կ'ըսէ · ՙՙՀիւանդանայցէ ոք՝ կոչեսցէ զերէ-ցունս . . . և աղօթս արասցեն . . . և Տէր յարուսցէ զնա,, · Ե · 15:

Ուստի՝ երկուսի գիտութեան և զօրութեան շնորհքը Աստուած տուած է, երկուսն ալ տանիլ հարկ է: Մարմնա-ւոր բժշկի գիտութեան համար Սողոմոն կ'ըսէ · ՙՙՆա ետ ինձ զանվրէպ գիտութիւն զէակացս · գիտել զազդեցութիւն բնու-թեանց · Իմաստ · Է · 17:

Հոգևոր բժիշկ · քահանային ալ Յիսուս ըսաւ · ՙՙԶհի-ւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդևս հանէք, ձրի ա-ռէք և ձրի տուք,, · Մատ · Ժ · 8: Ուրեմն երկու բժիշկն ալ ինչ հիւանդի վրայ որ երթան, վասն Աստուծոյ պիտի երթան · և ոչ վասն օգտի անձանց իւրեանց · ՙՙՔանզի Աստ-ուած է՝ որ յաջողէ զամենայն յամենայնի,, · Ա · Կոր · ԺԲ · 6:

Գրքոյկ․ թէ որ տեսնաս խումբ մը մարդիկ, որ անհաւատի նման Սուրբ գրքերու վկայութիւնները կ՚անգոսնեն կ՚արհամարհեն, չըլլայ որ Եղիա մարգարէին պէս առ Աստուած աղաղակես թէ՝ "Տէր զմարգարէս քո կոտորեցին, ես միայն մնացի,,:

Քանզի Աստուած 2762 տարի յառաջ տուաւ Եղիա մարգարէին քեզի տրուելիք պատասխանը․ թէ՝ "Թողի ինձ եօթնը հազար այր, որք ոչ կրկնեցին ծունր Բահաղու,, Գ․ Թագ․ ԺԹ․ 15․ Հռմ․ ԺԱ․ 4:

Գրքոյկ քեզի համար շատ բան ըսին ետևէդ, երբոր Պօլսոյ ելեր Բալու և Քիւրտիսթան գնացեր, թէ Պօլսեցիք, և թէ Բալուեցիք․ և թէ Քիւրտիսթանու:

Վանքերը փլուցեր, Մեռոնը, Գըրքերը, Ոսկին, Արծաթը, Ակոանքը, Ցորեանը, տաճարը ծախեր քեզի մեծամեծ պալատներ շիներ նստած ես:

Քրթերու, պէյերու, շէյխներու հետ միաբան եղեր հարստահարութիւն ըրած ես, Բալուա 25հազար ղուռուշ առեր ես․ պարտիզպանի տունը տարած ես, Սաղմոս աղօթք չես ըրած․ պահքդ կուտես եղեր, մէկ մարդու երկու կնիկ կուտաս եղեր․ այր և կին իրարմէ զատելով ուրիշին կուտաս եղեր․ վարժարաններ չես բացած․ աշխատութիւն չես ըրած: Նոյն ալ բան մնաց, ըսէ․ ես ինչ գիտեմ․ շատ բան կ՚ըսեն:

Քեզի կը պատասխանեմ, ինչ որ լսերես, բոլորի պատասխանալ գրքուկիս վերջը ցանկին մէջ նայէ, տեղը բաց կարդա կարծիքդ, և տարակուսութիւնդ պիտի փարատի:

Բայց ՚ի վերայ այսր ամենայնի, առիկայ միտքդ բեր որ՝ ինչ մարդ սատանայի կամքը չկատարէ, ան մարդը միշտ համարձակ պիտի խօսի ու ըսէ՝ գայ իշխան աշխարհիս այսորիկ և յիս ինչ ոչ գտանէ․ Յոհ․ ԺԴ․ 30: Երբոր սատանայի կամքը հնազանդի ու ետևէն երթայ․ սատանայն զանիկայ պիտի սիրէ, ու աշխարհի փառքը անոր պիտի տայ: "Քեզ

տաց . . . զփառս ,, Ղուկ . Դ . 6 ։ և ոչխարհնալ ցանկայ պիտի սիրէ ։ " Աշխարհ զիւրն սիրէ ,, Յով . ԺԵ . 19 ։

Երբոր կամքը չ'կատարէ, մէկ անգամ Անուն հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ըսելով սատանայն խկըյն պիտի հալածի, և կորնչի ։

Վերի խօսքերը դուրս հանողները սատանային ման քանի տեսակ մարմին անհոգի մարդիկ են . որոց կամքը չ'կատարեց Մկրտիչ վարդապետը, վասն որոյ սկսան սրտերնուն հանել ու ըսել. Ղուկ . Զ . 45 ։

Ա . Կարգը Բաղուայ վանից ագահօրէն գինին և րաքին խմօղներն են . որ սուրբ վանքը մէյխանայի դարձուցած էին, զայն Մկրտիչ վարդապետը արգիլեց . օրինաւոր կարգ և կանոն հաստատեց ։

Բ . Տեսակը վանից եղբարքը գողցողներն են, որ հազար տարուան վանքին . ոչ շարժական և ոչ անշարժ ունեցածներուն տումար կար, Մկրտիչ վարդապետը գումարներ հաստատեց ալ գողութեան դուռները գոցուեցան թէ Բաղուայ վանից . և թէ Քրիստոնէութեան . Տես . Ե . կանոնը 11 երես տետրակիս ։

Գ . Տեսակը . Բաղուայ վանից 51հազար ղուրուշ դրամը ցրուող և դէյմէքենէին մնացած մարդիկն և աղքատներու արիւնը ծծողներն են ։ Որոնց չարագործութեանց արգելք կը լինէր Մկրտիչ վարդապետը ։

Դ . Տեսակն ալ, Պօլսոյ մէջ ոմանք անձինք են . որն որ շատ աշխատեցան բանմը խլել Մկրտիչ վարդապետէն, և չ'կարացին, վասն որոյ կը կրուցեն և կը բամբասեն ։

Հիմա Մկրտիչ վարդապետը կորած չէ՛, ահա՛ չորս ամիս է որ՝ Պօլիս Պատրիարքարանի մէջ փառաւոր սենեակ մը բացուած իրեն համար, արձակ համարձակ նստած կը ձայնէ, և կը հրաւիրէ ըսելով։ Եկէք առ, ծարաւն էջէ առ ջուրն ձրայ եկեսցէ և արբցէ . այսինքն ո՛վ որ դատ մը ունի հետս Թող գայ, ձեռագիր մը տայ և երաշխաւոր մը ալ, եթէ դա-

տը վաստկեցաւ նէ՝ ես պատիժս կրեմ և անոր բոլոր վնասը վճարեմ։ Ու եթէ ինքը սուտ ելաւ՝ իրեն երաշխաւորէն իմ բոլոր վնասս և ծախքս, և պատիւս ուզեմ և առնեմ։ Որով իրեն կարծիքն ալ՝ փարատի, և այլոցն ալ։

«Քանզի՝, Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն · զի յայտնի լիցին գործք նորա,, · Յովհ ։

Ուս՝ թէ որ լրագրով գրքուկիս վրայօք բան մը գրուելու ըլլուի, պատասխան չունիմք · երբոր տպագրական ծախսը կանխիկ վճարեն, յայնժամ բոլոր հարցումներու և գրուածներուն շատ թերթերով պատասխան կուտամք, այդու պայմանաւ տպագրական ծախսը վճարելէն ետքը, եթէ գրուածանը սուտ ելլայնէ, մեր պատասխանատուութեամբը · յայնժամ գրքուկիս պատուոյ յարգն ալ՝ անկէց պիտի ուղուի քաղաքական օրինօք · որովհետև սուտ գործով մը մէկին համբաւը կոտրել շատ դիւրին է, բայց՝ անոր պատիւը տեղը բերելը խիստ դժուար է։ Ինչպէս քարը շուտ կիջնէ. իսկ վեր հանելը ծանր է։

Որ ատնիցէ զյանդիմանութիւն՝ սատակեսցէ ։

Գրքոյկ ատ մեր հայոց ազգը երբ պիտի բարեկարգուի և յառաջ երթայ կրօնիւք, և քաղաքականութեամբ։ Ամէն մարդ չափը ճանչելով բաւականասէր ըլլալու ջանադիր ըլլայ, և շահասիրութիւնը իրեն արբանեակներովը անելանելի բանտին մէջ դնէ։

Ու ՚ի վերայ այսր ամենայնի տէրունական ատ պատուէրը իրեն սրտին մէջ պինտ պահէ գործադրութեամբ, թէ՝, Որպէս կամիք զի արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա · Ղուկ · Զ · 11 ·

Ահա՛ երբոր վերոյ գրուած խրատները գործով կատարուիլ սկսաւ, ան ատեն ամենայն բան կատարեալ է. կրօնիւք և քաղաքականութեամբ կրթուած։

Ապա ուրեմն քեզի թէ յայտնի և թէ գաղտնի բամբասողներ, անգոսնողներ, և չարչարողներ պիտի ըսեն զարմա-

նալով.

Մեք անմիտք՝ զկեանս նորա մոլորութիւն համարէաք. և զվախճան նորա՝ անարգութեան. Իմաստ. Ե. 4:

Եւ ոչ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա. Ա. Պետ. Բ. 22: "Զի անօրէնութիւն ինչ ոչ գործեաց.,, Եսայ. ԾԳ. 9:

Թուլացեր զամենայն գեղեր (վասն որոյ) աշխարհ եղեալ (չէ ճառեցի) բայց ոչինչ կարէ. Ղուկ. Դ. 5: Վասն որոյ "Պակասեցաւ 'ի ցաւոց (քանզի սորա) կեանք իմ. (և ամաց շրջադարձութեանց մերոց:) Տկարացաւ աղքատութեան իմ, և ոսկերք իմ խռովեցան. Սաղմ. Ը. 11: "Զի՞նչ շահ եղեւ մեզ հպարտութիւնն. 8: Քանզի՝ "ի տեառնէ է օգնութիւն մեր. Սաղմ. ՁԸ. 10:

Եւ այս ցաւերը, խօսք խօրամթանները մուլթ ամպերու նման փոյթեղ անցնելէն ետքը, բարեկամք և թշնամիք մէկ տեղ գալով, և զիրար համբուրելով, ցնծալով և բերկրու թեամբ պիտի ըսեն.

Ահա՛ ձմեռն էանց, անձրեւք անցին և գնացեալ մեկնեցան, ծաղիկք երեւեցան 'ի բուրաստանի մերում. . . ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում. Թզենին ընձիւղեաց զբողբոջ իւր, այգիք մեր ծաղկեցան:

Սիրելին, "Կատարեա՛ց զաղաղակեաւ քառանս այսինքն՝ (շնորհեր և ողորմութեան խնամարարն) և ապաշխանեցն այգեաց մերոց. զի այգիք մեր ծաղկեցին: Վասն որոյ Լսելի արա՛ ինձ զբարբառ քո, զի ձայն քո քաղցր է. և դէմք քո գեղեցիկ. Երգ Երգոց. Բ. 11: Յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ծաղկեալ բուրաստան՝ բարեւեր հողմանց,
Պարտէզ Տէրունեան՝ ցաւոց զերծմանց.
Գրեայն ուղղախոհ՝ առ ամենայն մարդ.
Որ ունի պտղաբեր՝ միրգ ամուրջ զգացմանց:

# ՀԱՑԵԼԻ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

Տիգրանեան Մկրտիչ Վարդապետ

---

Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն՝ զի յայտ-
նի լիցին գործք նորա թէ Աստուածով գործեցան ։

Յով. Գ. 21։

## ԳԼ. Ա

Ինչ գաւառ որ ապստամբ քիւրտ պէյերու ձեռքին տակն է, անոր բնակիչները անշուշտ, ողորմելի վիճակի մէջ մնալով զրկուած կ'ըլլան Բարեխնամ Թագաւորնուս մարդասիրական խնամքներէն և Եւրոպային օգտաւէտ այցելութիւններէն ։

Ինչպէս որ յայտնի կ'երևի՝ յիշեալ գաւառներու ապստամբներու ձեռքէն առնուած և Թագաւորնուս խնամածու իշխանութեան տակը ինկած ժամանակին անոնց խեղճութիւնները ։

Յիշեալ գաւառներու բնակիչները առ հասարակ կը տեսնաս ժողովուրդ մը, որ ոչ ազգութեան, ոչ մարդկութեան, և ոչ ալ կրօնից ինչ ըլլալը կրնայ որոշել. մինակ ուտել խըմել, և աշխատիլ գիտէ, որոց օրինակը տակաւին Քրիստոնէութեան մէջ եղած գաւառները կը գտնուի, և ուղղը Պօլիս Գասըմ փաշայի խանի մէջն ալ կրնայ գտնալ, և տեսնել օրինակը ։

Եւ աչա բոլոր Քրիստոնէութեան Հայաստանը առ ամենատգէտ խղճութեան վիճակին մէջն էր, քանի որ Սէտր էզզէմ

## Պէթերպուրկին առաջին շարժելու պատճառը :

Ա. Բէշիտ փաշան չէր եկած յիշեալ Բիւրտիսթան : Երբոր 1853 Թուականին փրկչին եկաւ և տիրեց Բիւրտիսթանու գաւառներուն, ան ատեն տեսնուեցաւ անոնց կատարեալ հոգևոր և մարմնաւոր յետին տգիտութեան խղճութիւնները :

Հիմայ պէտք հարցունենք : Երբոր ատ քան Մանորայք և վարդապետներ ունին նէ՝ ինչու համար վարժարան չեն հաստատեր ու վարժապետ մէջերնին չեն բերած, որ անուսումն մնացած են :

Առաջ կը պատասխանենք : Ա. Բիւրտիսթանու Բիւրտ Մահմետականները Շէհմի օրինօք ըլլալնուն համար, Բրքրիստոնէից կարդալու և աղօթք ընելու ձայնը իրենց ականջին հասնելը շատ մեծ մեղք համարուելուն համար, մինչև անգամ եկեղեցեաց լուսամուտ չինելը արգիլուած էր . անոր համար մինչև հիմայ Եկեղեցիները ոչ լուսամուտ ունին և ոչ պատուհան . միայն մէկ փոքր դուռ ունի . թէ և կէս աւուր արևին ներս մտնանէ, լոյս չես կարել տեսնել :

Երբոր ատ օրինաց պահպանութիւնը խստիւ Մահմետական քիւրտերը կը պահեն եղեր . ուստի վարժարան բացուելու և վարժապետ բերուելու, ուսմունք սորուելու ճամբայ և տեղիք չէր մնացեր . վասն որոյ եղած և գըտնուած գիտութիւն ալ դարէ 'ի դար անցնելով անհետացեր, և տգիտութիւնը թագաւորեր :

Երկրորդ առաջին շարժելու պատճառը : Բիւրտ պէյէրը միշտ իրարու հետ պատերազմող ըլլալնուն պատճառաւ, անխտիր քրիստոնէից և Մահմետականներուն զէնք վերցնելու հրաման տրուած էր, և մանաւանդ քաջ պատերազմող անձիմը աւելի շատ մեծ պատիւ կուտային, երբոր քաջապէս կը պատերազմէր . ասոր համար ամէն մարդ տղայութենէ կ'սկսէր զէնքի հետ զբաղիլ . վասն որոյ գիտութեան ընակուելու տեղ չէր մնացեր :

## Հաբէշստանցւոց Քրիստոնեայ մնալուն պատճառը :

Դրուեալ էր հարցում : Որքան խիստ կրօնիւք պաշտպանուած Մահմետականներուն մէջ ամենատգէտ և տկար և աղքատ Քրիստոնեայ ազգերը, ի՞նչ եղանակաւ քրիստոնէութիւնը շարունակեր և Քրիստոնեայ մնացեր են, և կրօնափոխութիւններ չէ եղեր :

Նախ՝ ասոր համար ալ էր պատասխանն : Ինչ տաղաւարներուն քահանայները, շրջելով խոստովանցունելով հաղորդելով, մկրտութեան և թաղման արարողութիւնը ընելով, և անկէ ետքը ամէն տաղաւարի վանքերը երթալ մատաղներ ընել, թմբուկ և փողեր չալելով պարել. և ան տեղը տղայի և աղջկան տեսութեամբ, ամուսնութեան նշանը կատարել, ատ գործադրութիւնները ըլլալով Քրիստոնէութիւնը կեցած մնայեր :

Երկրորդ : Ասոնց Քրիստոնեայ մնալուն պատճառը : Սանորէից հիանալի հնութիւններու զարմանալի կերտուածներով և գմբեթաւոր շէնքերն էր, և անոր մէջ հնագոյն մնացած ահարկու մեծամեծ սուրբ խաչերը, և տեսակ տեսակ ձևերով . աջ . բազուկ . գլուխ . մատ . շինուած սուրբ մասունքներու ամանները հանդերձ մասունքովը . և անկէ ետքը զանազան քահանայից և դպրաց համար զգեստները, և ապա զանազան սրբոց, և Քրիստոսի չարչարանաց և յարութեան և դատաստանի նկարուած ահարկու պատկերները, որ տարին մէկ կամ երկու անգամ երթալով տեսնալով, իրենց սրտին մէջ Քրիստոնէական երկիւղ մը թափանձելով, մեք Քրիստոնեայ եմք, մեք Հայ եմք սկսեր են ըսել, չէնէ՝ ինչ է Քրիստոնէական վարդապետութիւնը, կամ կրօնքը, չեն գիտեր .

Երրորդ : Պատճառ Քրիստոնէութեան շարունակութեան Հաբէշստանի մէջ : Սանորէից համար . Արտ ամսոյն հաւկիթ, Ապրիլէն մատաղ, Մայիսին իւղ, Յունիսին խոտ,

Քիւրտիստանի Քրիստոնէութիւնը ծագումը , և ուսմանց ընդհանուր պատճառը .

---

Յուլիս և Օգոստոսին ցորեան և գարի , Սեպտեմբերին խաղողի չիրայ , Հոկտեմբերին բամպակ , Նոյեմբերին սատու և ծեծած և բոլոր ապրցու , Դեկտեմբերին՝ Յունվարին՝ Փետրվարին տարեկան պտղին վարդապետներ և քահանաներ շրջելով հաւաքած տներնին Աստուած օրհնէ , Քրիստոս օրհնէ ամէն մէկ տանը առջև հարիւր անգամ Յիսուս , Քրիստոս , Աստուած բառերը արտաբերելով անոնց ականջին աղ դպչելով , այս եղանակաւ . Յիսուս , Քրիստոս Աստուած բառերը լսելով , սրտերնուն մէջ թափանձած կեցեր . որով Քրիստոնէութիւնը շարունակուած է :

Չորրորդ : Հեռաւոր Վանօրէից . այսինքն՝ սուրբ Էջմիածնի , սուրբ Երուսաղէմի , սուրբ Կարապետու անապատներէն եայլն . նուիրակներ գալով , զանազան արարողութիւններ ընելով , սուրբ Մեռոն և քարոզ տալով , այդպիսի գործողութիւններ տեսնելով Քրիստոնէութիւնը շարունակուած մնացած է :

Ահա վերոյիշեալ չորս տեսակ գործողութիւնը և արարողութիւնը և հնութիւններն են Քրիստոնէութիւնը ամենատգէտ սրտերուն մէջ թափանձող , և Մահմետական խիստ կրօնիւ ժողովրդոց մէջ Հայերը և այլ ազգերը Քրիստոնեայ պահողը , և ոչ թէ Քրիստոնէական վարդապետութիւնը սորվելով Քրիստոնեայ մնացեր :

Հիմայ աս կը խորհրդածեմք . երբոր 1833 ամին տիրեց Տիգրանակերտու Կուսակալը բոլոր Քիւրտիստանու , և անկէց հինգ տարի ետքը որ կատարեալ իշխանութեան ներքև ընկած էր Քիւրտիստան . այսինքն՝ 1838ին թէ որ արթուն Առաջնորդի մը հանդիպած ըլլար Տիգրանակերտ . մինչև հիմայ շատ գեղեցիկ կրթուած լուսաւորեալ ժողովուրդ մը պիտի վայելէինք Քիւրտիստանի մէջ , բայց ինչ

օգուտ՝ որ անոր հակառակը հանդիպեցաւ Տիգրանակերտու և Քիւրտիսթանու , որ անկէց մինչև ցայսօր 26 տարի ժամանակ մըն է , տակաւին խորին տգիտութեան մէջ կը տառապին . թէ բարեկարգող մըն ալ եղաւ նէ . անոր ալ չորս կողմէն ոմանք հակառակորդներ զանազան հնարքներով արգելք կուտային և տակաւին կուտան ալ , որոնց անունները տես տետրակիս վերջը թիւ 1 :

Իսկ բարեկարգողը բազմաթիւ տեսակ նեղութիւններ տանելով կըսէր բարի արարէք ատելեաց ձերոց ըստ Յիսուս . Մար . Ե . 44 : Վասնորոյ մեր պարտքն է միշտ ճշմարտութեամբ ազգօգուտ և հոգևոր գործեր ընեմք որ Աստուծոյ հաճելի և մարդկանց օգուտ ըլլալը յայտնի երևի . քանզի Յիսուս Տէրն մեր ըստ :

Իսկ որ առնէ ճշմարտութիւն գայ առ լոյսն զի յայտնի լիցին գործք նորա զի Աստուծով գործեցան :

## ԳԼ. Բ

### ՆԿԱՐԱԳԻՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՈՅ . և նորին գաւառներուն . որ Քիւրտիսթանի մէջն են .

Տիգրանակերտ իրեն մէջը Քրիստոնեայ բնակիչ ունի 2500 տուն , կամ սակաւ ինչ աւելի կամ պակաս . որոց 1800 տուն Հայք են . և մնացեալը Ասորի , Քաղդէի , Հայ Կաթոլիկ , Ասորի Կաթոլիկ , Յոյն , և Յունաց Կաթոլիկ . և Բողոքականք :

Ամէն ազգ ունի իրեն յատուկ եկեղեցի, և վարժարան. բայց Հայոց կայ երկու եկեղեցի երկու մանկանց կրթարան. և ունի չորս գիւղ յատկացեալ վիճակ. Գըթիրպիլ. Քապին. Ալիբունար. Հայեղին:

Գըթիրպիլ գիւղը արևելեան կողմը Տիգրիս գետին եզերքը շինուած և կը նայի դէպի արևմուտ Տիգրանակերտու պարտէզներուն և պարսպին, աս գիւղի մեծ մասը Ասորի են, ունին 1 եկեղեցի, և վարժարան ոչ. մնացեալը Հայ ժողովուրդն. որ ոչ եկեղեցի ունին և ոչ վարժարան. միայն Տիգրանակերտոյ սրբազան Առաջնորդը, յիշեալ գիւղի Հայ ժողովրդեան հոգևոր պաշտօնը կուտայ խեղճ քահանայի մը, որ կարողութիւն չունի դրամով ծուխ առնելու. աս պաշտօնին համար միայն 100 ղրշ. կը վճարէ տարուէ տարի սրբազան Առաջնորդին:

Յիշեալ քահանայն ա՛լ օրէնք մը պատահելու ըլլայ նէ կ՚երթայ. չէնէ չերթար. առանց ժամասացութեան և աղօթից կը մնայ ժողովուրդը, վասն որոյ ստիպուած են Հայերը Ասորւոց եկեղեցին երթալու և կ՚երթան. և այժմ նոյն գիւղը Բրօտէսթանդից պաշարուած. շատերը Բրօտէսթանդ եղած են, որ քաղաքէն կէս ժամ հեռի է. և աս գիւղն է որ 30 հոխայ սեխ, և 35 հոխայ ձեղրապոպ կը լինի. որոց մեծ մասի ապրուստը ասկէց է:

Գապին գիւղ. շատը Ասորի. մնացածը Հայ. ունին մէյ մէկ եկեղեցի, և մէյ մէկ քահանայ. խեղճ աղքատ ժողովուրդ, ոչ վարժարան. և ոչ խնամածութիւն. քաղաքէն 1 ժամ հեռի դէպի արևմտեան հարաւ:

Ալիբունար գիւղը 15 րոպէ հեռի արևմուտ. ունի Հայ և Քիլտանի երկու եկեղեցի. քաղաքէն ամէն կիւրակի և մանաւանդ գարունը շատ Հայժողովուրդ կուգան սուրբ Աստուածածնի եկեղեցին ուխտ և Պատարագ

տեսնելու. և գիւղը ունի քսան տուն ժողովուրդ, վարժարան չկայ. աս տեղի ժողովուրդն ալ՝ ծուխ չունող աղքատ քահանայի մը կը յանձնէ յիշեալ Սրբազան Հայրը. Հազիւ թէ 100 ղրշ. կրնայ տարեկան վճարել սրբազան Առաջնորդին և քահանան ալ կիւրակի օրերը միայն ուխտաւորաց հետ կուգայ պաշտօնը կը կատարէ կ՚երթայ, շաբաթը գլուխ առանց աղօթից կը մնայ ժողովուրդը:

Հայեղէկ գիւղն՝ քսան տուն Հայ կայ 1 եկեղեցի սուրբ Եղիայ. 1 քահանայ. վարժարան չկայ քաղաքէս ժամ՝ ու կէս հեռի է, ահա աս է Տիգրանակերտու Առաջնորդական վիճակը:

Տիգրանակերտու աս յիշեալ գիւղօրէից 'ի զատ. բոլոր գաւառները և գիւղերը Գիւրտիստանի մէջ գտնուած Վանօրէից վիճակներն են:

Ինչ բանի յափշտակած ուրիշ վանօրէիցմէ, և թէ օրինաւոր յատկացած Մշու սուրբ Օհաննէս վանից վիճակն է Տիյարպէքիրու հողին մէջ գտնուած գաւառներն:

Տէրճէն, Տարայ: Հայնէ, Լճէ, Հաղբօ, Մէհրայնէ, Սէւէկան, Խնճան, Գոուլք, Յաւեթէ, Փեչար. և Մէշ գաւթին Ջէջ ու տասը կտոր գիւղորայք. 100 գիւղ. տունք 3700. անձինք 29600:

Մակարայեցւոց վանից վիճակն է այժմ Լճու գիւղօրէիցմէ, 15 աղքատ գիւղեր և Հազրուայ գիւղօրէիցմէ մէկ գիւղ. Հայնու գիւղօրէիցմէն 2 և Շարղուղապ, և Գարավան բոլորը քսան գիւղ աղքատ ժողովուրդ ունի տունք 500.

Սկիզբէն Հայնի: Լճէ փեչար առոր վիճակն է եղեր: Ապստամբութեան Ղրիմաց ժամանակին. սուրբ Օհաննէսցիք յափշտակած են:

Սուրբ Կանոնոս վանից վիճակը. Ռնտուան նահանգը, և Խարզան; և Հեսենքէֆ. Սերտուլան. իրենց գիւղերո-

1839 ՅԱՄԻՆ · ՎԱՆՕՐԱՅՔ ԵՒ ՎԻՃԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ ԵՒԱՅԼՆ ·

---

վը , որ կը լինի 30 մանր գիւղօրայս . տունք 1500։

Սուրբ Մատին առաքելոյ վանքին վիճակը . Մասուն . Պըշերի գաւառ . և այն տունք 1000 յետին աղքատ ժողովուրդ ։

Սուրբ Աղբերիկ վանքը ունի վիճակ Սղերդ քաղաքը , և Շերւան , և Բռնաշէն նահանգը . իսկ միւս մընացեալ ունեցած վիճակը Մշու և Բաղեշու նահանգներու մէջն է . որ են Մանազկերտ , Մօտիքան . Օրըլըքի եայլն։

Սուրբ Այնիպրիզ վանքը որ վիճակ չունի , անոր վարդապետը միշտ գիւղօրայս գիշեր ցերեկ շրջելով իրեն ապրուստը կը ճարէ . ատ եղանակաւ կը շարունակէ անցաւոր կեանքը ։

Սուրբ Թորճիլ Թումմայ առաքելոյ վանքը . նոր շինեց սեննակներ վարժարանի համար Տիգրանեան Մկրտիչ վարդապետը , որ մինչև հիմայ տակաւին մէկ վարդապետ և ժամակոչ մը կեցեր մնայեր . որովհետև բարեկարգութիւնը թոյլ չեն տար հաստատուիլ որ անտեղն ալ կարգի մը ներքև ձգուի , ու յիշեալ վարդապետն ալ իրեն բարի նպատակին հասնի ։

Տիգրանակերտու գաւառներուն մէջ արևելեան նահանգները որք են Պէշիրան , Դէէհ , Տէրկիսալ , Հէզան , Բաշտայէր , Պաշուրէ , Շէյխվանէ մէկ քանի կտոր գիւղերը , Այստամարու վանից վիճակն է ։

Ահա 1839 Եդեսացի Յարութիւն եպիսկոպոսը Մշոյ սուրբ Կարապետու վանից և վիճակին ժողովրդոց առաջնորդ ըլլալով . 1839 և դեկտեմբեր 10ին Տիգրանեան Մկրտիչ վարդապետը ձեռնադրեց վարդապետ սուրբ Մշոյ վանքին մէջ . խնդարգրով սուրբ Օհաննէս վանից վանահայր Բարսեղ վարդապետի և ժողովրդոց Գիւրտիստանու ՚ի վերայ նոյն

սուրբ Յօհաննէս վանից և վիճակին վրայ միաբան ։

1841ին Յիշեալ Բարունին Յարութիւն արքեպիսկոպոսի կոնդակաւ յիշեալ վիճակները բարեկարգելու համար եկաւ Քիւրտիստան. Ս. Յիպրիղ վանքը և նախ՝ Քիւրտիստանի բարեկարգութեան համար գրեց կանոններ. որ ներքեւ գրեանքն են ։

———

## ԿԱՆՈՆՔ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՔԻՒՐՏԻՍԹԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՕՐԷԻՑ ԵՒ ՎԻՃԱԿԱՑ ՆՈՑԻՆ 1841 ՅԱՄԻ

### ԳԼ. Ա

### Կանոն Ա

Տիգրանակերտու Հայոց Առաջնորդարան ըլլայ կեդրոն հոգևոր և մարմնաւոր բոլոր Քիւրտիստանի վանօրէից և ժողովրդոց իշխանութեան. և ունենայ 12 քաղաքական և 10 հոգևորական ժողովի անդամներ, որոնք չորս տարին անգամ՝ մը հրաժարուելու պայմանաւ նորոգ ընտրուելու և հաստատուելու ։

### Կանոն Բ

Քիւրտիստանի բոլոր նահանգները ուր որ միւտիր կը նստի, 4 աշխարհական 4 կրօնական անդամներէն միշտ խառըն ժողով մը կ'ազմուի. և Առաջնորդի կողմէն նախագահ

մը նստի չորս տարի պայմանաւ շարունակել և հապա հրաժարուիլ ։

## Կանոն Գ.

Տիգրանակերտ Ազգային սնտուկ մը հաստատել , ամէն մարդ իրեն Ազգասիրութեան համար . Ազգին պայծառութեան և յառաջադիմութեանը կամ վարժարնաց և առաջնորդի խարճագնացութեանց համար կամաւոր Ծննդեան 10 . 7 . 5 . 3 Նշանին 20 . 15 . 5 ։

Պսակին , 50 . 30 . 20 . 10 ։ — Ննջեցեալի , 100 . 70 . 50 . 25 . 10 ։

Երուսաղէմ . Էջմիածին ուխտաւոր գացողները , 100 . 70 . 50 . 20 ։ — Մուշ և այլ վանօրայս 10 . 5 ։

Վաճառականութեան , Պօլիս , Բերիայ , Բաբելոն 20 . 10 . 5 . վճարեն ։

## Կանոն Դ.

Քիւրտիստանու մէջ ամէն նահանգի մէջ Ազգային սնտուկ մը հաստատել . ամէն մարդ իրեն Ազգասիրութեան համար , Ազգին պայծառութեան և յառաջադիմութեանը , կամ վարժարանաց և առաջնորդի խարճագնացութեանց համար Ծննդեան 3 . 2 . 1 ։ — Եւ նշանի 5 . 3 . 2 ։ — Պսակի 20 . 15 . 10 ։ — Ննջեցեալի 50 . 25 ։ 10 ։ — Երուսաղէմ , Էջմիածին 20 . 15 . 10 ։ — Մուշ և այլ վանօրայս 5 . 3 . 2 ։ — Վաճառականութեան երթացող 5 . 3 . 2 . վճարէ ։ Յիշեալ սնտուկները իրեն նահանգին ժողովին իշխանութեան ներքև պիտի մնայ Առաջնորդի հրամանաւ , և Ժողովոյն Տիգրանակերտու ։

Վճռոյն մէջ փոփոխութիւններ ընել, և նորութիւններ հաստատուիլ Ազ-գային ։

---

### Կանոն Ը.

Ամէն վանօրէից և եկեղեցեաց բոլոր անօթները 3 տումար ըլլալով մին վանից ստուկը . միւսը Նահանգին ժողովին ստուկը . միւսը Տիգրանակերտու ստուկը մնայ , և երեք տարին անգամ մը քննուի , աւելցածը նորէն գրեն վանից տումարները ։

Նաև տարեկան հասոյթներն ալ՝ պտղին ևայլն . ժողվուած ժամանակին վանահայրը նահանգին ժողովէն անձ մի և առաջնորդի կողմէն գրագիր մը , չրջելով ժողովէն 3 տումար ընելով . արդիւնքը նահանգին վանից ստուկը բերուի , տումարները յիշեալ ստուկներուն ղրկուի , և հապա վանից տարեկան օրինաւոր կառավարութեան պիտոյքը յիշեալ ստուկէն տրուիլ , մնացեալը արձանագրութեամբ տումարներուն մէջ մնալ ստուկին մէջ , և յիշատակները վանից մէջ գրուիլ և տումարին մէջ գրուիլ ։

### Կանոն Թ.

Նահանգի վարժարանաց և վանօրէից , և եկեղեցեաց շինութեան ծախսը յիշեալ Նահանգի վանից ստուկէն վճարելու է , նոյնպէս լուսագրաց և եասաղչոց և առաջնորդին ամսականները ։ Նաև բոլոր ամէն հասոյթներն ալ ստուկը մտնալու է , որոյ համար յատուկ գրագիր մը միշտ պէտք է , որ յիշեալ դրամները առնել և գրել տումարին մէջ յականէ յանուանէ ։

### Կանոն Ժ.

Ամէն վանից վանահայր իրեն վիճակին ժողովուրդը հաշուելով , եթէ հինգ հարիւր տուն կամ պակաս եղաւ նէ՝ մէկ

վարդապետ վանից միաբաններէն միշտ անոնց վրայ քարոզիչ դնելու է. և յիշեալ վարդապետը գիւղօրայքը կարգաւ շրջել քարոզելու է սուրբ Աւետարանը, և Լուսաւորչական կանոնները և այլն։

Թէ որ վանից վիճակը 1000 տուն կամ 2000 և այլն. ըլլայ նէ, ան ատեն բաժին ընելու է. և 500 տունը մէկ վարդապետի և հաշուին համեմատ չորս վարդապետ 2000 տան համար պիտի հանէ քարոզիչ։ Եթէ 1000 տունը մէկ տեղ ըլլայ նէ՝ անոր համար մէկ վարդապետ ալ բաւական է. Թէ որ ցրուեալ վիճակ է, բաժին ընել հարկ է։ Ու այս քարոզիչները չորս տարի լման շարունակ իրենց բաժնի մէջ մնալով Աստուածօր և Առաջնորդի հրամանաւ։ Ու 'ի լրանալ չորս ամաց, Տիգրանակերտու կրօնական և քաղաքական ժողովով չորս տարեկան գործերը քննուի, եթէ գտաւ աղօգուտ և արդար գործքերով, ան ատեն չորս տարի ևս պիտի նորոգուի յիշեալ պաշտօնը վանին, և կամ այլ ևս լաւագոյն պաշտօնի արժան պիտի ըլլան, եթէ չունեցան բարի գործ մը, ան ատեն վանքին մէջ միաբանութեան կարգը մնալով վանից մէջ պիտի մնան, ուրիշ մէկ արժանաւորի մը պիտի յանձնուի անոնց քիչութեան գործը. Թէ որ վանքը ատ վիճակին հաշուին համեմատ վարդապետ չգտնուի՝ անոր տեղը բանիբուն արժանաւոր քահանայի տրուի, մինչև որ վարժարանէն վարդապետութիւներ ելլեն վարդապետ ըլլան։

Կանոն Ը.

Տիգրանակերտու մէջ, և ամէն գաւառին միւտէյինըստած նահանգին մէջ այսինքն՝ (խասապային) յատուկ վարժարան մը. որուն մէջ Հայերէն և Տաճկերէն գրել կարդալ սորվելու համար հաստատուիլ. նոյնպէս և վանօրէից մէջ, և Տիգրանակերտ սուրբ Սարգիս եկեղեցին.

կամ Ալիբունար սուրբ Աստուածածին եկեղեցին մէջ. գիշեր ցերեկով ճեմարան մը. որուն մէջ քաջ Հայկաբան, և քաջ Տաճկեվար դասատու մը, գրել և կարդալ և գիտութիւն սորվիլ մինչև կէս օր. ժամ 6. և անկէց մինչև երեկոյ. դերձակութեան, կօշկակարութեան, արհեստը սորվիլ. որ աղքատաց ապրուստի ճամբայ մըն է. և վարժարանի կանոններն ալ տետրակիս ետևը կը գտնեմք որոշակի: Նաև այս ճեմարանին մէջ պիտի բերուին անտէր, որբ և աղքատ տղաքները. որ գիւղերու փողոցներուն մէջ և աղբանոցներուն վրայ. և Տիգրանակերտու մէջ անխնամ փողոցները խառն ընդ Մահմէտական տղոց հետ սնոտի խաղերով կը պարապին. ահա այս տեսակ տղաքները թէ յորդորմամբ թէ համոզելով, և թէ բռնի ժողվել բերել ճեմարանի մէջ կրթել, և այլն:

### Կանոն Թ.

Տիգրանակերտու Առաջնորդը ամէն տարի Յունիս, Յուլիս. Օգոստոս. երեք ամիս բոլոր վերոյիշեալ վիճակները շրջիլ, բարեկարգութիւնները աչ.քէ անցունել և պակասը լեցունել և կարգի դնել. վերադառնալ Տիգրանակերտ Սեպտեմբեր 1ին:

### Կանոն Ժ.

Վեց տարի ետ վարժարանները շարունակուելէն ետքը, բոլոր Քիւրտիսթանի Վանօրէից և Նահանգաց վարժաժապետները Տիգրանակերտու ճեմարանէն ելած և հասած երիտասարդներէն պիտի ըլլուին արժանաւոր ամսականներով. և Քիւրտիսթանու համար՝ քահանայացուն և վարդապետցուն պիտի գան Տիգրանակերտու ճեմարանը ըման տա-

րի մը մնայ, և արժանաւոր կրթութիւնները վերստին առնելով և ապա ձեռնադրուին . ապա թէ ոչ՝ հրաման չկայ ձեռնադրուելու ։

## Կանոն ԺԸ.

Տիգրանակերտ նստող Առաջնորդին ամիսը 1000 ղուրուշ իրեն անձնական և մութպաղի համար տրուիլ, և բոլոր անձնական ծախքը իրեն վրայ . եկեղեցւոյն մնակ ըստ հին սովորութեան . քէօմիւր , ձէթ , պուլղուր և սաւառ , և խաշվէն տրուիլ։ Նաև եասաղչոց և լրագրաց և վարժապետաց ամսականները և ամէն շինութիւններու . Վարժարանի , Առաջնորդարանի և այլն . ծախսերը սնտուկէն պիտի լինի , նոյնպէս նահանգներու և վանօրէից , և վարժարանաց և այլն և այլն բոլորն ալ՝ իւրաքանչիւր վիճակին սնտուկէն պիտի տրուի։

## Կանոն ԺԹ.

Նաև բոլոր իրաւունքներն ալ, այսինքն՝ թէ պսակի , թէ պտղի , թէ խոստմունք բոլոր ինչ որ նուէրք կը լինի բացի միշտակաց իւրաքանչիւր վիճակի սնտուկը պիտի դրուի , և յականէ յանուանէ տումարը պիտի գրուի և անդորրագիր մըն ալ նուէրքը տուողին ձեռքը պիտի տրուի։ Նաև ամէն տարի նոր կիւրակէին , բոլոր նահանգներու և վանօրէից տումարները պիտի բերեն Տիգրանակերտ . ել և մուտը խառն ժողով մը կազմելով , Առաջնորդին ներկայութեամբ պիտի քննուի , և տումարները քաղաքական ժողովով վաւերացեալ կնքուի . վերստին նոր տումարներ տալով պիտի ղրկուի տեղերնին։ Նաև ամէն Մանօրայք Ծննդեան , և Պսակի , և Ննջեցելոց նուփուսի քիւթիւկ մը պիտի ունե-

նայ. և ամէն մկրտեալին և անոր հօրը և մօրը, և կնքահօրը անունը, և մկրտութեան և Ծննդեան օրը անոր մէջը գրուելով, և տոմսակի մը վրայ գրուելով յիշեալ անունները մկրտեալին հօրը տալու է ձրիաբար և պիտի պահուի զգուշութեամբ։ Նոյնպէս ամուսնութեան համակին գալած ատենը, նոյն գիրը պիտի բերէ. անոր մէջ պիտի գրուի երեն ամուսնութեան օրը և ամուսնոյն անունը. ևս պիտի տանին պահեն. և երբ վախճանելու լինի, նոյն գիրը կը բերեն և թաղման գիրը կատնուն կը տանին կը լմնայ։

## Կանոն ԺԳ.

Միճակներու տուները ամէն մէկ քահանայի յիսուն տուն բաժնելու է ձրիաբար, ոչ աւելի և ոչ պակաս. ատ յիսուն տունը քահանային պակասութիւնը պիտի հոգան, և քահանայն օրը մէկ տուն երեկոյ և առաւօտ պիտի գըննայ մէկ ժամու չափ Աւետարան և սուրբ Եկեղեցւոյ կանոնները յիշեալ տանը և ընտանեաց պիտի քարոզէ. բնաւ աշխարհական խօսքեր չխօսելով, և անկէ ետքը պիտի քննէ և իմանայ յիշեալ տանը մէջ խռովութիւն մը. կամ անհնազանդութեան ոգի մը և անմիաբանութեան նշոյլ մը կա՞յ. չկա՞յ. թէ որ կայ, պիտի խաղաղցնէ և ապագայ գէշութիւններու առջևը առնել։

Սանկով բոլոր ծուխերուն տունը՝ շրջելով, յիսուն օրը մէկ անգամ հալիւ թէ պիտի կարողանայ մէկ ծուխին տունը երթալ, սուրբ Աւետարանը քարոզել. ընտանիքները հոգևոր և մարմնաւոր բարի և սուրբ խրատներով բարեկարգել։

Բանք Աստուածային առ քահանայս.

## ՅԱՒԵԼՈՒԱԾ.

Քահանայ մը ինչ ատեն իրեն սուրբ կոչմանը համեմատ օրըստօրէ քահանայութեան վերաբերեալ գործողութիւնները . այսինքն՝ եկեղեցւոյ մէջ պաշտօնը անթերի կատարել, և ծուխերուն հոգևոր և մարմնաւոր բարեկարգութիւնները շարունակելու հոգ տանիլը . կատարելապէս կատարէ նէ՝ պիտի լսէ Աստուծմէ մարգարէին բերանով յատուկ իրեն համար ըսած և գրուած այդ բանը:

"Բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք , և պաշտօնեայք Տեառն անուանեսջիք , զզօրութիւնս ազգաց կերիջիք , և մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք · փոխանակ ամօթոյն ձերոյ կրկին ուրախութիւն · և անարգանաց ձերոց մեծութիւն ,, : Եսայ · ԿԱ · 6 :

Երեմիայ մարգարէին բերանովն ալ կ'ըսէ Աստուած ծուխերը բարեկարգող սուրբ քահանային :

"Դադարեսցէ ձայն քո ՚ի լալոյ , և աչք քո յարտասուաց , զի գոյ վարձք գործոց քոց ,, : Երեմ · ԼԱ · 16 :

Ահա ասանկ ծուխերուն հոգ տանող աշխատող , մըկրտող , ուսուցանող քահանային Փրկչին պիտի ըսէ Տէրն մեր Յիսուս :

"Աղէ՛ ծառայ՝ բարի և հաւատարիմ , որովհետև՝ ՚ի սակաւուդ հաւատարիմ ես , ՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ . մուտ յուրախութիւն Տեառն քո ,, : Մատթ · ԻԵ · 21 :

Նա ծուխերն ալ երբոր տեսնան քահանային վարքը և բարքը օրինաւոր , իրեն պաշտօնը անթերի կը կատարէ . աղքատը և մեծատունը միօրինակ կը հովուէ , կարգաւ ծուխերուն տուները կ'երթայ և կը բարեկարգէ և բարի խրատները կու տայ , ան ատեն ամէն մէկ ծուխ իրեն կարողութեանը չափ կ'սկսին քահանային տանը պակասութիւնը օրինաւոր հոգալու :

Երբոր քահանայ մը վերոյիշեալ գործքը չունենայ, միշտ գիշեր և ցերեկ իրեն մարմնաւոր կեցութիւնը հոգալով աղէն և անդին ցաթկոտէ, անիկայ միշտ անօթի մը-նալէն ետքը, Աստուծոյ և մարդկանց առջևն ալ ո՛չ քահանայութեան, և ո՛չ ալ մարդկութեան պատիւ պիտի ունենայ:

Աստուած ալ այդպիսի քահանային պիտի ըսէ զայն բանը. որ երբեմն կ'ըսէր Հրէից քահանայներուն:

"Զի դու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ. զի մի՛ եւս քահանայանայցես ինձ, և մոռացար զօրէնս քո, մոռացայց և ես զորդիսն քո,,: Ովսէայ. Դ. 6:

Նայինք Եզեկիէլ մարգարէն ի՛նչ կ'ըսէ:

"Եւ մի՛ մերձեսցին առ իս քահանայանալ ինձ, և մի՛ հասել յամենայն սրբութիւնս որդւոցն Իսրայէլի, և մի՛ յամենայն սրբութեան սրբութեանց իմոց.,, Եզեկ. ԽԴ. 18:

Երբոր քահանայ մը ծխերունմէն տարեկան և օրէնքի իրաւունքները կ'առնու և անոնց խնամք չի տանիր, տուներնին չերթար, կեցութիւննին չի հարցուներ, և ըստ կարելի կերպին աղքատներուն հոգ չի տանիր, և չի մխիթարեր, այդպիսեաց համար ալ ևս կ'ըսէ Աստուած.

"Ո՜վ հովիւք Իսրայէլի, միթէ՞ հովիւք զանձինս արածեն. ո՛չ հովիւք զխաշինս արածեն: Ահա զկաթն ուտէք, և զբրդովդ զգենուք, զպարարտն զենուք և զխաշինս իմ ո՛չ արածէք: Այսպէս ասէ Տէր Տէր. ահաւասիկ ես 'ի վերայ հովուացդ.,, և այլն: Եզեկ. ԼԴ. 2:

Որեւմն քահանայ մը միշտ Սիրաքի ըսած բանը միտքը պիտի պահէ, թէ "Յիշեա՛ զվախճան քո, և թո՛ղ զթշնամութիւնս.,,

Այն ժամանակ քահանայ մը պիտի խորհի իրեն վրայօք, ու մտածէ, թէ ես ի՛նչ բանի համար աշխարհէն հրաժարեցայ. և ժողովուրդը ինչո՞ւ համար ձեռքս կը համբուրէ. և ինչո՞ւ համար ինծի, օրհնեա՛ Տէր կ'ըսէ:

Եւս և ի՞նչ մտօք և ի՞նչ դիտաւորութեամբ և ի՞նչ հաւատով ժողովուրդը ինծի սուրբ Պատարագ մատուցանել կու տայ ու ետեւս կը կանգնի և կ'աղօթէ. ի՞նչ կը յուսայ ինձմէ. յաշխարհէն հրաժարեցայ, որ ճշմարտութիւնը քարոզելու կարողանամ, ժողովուրդը յետոյ կը համբուրէ, խոնարհութեանս ժամանակին տրուած Հոգւոյն սրբոյ շնորհացը ակն ունի. օրհնեա՜ Տէր կ'ըսէ, որպէս թէ օրհնէ զիս արժանի ըլլամ քեզնէ առածս շնորհքը վայելելու։ Սուրբ Պատարագը մատուցանել կու տայ, որ Աստուծոյ ու իրենց մէջ տեղը հաշտութեան միջնորդ ըլլամ, իրենց դիմաց աղօթեմ և խնդրեմ յԱստուծոյ թողութիւն մեղքերնուն. և երբեք ու ետեւս կանգնած զանիկայ կը յուսան առնելու: Ասպա ուրեմն Աստուած կ'ըսէ քեզի. հայեաց ’ի տեղ. և դուն ալ կարո՞ղ ես ըսելու, Պատրաստ է սիրտ իմ Աստուած: Սաղմ. ճէ. 1

Գանք հիմայ Պ.Խուրտիսեանի բարեկարգութեան վրայ խօսիլ, որն որ Տիգրանեան Մկրտիչ վարդապետը ըս-կսաւ աշխատութեամբ կանոնները գործադրել, և հակառակորդն ալ խափանելու և խանգարելու միջոցները ձեռք բերելու սկսնցաւ։

Վերջապէս յիշեալ վարդապետը հակառակորդին չարաշնար վարմունքէն և թունալի նետերէն զգուշութեամբ պաշտպանուելու ինքը զինքը. "Մի՛ կալ հակառակ չարին.„ Մատ. Ե. 39. ըսաւ, ձգեց գործքերը երեսի վրան. 30 ժամ հեռի գնաց սուրբ Յօհաննէս Վանքը Վանահօր քովը։

Եւ հակառակորդին թունալի և զազրալի գրութիւնները ցոյց տուաւ Վանահօր, և նոյն գրերը տակաւին կայ պահուած, ուզողը կրնայ տեսնալ յիշեալ Բաբունեայն մօտ։

Եւ Վանահայրը ուրիշ ալ հարկաւոր գործի մը ետեւէն յղել կամեցաւ յիշեալ Վարդապետը. վասն որոյ առաջարկեց ըսելով. "Ահա՛ վանիցս վերայ տասն հազար ղրուշ

տոկոսէք պարտք կայ Քրիստոնէից․ տարին 5000 ղուրուշ տոկոսը կ'առնուն մեզնէ Քրիստոնէքը․

“Մեր տեղէն յղեմ կամաւոր նուիրակ Պաղտատ և Պարսկաստան։ օգնութիւն մը խնդրելու, որով այս ծանր պարտքը վճարեսցեմք վանքը փրկեմ։„

Ո՜հ ինչ ծանր առաջարկութիւն, և ինչ վշտալի պաշտօն, որն որ՝ Միշեալ վարդապետին կը հրամայուի Պիրտիսեանի անտառախիտ գաղանաբնակ բարձր լեռներու սրտերէն, և քարաժայռներէն խորին ձորերու սրընթաց գետերու եզերքներէն, գաղաններու և գողերու վտանգաւոր ճիրաններէն անցնելով ճանապարհորդել գնալ Նինուէ, (Մուսուլ)։

Ու անկէց ալ անշէն անապատներէն (Չէօլ) և խորին համընթաց պղտոր տրտում մարդակուլ գետերէն անցընելով, և վանազան երկիւղալի արհաւիրանքով և ցաւալի վշտերով առանց դրամի, անծանօթ այնր կողմանց Միանահօր կոնդակով մը երթալ օգնութիւն խնդրել, արդարև մեծ տաժանելի գործ էր։

Իսկ Միշեալ վարդապետը ոչ մի ինչ ըսելով լռութեամբ ընդունեց առաջարկութիւնը և խոնարհութեամբ ըսաւ․ “Լաւ է հնազանդութիւն քան զզոհ ընտիր„։ Թագ․ ԺԵ․ 22։

Առաւ կոնդակը ելաւ ճամբայ, այդու բանիւ․ “Ի քեզ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան․„ Սաղ․ Հ․ 2։ “Եղիցի կամք քո։„ Մատ․ Զ․ 10։

Սկսեալ Մշոյ սուրբ Յօհաննէս Վանից մինչև Բաբիլոն (Պաղտատ) և Պարսկաստան Թուանշաններ երևելի քաղաքներու իրարմէ քանի ժամ հեռաւորութիւնը կը նշանակէն։

Մ՝շղ 47 ժամ Տիյարպէքիր. 18 ժամ Մ՝երտին. 69 ժամ Մ՝ուսուլ. 39 ժամ Ք՝արքուք. 51 ժամ Պաղտատ. 112 ժամ Ք՝իրմաշ. 26 ժամ Համատան. 74 ժամ Գ՝աւ-րիզ. 27 ժամ Խոյ. 72 ժամ Էրզըում։ 32 ժամ Մ՝ուշ սուրբ Յօհաննէս վանքը։

Ահա վերոյ քաղաքները 567 ժամ միշտ ճամբորդու-թիւն ընելով եկաւ սուրբ Յօհաննէս վանքը և տուաւ հաշիւները առաւ անդորրագիրը։ 1842ին։

Վանահայրը տեսնալով ատոր արդիւնաւոր հաւատար-մութիւնը, ուզեց որ Կիլիկիոյ վիճակն ալ յղէ. վասն ո-րոյ մէկ ամիս վանքը նստելէն ետքը, նոյն վանահայրը ա-ռաջարկեց յիշեալ վարդապետին երթալ Կիլիկիոյ վիճակը։

Ուստի տուաւ ևս կոնդակ, և գիր առ սրբազան Մ՝ի-քայէլ Կաթուղիկոսն, և գրաւ ճամբու և գնաց։

47 ժամ Տիյարպէքիր. 34 ժամ Ուրհա. 32 ժամ Ա՝նթապ. 15 ժամ Մ՝արաշ. 14 Կապան. 14 Հաճին. 8 Փաքայ. 21 ժամ Սիս. 18 ժամ Ատանա. 9 ժամ Թարսուս. 40 ժամ Նիկտա. 24 Գ՝այսէրի. 62 ժամ Եօզկատ. 36 ժամ Էնկիւրի. 47 ժամ Պօլի. 19 Ատա-փազար. 9 ժամ Իզնիմիտ. 92 ժամ Ք՝էօթահեա։ 18 ժամ Աֆիօն հիսար. 22 ժամ Ուշագ. 48 ժամ Իզմիր. 115 ժամ Իզմիրէն Պօլիս. 1844 Մ՝այիս 2։ Ահա 767 ժամ ճամբորդութիւն ըրաւ։ 567 ժամ Պաղտատ գնալուն, ըրաւ բոլորը 1374 ժամ։ Վերոյիշեալ քաղաքներէն 'ի զատ ուրիշ այլ և այլ քաղաքներ, և գիւղեր ալ գնաց շրջեցաւ, լման 2206 ժամ ճամբորդութիւն ըրաւ, ապա եկաւ Պօլիս։ Իսքիւտար իրեն բարեկամ Չիչէքճի պաշի Յարութիւն աղային տունը իջևանեցաւ, շատ մարդասիրութիւն ցոյց տուին յիշեալ վարդապետին. 1844 Մ՝այիս 20։

1844. Պօլսոյ նոր Պատրիարքը իր դրան, Մկրտիչ վարդապետը կ՚աշխատի կանոնները տպելու։

---

## ԳԼ. Դ

Նախ և յառաջ սկսաւ 1841 յամին գրած բարեկարգութեան կանոնները տպելու աշխատիլ, երբոր լսեց Մ՚շու Վէքիլը որն որ Վ՚էզիր խանը կը նստէր աշխատեցաւ և արգիլեց զանիկայ տպուելէն, և գրեց Մ՚ուշ սուրբ Կարապետ վանից միաբանից խմեցուց։

Իւ անոնց մէջէն ոմանքները կ՚սկսին Ներսէս վարդապետին ըսել, Ասիկայ մեր հայ բարեկարգութիւնը յետաձգելու պէտէր, չէ՞ ինք մեզմէն մէկէ հեռանալու ժամանակը։

Մ՚ենք բոլոր մեզմէններն ալ մէկէ անհնարին պէտք ըլլան մեր երեսէն. ամբողջ մեր մեր վանքերուն և թեմերուն մէջ տպուելու կարգը խառնէր։

Մ՚ենք ասկէց, և Տէյարդէքէրու վարդապետը անկէց. և վանահայրերուն ալ իր գրեն, թող անոնք ալ ջանք ընեն ուղղութեամբ և ժողովրդոց ալէն հանելու։

Պատասխանեց Ներսէս վարդապետը. Թող ուղղութեամբ ջայ մեզ. ասիկայ մերիններ խորհեցէք բաներնին է. բայց են այնպէս գիտեմ որ, գրած կանոնները ինչ որ հաստատուի՝ օգտակար բան է. ինչ են ալ իր մէկայեմ որ պէտք կարենայ հաստատել. աս ձայն անհոգ եղէք։

Մ՚տածէ ով բարեսիրտ ընթերցող և կանոնները լաւ մը կարդա աչքէ անցուր. և ատոնց ալ ըրած խորհրդեան ալ միտք դիր լսէ, մինն կ՚աշխատի կեցուցանել, միւսը կը ջանայ կորուսանել. այս եղանակաւ ազգին բարիքը միշտ կորսուած է։

Նայինք Մ՚կրտիչ վարդապետը ինչ պիտի ընէ Պօլսոյ մէջ։ Ա՚ն ատեն Ա՚ստուածատուր Պատրիարքը իրեն պատրի-

**1845 · Մկրտիչ Վարդապետը Տիգրանակերտ կուգայ · Քիւրտիստան կ'ելլայ ։**

---

արքունեան հրաժարականը տուած էր · ազգը պատրիարքի մը ընտրութեան զբաղած էր · որ և ընտրեցին և բերին նստուցին Իզմիրու Առաջնորդ Տ· Մատթէոս արքեպիսկոպոս սրբազանը Պատրիարք ։ 1844 · Յունիս 10 · օրն Երկուշաբթի ։

Ուստի Մկրտիչ վարդապետը սկսաւ Քիւրտիստանի Հայոց տգէտ զաւակներուն խնամք տանիլ ապագայ վիճակնին լուսնելու սկզբանցը ձեռք զարնել ։

Նոր սրբազան Պատրիարքէն Քիւրտիստանու մէջ վարժարան հաստատելու կոնդակ · 8000 ղուրուշի վարժարանի համար գիրք Արապեան Գալուստ աղայէն · և այլ տեղէ · և Քիւրտիստանու Քրիստոնէից Քրիստոնէից հարստահարութիւններ չըլլալու համար չորս տեսակ ֆէրմաններ հանել տուաւ · բոլոր ծախսերը ընելով · 1844 և Օգոս · 1

Նա ատ միջոցին Քիւրտիստանցի Հայնի նահանգէն · Ստեփան Շմաւոնեան 16 տարեկան տղայն խնդիր մը տըւաւ Մատթէոս պատրիարքին · որ փոքր Բեշէբէ մը շնորհ ընէ · երթայ Իզմիրու ճեմարանը , մինչև անդամ աւելածու ըլլայ · իրեն սրտի փափագը տեղը բերելով ուսմունք սորվի ։

Սրբազանը հերքեց չտուաւ · աչա Մկրտիչ վարդապետը Քիւրտիսթան կ'երթայ վարժարան հաստատելու հետը գնա , ան տեղ կրնաս դուն սորվիլ տղայն շատ լացաւ ողբայ · բայց հնար չեղև · Մկրտիչ վարդապետին հետ ընկերացաւ , ելան Իզնիմիտ · անկէց Ենկիւրի , Հալէպ և Ուրհա · լման 270 ժամ ճամբորդութիւն ընելով եկաւ Տիյարպէքիր · 1844 Նոյեմբեր 2 · երեք ամիս ձմեռը Տիյարպէքիր նստաւ Սասընցի Գօմք գիւղի Տ · Խաչատուրը ճամբեց վանօրայս և իմացուց ազգօգուտ կանոնները , ոմանք բարեհաճեցան և ոմանք ալ չհաճեցան · բայց 1845 Մարտ ամսոյն , հիքը ե-

1845 · Մկրտիչ վարդապետ Լճէ և Հովսէփ վարժապետ Աշթա-նայ :

---

ըստ Տիյարպէքիրու 12 ժամ դէպի Հիւսիս եկաւ Հէյնի խասաբայն . ատ տեղը 12 քահանայ կար տունք 200 · իշխանապետն էր Մահտեսի Խաչատուրը , Զրաղենց Օհաննէսը , և այլն : Առաջ քահանայն էր Տ · Մովսէս . Տ · Պօղոս և Տ · Պետրոս և այլն . եկեղ · 1 · խասաբայէն դուրս շինած :

Բացաւ վարժարան և դրաւ նոր վարժապետ տիրացու Եղիան · և վարժարանին հարկաւոր եղած գրքերը տուաւ , 1846 Մարտի 18 ·

Անկէ 7 ժամ դէպի Արեւելք եկաւ Լճէ խասաբայն՝ ունի 2 քահանայ · Տ · Յովակիմ և Տ · Կարապետ . տունք Հայոց 250 · իշխանապետներ Պէլէլէ օղլու Յօհան աղայն Թումաս աղայն · որոց որդիքը՝ Ալէքսան և Հանուշ այժմ կան :

Բացաւ նոր վարժարան , և դրաւ վարժապետ Յամթեցի Զօ- օղլու տիրացու Յօհաննէսը , և Բալուեցի Արապը Հոգաբարձու կարգեց , և տուաւ գրքեր և կարգադրութիւն ալ ըրաւ սակաւ ինչ :

Եղաւ անկէ 8 ժամ դէպի Հարաւ՝ եկաւ Հազրօ խասաբայն · ունի 1 եկեղեցի 6 քահանայ · տունք Հայոց 200 · Առաջ քահանայն Տ · Կարապետ . իշխանապետներ մահտեսի Աստուածատուր Մարտիրոսեան . և Թիւրպէնտեան մահտեսի Մկրտիչ · որոյ որդիքն այժմ իշխան են . մահտեսի Թովմաս և մահտեսի Կիրակոս . և այլն :

Անկէ 10 բոպէ հեռի Թովմայ առաքելոյ վանից մէկ սենեակը յատկացոյց վարժարան , և դրաւ վարժապետ Յամթեցի գիտնական Պէպէճեան Եղմոշ պատուելին . 150 ղուրուշ 1 ամսականը կանխիկ տալով : Եւ տուաւ հարկաւոր գրեանք յանձնեց Մանեցի Կարապետ վարդապետին ,

**1845** · Մկրտիչ Վարդապետը Երկու Վիճակը Նորոգեց Բարեկարգեց, Բեշիր և Սեւերակն ։

---

և բարեկարգութեան կանոններն ալ քարոզեց բոլոր հասարակութեան ։

Անկէ 6 ժամ դէպի Արեւելք եկաւ Միխիլան Նահանգը, որ բնաւ Հայերէն չեն գիտեր, և ոչ ալ եկեղեցի ունին. անտէր և անխնամ ժողովուրդ մը. աս տեղս չկրցաւ վարժարան բանալ զանազան դժուարին պատճառներու համար ։

Սոր համար է որ հասարակօրէն կ'ըսեն.

Պաղ ջուրը կուգայ մէջ Սևերակայ,
Դեղ Քրքում դղան է սև սարանայ.
Ա՛ռ բարդ բամպակը շատով ձիրթե,
Կ'ուզէ ՀԱՅ մեռայ, կ'ուզէ Թրքանայ ։

Սոր պէս նահանգ մ'ալ կայ, որուն անունը Բեշար կ'ըսուի. ունի 200 տուն Հայոց ժողովուրդ. ոչ եկեղեցի և ոչ քահանայ ։

Մշու սուրբ Յոհաննէս վանից հին վանահայրերը՝ աս ժողովուրդը տարեկան 60 ղուրուշով կը վաճառեն Ճնու խաւաղային մէջ Տ. Յովհաննէսի Օվօյին որ աս Օվօն ալ տարին երկու անգամ քահանայ մը հետը առնելով գաւռունը կ'երթայ, առոնց մէջը տարեկան երախաները մկրտել կուտայ, ամուսնացեալները կը պսակէ, ննջեցեալներու թաղման կարգը կը կատարէ, և ինչքան որ իրեն զօրութիւնը կը ներգործէ բունի՝ իւղ, ոչխար, կողոպուտ, դրամ, կը ժողովէ, կ'առնու կուգայ. և խեղճ քահանային ալ շատ անգամ բան մը չի տար. միայն երբեմն քիչ մը ուտելիք կուտայ. որ մինչև ցայսօր աս գէշութիւնը կը շարունակուի ։

Այս չար սովորութիւնը Մկրտիչ վարդապետը արգիլելու շատ աշխատեցաւ չկարաց. որովհետև շարունակ Օփիրտիսթան չեն թողուր մնալ հանգիստ, որ ամէն բան կար-

---

գաւ շինկուի:

Ինչ և իցէ առ երկու վիճակին խնամք չկրցաւ տանէր. նլաւ Հաղըուայ 30 ժամ դէպի Արևելք Ալշերտ քաղաքը:

Ախնակ առ տեղը Պարսկերէն և Արաբերէն կըխօսին, Հայերէն ոչ. և Հայոց տունք 200. եկեղեցի 1. քահանայք 7. աւագ Տ. Մինաս, իշխանապետ դերձակ մահտեսի Կարապետ, Պօղոս, և այլն:

Բայց վարժարան, դրաւ մահտեսի Աստուածատուրը վարժապետ. տուաւ գրքեր, կարդաց կանոնները, ընդունեցին սիրով. ելաւ անկէ 14 ժամ դէպի Հարաւ եկաւ Բ.-րնտուան խաղաղ, տունք 100. եկեղեցի 1. քահանայք 7. Տ. Մուրատ, և այլն. բայց վարժարան, դրաւ վարժապետ Ոսկերիչ Ստեփանը, որ գիտէր Հայերէն, Թուրքերէն Արաբերէն, գրել և կարդալ. իշխանապետներ մահտեսի Խաչուկը տուաւ գրքեր և հաստատեց կանոններ. և այլն:

Այս նահանգին մէջն է, Եզիտի ըսուած աղանդաւորները, որն որ՝ սատանային գէշ չեն ըսեր: Կ'ասածեն թէ, Աստուած ժամանակաւոր նեղեց քաղցեց տանոյ, բայց ժամանակ գեղը քոյ որ, անոնց շնորհ ընելով հաշտուի. զման որոյ փէշ ընել արժան չէ, Մուշէ Թովմ'ոյէն. այսինքն՝ Կոստանդին Հրեշտակեան, այն է ստանայն:

Տակաւին Մկրտիչ վարդապետը ազգասիրական ոգւով վառեալ կըշարունակէր անխոնջ աշխատութեամբ, Պիւր-տիւմանի վանօրայքը և անոնց վիճակին ժողովուրդը կարգի և կանոնի ներքև դնելու, և վարժարանները հաստատելու, Մշու և Տիյարպէքիրու Առաջնորդ հայրերը սկսան իրենց պատառաքաղներուն հետ խորհիլ առ բանին առջևը առնելու, ինչպէս որ յառաջմանէ մոքերնուն մէջը կար: Տե-ղեկու. 18. 21:

**1845․ Պօլիս եկաւ Մկրտիչ Վարդապետը երկրորդ անգամն է ՚ի Պօ- լիս․ Բանտ Գերապատիւ Մեսրոպ Ամիրայի ։**

---

Այսն որոյ անհրաժեշտ գանգատ մը գրած Մատթէոս սրբազան Պատրիարքին յղած են. Որպէս թէ Մկրտիչ Վարդապետը Թէոդորոսեանը կառավարութեան կորուսանելու ունի, և մանաւանդ ինքը հինգ տարուան յետին նոր ընծայ Յաբելեալ է, պէտք է վրանին մէջ նստիլ կարգապահութեանը ընել, և անոր հնազանդութեան պաշտօնը մեք կորսնցեմք ընել, և հեռանալ ալ այսինքն՝ վարդապետ բանալ, կանոնները կարգի դնել, և այլն։

Ո՞Հ տակաւին կը դնեն և կը հաստատեն, շուտ և անգղ: Մատթէոս սրբազան Պատրիարքը աս գիրը առածին պէս իսկոյն գիր մը կը յղէ Տիգրանակերտու Առաջնորդին։ Թէ Մկրտիչ Վարդապետին դարձ կոնտակ յետսէն առնէք, ընթ- ըր վանքը յղէք։

Երբոր Առընտղանու 22 ժամ հեռի եկաւ Խոխան Նահանգին մէջ որ վարժարանը հաստատէ, ան տեղը ստոյգ աղբիւրներէն՝ վերոյիշեալ լուրը առնելով, իսկոյն՝ ալ ոչ Մուշ և ոչ ալ Տիգրանակերտ գնաց․ և ոչ ալ գործը շարունակելուն նայեցաւ․ ձգեց գործերը երեսին վրայ, 138 ժամ հեռի եկաւ Պօլիս, 1845․ Նոյեմբեր 20։ Աս երկրորդ գալն է Պօլիս։

Ճամբորդութիւն, 270 ժամ. Պօլիսէն Էնկիւրի, Հալէպ, և այլ քաղաքներէն անցնելով եկաւ Տիգրանակերտ, և Տիգրանակերտէն 93 ժամ ․Խիւրտիսթան շրջեցաւ եղաւ 363 ժամ․ 138 ժամ ալ Պօլիս գալը, եղաւ 501 ժամ. որ միշտ քառակի վրայ նստելով ճամբորդութիւն ըրեր։

Երբ ժամանակ ներկայացաւ սրբազան Պատրիարքին, զարմացաւ Պատրիարքը ըսելով, «Ե՞րբ եկեր, և ինչո՞ւ եկար․ պատասխանեց վարդապետը. երեկուան օրը եկայ, և պէտք բոլորն կերկէն ժողովներուն առջև. Թէ էջն յանցանք ինչ է որ՝ առնէս հրամանքիդ կը ղրկուի Տիգրանակերտու Առաջնորդին, որ

1846 · [illegible]

---

[illegible]

[illegible]

Պատասխանեց Արբաշանը թէ՝ [illegible] Երբոր ժողովքին ներկայացաւ, գլխուն եկածը պատմեց։ Ու ատեն ժողովքին մէջ Գերապատիւ Միսաք ամիրան աս առաջարկութիւնը ըրաւ,

[illegible]

[illegible]

Շատ զրոյցքներէն ետքը, երեք ամիս Պօլիս կեցաւ յիշեալ վարդապետը, ա՛լ չէր ուզեր Բիւրտիւխթան երթալ. քանի որ՝ յիշեալ եկեղեցականներու և անոնց թիկնապահներու․ Բիւրտիւխթանու բարեկարգութիւնը հաճելի բան մը չէր երևնար աչուընուն։

## 1846. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԿԸ ԲՌՆԵՆ ԲԱՆՏԸ ԿԸ ԴՆԵՆ։

Վասն որոյ սկսան յորդորել և համոզել, միանգամ սուրբ Յովհաննէսու և Թիւրտսեանու վերոյ վանօրէից յատուկ Առաջնորդ. անկախ յումեքէ, երթալ բարեկարգել կ'ստիպէին։

Վերջապէս տեսաւ չըլլար հրաժարուիլը. քանի որ ժողովքը հաստատ կը խոստանայ պաշտպան կենալ իրեն համար ատ վանօրէից բարեկարգութիւնը հաստատելու համար, յանձնառու եղաւ երթալու։

Ուստի առաւ կոնդակը եկաւ Տրապիզոն 1846. և 70 ժամ հեռի եկաւ Էրզրում Մարտի 1. և իջաւ Առաջնորդարանը, որ Նիփրեմ եպիսկոպոսը հրաժարեալ գնացած էր, անոր տեղը Չէերէնցի Առաքել վարդապետը փոխանորդ էր, և Մշոյ Օսքար վարդապետն ալ քանի վարդապետներով Էրզրում եկած հիւրալար նստած էր։

Ատ միջոցին Մկրտիչ վարդապետը մեծ պահոց համար Քարոզիչ վար դրին. որովհետև ճանապարհներն ալ շատ ձիւն էր Մուշ երթալը շատ դժուարին էր. վասն որոյ ինքն ալ կեցաւ։

Աս անգամ բարեկարգութիւնը չբարեհաճողները հաւատացին որ յիշեալ վարդապետը պիտի հաստատէ և յառաջ ալ պիտի երթայ գործը, թէ որ արդէն արգելք մը չդրուինէ, վասն որոյ խորհեցան արգելք մը տալու որ ատ եղանակաւ տուին արգելք մը շատ վնասներով։

Երբոր սուրբ Զատկին Նոր կիւրակէի Երկուշաբթին եկաւ, յիշեալ վարդապետը իրեն քարոզչութեան պաշտօնը կատարեալ լրացուցած. Կարնեցոց կատարեալ շնորհակալութեամբ ելաւ Կարնոյ. 14 ժամ հեռի. եկաւ Խնուզ Աջօղ գիւղը իջաւ, որ անկէ Մուշ կ'երթար։

Երզրումէն քահանայ մը, երկուս ալ աշխարհական, բայց աշխարհականնաի մէկը իբրև բղեշխի բնաւորի հագուս-

1846. [illegible] :

տով. նկան Արօզ գիւղին մէջ լռնեցին վարդապետը, և
առին տարին Չէլլիրմէն Սուքջյ [illegible] տանը մէջ բացին
[illegible] սկսան բան որոնել. [illegible] մէջ գտան մէկ աւե-
տարան գիրը Յունարէն խօսքը Թիւրքերէն և Տօսքանեան
Քերականութիւն մը :

Նա երկու կտոր գրքերը առին սկսան բոլոր գիւղացւոց
ցուցընել. "[illegible] [illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Որ տոհկայ Օձաքար հայրսուրբի Նռաջնորդական դէ-
[illegible] էր. ոսկեղօծ գրով գրուած. երբոր տգէտ գիւղա-
ցիք տեսան, զարմացան և զարհուրեցան. սկսան եա քաշ-
ուիլ վարդապետին տիրութիւն ընելէն. ուստի մնաց վար-
դապետը առոնց ձեռքը, սկսան ուզածնուն պէս ընել :

Անեցած գրամը յափշտակելէն ետքը, գանելով կա-
ռափնատելով բերին Նուագի Օվէի տանը ախոռին երկու
գրանը ներս բանտարկեցին, և եղան գնացին շրջակայ Հա-
յերու գիւղերը քարոզեցին, թէ [illegible] և
[illegible] : [illegible] Պա-
[illegible]. [illegible] [illegible],
և [illegible] :

Մինչև առ [illegible] գրեցին մօհրեցին և Պօլիս յղե-
ցին, ըման 20 օր բանտին մէջ մնաց զանազան նեղութիւն-
ներ քաշելով. և ապա եկան հանեցին բանտէն, ձամբայէն
դուրս լեռներու և ձորերու մէջէն առին տարին Մշու սուրբ
Կարապետ վանքը 18 ժամ հեռի :

Տակաւին 2 ժամ մնացած էր որ սուրբ Կարապետու
վանքին հասնելու. անտեղը խորանաբնակ, ([illegible]) քուր-
տերը և անոնց կանայքը. տեսնալով որ մէկը բռնած կը
տանին ձամբայէն դուրս, եկան որ խմանան բռնուողը ով

է, երբոր տեսան և ճանչցան, իսկոյն բռնութեամբ վարդապետը Հայ բռնաւորներու ձեռքէն ազատեցին, և առին տարին Մուշ. Շէրէֆ պէյին յանձնեցին:

Շէրէֆ պէյը շուտ մը եղելութիւնը գրեց իմացուց Էրզրում Հայոց Առաջնորդարանին, և անկէ Գերապատիւ Մուրատեան Հաճի Կարապետ Աղայն գրած էր գիր մը Շէրէֆ պէյին թէ վարդապետը ձեռամբ բերէ Էրզրում, քննեն և ճանչնան այդ աւազակութիւնը գործողները որո՞նք են:

Վարդապետին ալ նոյն Գերապատիւ Աղայն յատուկ գրած էր. թէ Մկրտիչ վարդապետ այս ցաւերը որ քու գլխուդ եկած է, մեզ տեղեկութիւն տուր, շուտով եկուր Էրզրում, որ ճանաչեմ գործին իսկութիւնը ուրկէ՞ց է:

Այս Շէրէֆ պէյը հիմա Գառնի—էլէման կըկենայ և Մուրատեան Գերապատիւ Հաճի Կարապետ աղայն ալ Գառնեցիներէն է տոհմը, և սեննակը Մեծ Նոր—խանը, թէ 8. ուղղը կրնայ ճշմարտութիւնը անկէց իմանալ:

Դարձեալ 32 ժամ հեռի Մուշ եկաւ Էրզրում, (Կեօլի) ըրին. մէկ յանցանք մը քովը չգտնուեցաւ, վասն որոյ ատ չարութիւնը ընող քահանային փիլօնը առին, և պատճառ եղողին ալ մեղադրեցին, և այլն և այլն և այլն:

Այսպէս համառօտ դատը լմնցուցին, բայց Մկրտիչ վարդապետը հրաժարեցաւ Մուշ երթալէն ուզեց որ սուրբ Էջմիածին երթայ առ Սրբազան Ներսէս Կաթուղիկոսը. և անտեղը բողոքէ արդարութեամբ դատը խնդրել. բայց Քէօրքճի պաշէ Հաճի Յակոբ աղայն՝ մէջ մտնալով թոյլ չըտուին. ինչ ըրին՝ ըրին. կերպով մը հաշտեցուցին. դարձեալ Մուշ ձգեցին, իրեն պաշտօնը գլուխ տանելու:

Երկու օր յառաջ Օսքար վարդապետը գնաց Մուշ. ետեւէն Մկրտիչ վարդապետն ալ գնաց 32 ժամ հեռի Մուշ. և կը պատրաստուէր որ երթայ սուրբ Յօհաննէս

## 1846. Մուշու ճանապարհին մէջ կը ծեծուի վարդապետը:

վանքը 1841 յամին գրած կանոնները կարգի դնելու,

Յանկարծ 2 քուրդ վրան պաշապան դրուեցաւ, որպէս թէ միւս օրը կապանօք սուրբ Կարապետու վանքը պիտի տանին բանտարկել. իմացաւ ապագայ վտանգը ծանր փնասակար պիտի ըլլայ, վասն որոյ գտաւ իրեն գաղտնի ընկեր և ուղղեցոյց Փակցորու Նշլօցի Սրէն:

Նորբոր գիշերը ընդմիջեցաւ, և ամէն մարդ իրեն յանկողնի մէջ քաղցր քնով կը հանգչէր և կը քնանար, ելաւ առաւ Սրէն հետը 4 ժամ Մշոյ հեռի, բարձր անտառախիտ խորին լեռներուն սրտին մէջ եկաւ նստաւ, և կ'սպասէր մինչ բարի լուր մը առնելու:

Ո՜հ, ի՜նչ զարհուրելի տեսարան մը կը ներկայանար այն թանձր խաւարին աչարկու կէս գիշերուան լռութիւնը անտառախիտ ծառերուն մէջ յիշեալ վարդապետին աչքերուն առջև. երբ տրտում նստած կը հոգար ազգին ապագայ ողորմելի տգիտութեան վիճակը:

Նորբոր գիշերը մերկացաւ խաւարը լուր հասուցին իրեն. Ահա՛ բարեկամներդ բռնեցին բանտարկեցին, որոց երեւելին էր Մկրտչեան Մահտեսի Պօղոսը, և Էրզրումցի Արթին տանը շատ գրքեր լուացին ընտանիքներուն նեղութիւն կուտան. և շատ անօթի քիւրտերուն ալ դրամ խոստացան որ շուտով գտնեն և բռնեն տանին բանտարկելու:

Նախկայ լսելուն պէս վարդապետը ըսաւ. շատ լաւ է որ ես մինակ բռնուիմ բանտը նստիլ, քան թէ ինծի համար բարեկամներս բանտարկուին: Ելաւ իջաւ լեռնէն, և մատնեց զինքը փնտռող Թրքերուն ձեռքը, և առին տարին զինքը Մուշ, Շէրիֆ Պէյին քով:

Շէրիֆ Պէյը ըսաւ. ''Ինչո՞ւ փողոցներուն մէջ բանեցուեն մեր մանուկները. հասցնել պէտք է ձեզ մանաստաններու ալ փոխել:

## 1846, Մկրտիչ Վարդապետը Տիգրանակերտ կուգայ:

Ահա խնուս նահանգին մէջ Չէվիրմէ գիւղը Մուշ Օվէի ախոռին մէջ բանտարկուած ատենը գիւղօրէիցմէ Մահ-
մէր շինեցին քահանայն և հետը եղողները, որ խրկեցին Պօ-
լիս · Թէ Մկրտիչ Վարդապետը Բրոթէսթանթ է, [illegible] · [illegible] : Նոյն գրին պատասխանը Մատթէոս Պատրիարքը գրած յղած էր · [illegible], [illegible] :

Աս գիրը իրենց մեծ զօրութիւն մը ըլլալով՝ սկսան ու-
ղածնուն պէս ցաւեր հասցունել վարդապետին, ինչ և լսէ՝ ո-
ղորմելի տեսարաններով վարդապետը տարին սուրբ Կարապետ
վանքը · սենեակի մը մէջ բանտարկեցին. Ճշմարտութեան ան-
գութ Յարութիւն վարդապետն ալ պահապան դրին վրան:

Հոն 80 օր աս բանտին մէջ մնալով՝ Բերախօսթանցի
Հայերուն համար սուրբ Աւետարանը թարգմանեց Հայե-
րէն Քիւրտ լեզու. որ Հայերէն չգիտցողներն ալ իմանան
սուրբ Աւետարանին խօսքերը:

80 օրը լմննալէն ետքը, Քէօրթօղլունէն և Տէյարպէքիրէն
բարեկամները, խուռն բազմութեամբ եկան, վարդապետը
քանութեամբ ազատեցին և տարին տարին Տէյարպէքիր 42 ժամ
հեռի:

Յակոբ եպիսկոպոսը ան ատեն Տէյարպէքիրէն հրաժար-
ուած սուրբ Էջմիածին գնացած միաբան եղած էր, վասն
որոյ յիշեալ վարդապետը կտոր մը գլուխը խաղաղ նստեցաւ
առանց հակառակորդի և խռովութեանց:

Ի՞նչ անմտութիւն է աս դէպքութիւնը ընողներուն, որ
վարդապետին ազգին համար ըրած աշխատութիւնը կորսն-
ցունելէն ետքը, կուզեն զինքն ալ կորսնցունել զանազան
զրպարտութիւններով:

Զրպարտեցին թէ՝ Բրոթէսթանթ եղած է, թէ որ Բրո-
թէսթանթ ըլլար, արդեօք կը համարձակէին փոքր չիւղ մը

1846. Յատուն 2 քահանայի և 7 աշխարհականի դատը կը վարուէր Միրզէն Վարդապետը:

---

նետելու իրեն . չէ՞ որ ճշմարիտ Հայ և ճշմարիտ ազգասէր ըլլալուն համար կը տանէր ատ նեղութիւններուն , և մինչև յայսօր կը տանի ալ . ըսելով՝ Եւ ՚ի տանջանս պատրաստ եմ Սաղմ. ԼԷ. 18. Եւ "ի դառն ժերեկոյ ինչ Աստուածեցայ Զատկի. ԺԳ. 6. Ամէն լեզուի ամենեցուն այլ լուսաւորէն պատուոյս և ամենայն բանադրութեան և լուսաւորութեան նոյն խորհրդածելոցն.,, Գաղ. Գ. 44.

Ասոն զի՝ "Ի տեղ Տէր յաղագս մի՞ ամաչեցէք յանդիման,, Սաղմ. Հ. "Որ տանէ զչարչարութիւնս վասն այն լուսոյ, ոչ յայտնի լեզէն գործ նոցա ընդ Աստուծոյ գործեցան.,, Եբր. Գ. 21.

Ահա Թորադիզոնէն Կարին, Կարնոյ Մուշ. դարձեալ Մշոյ Կարին, և Կարնոյ Մուշ և Տիգրանակերտ ժամք 208—501 ժամ ալ՝ ըստ. 709 ժամք : Կշռեցէ՛ հանճարութիւն:

Ա. Բարեկարութիւն. Ահա միջոցին տեսաւ Աստուծ դատոր Տ. Խաչատուր քահանայն, որ համի ժանտ մորթով հետ դատ կըվարէր 2 քահանայի և 7 աշխարհականի սպանման և չորս հարիւր հազար ղրուշի ապրանք յափշտակած ըլլալուն վրայօք:

Այս չարագործ Քրթու կողմնապահները արգելք կը լինէին քահանային դատը վաստըկելուն . ատ բանը տեսնելով յիշեալ վարդապետը , աղերսանօք յիշեալ քահանային ընկերացաւ անոր հետ և դատը վաստըկեցաւ քահանայն :

Արդարադատ Օսմանեան Տէրութիւնը հաստատեց արդար դատաստանաւ ոճրագործութիւնը յիշեալ Քրթուն վրայ , եւ մահապարտներու բանտին մէջ բանտարկեց զինքը և եղելութիւնը գրուեցաւ Բարձրագոյն դրան ՚ի Պօլիս :

Յիշեալ վարդապետը սկսաւ գրել իրեն գլուխը եկած ցաւերը Պօլիս , և կ՚սպասէր պատասխանւոյն : ( Բարեկարութիւն . Բ . )

1847ին՝ Մասուն երկրին մէջ Պէտ աղայ Քերդը , ուրուհետև ապստամբ ըլլալով՝ շատ տարիներով արքունի հար-

1847 · Մկրտէւ Վարդապետը Պոլսոյ ազգն կը բանէ կը բերէ Յա- ձեր ։

---

կը արգիլուած էր Տիգրանակերտու արքունի սնտուկին գալու։

Նոր համար չորս թնդանօթ և շատ զօրք պատրաստուե- ցան՝ որ պիտի երթային Սասուն գաւառին մէջ և ճանա- պարհին վրան, թէ Քրիստոնեայ, և թէ Մահմետական խեղճ ազգաները պիտի վնասուին, երբոր զօրքերը քալէին ան կողմերը ։

Նոցա ազատութեան համար յիշեալ վարդապետը՝ Խա- չերտոէն փաշային հետ խորհրդակցելով, որպէս թէ զօրքերը չերթալէն յառաջ անգամ մը ինքը և փաշային մէկ մարդը երթան ապստամբին քով. կ՚ըլլայ որ ապստամբը համոզելով բերեն Տիգրանակերտ ։

Նա բանին զօրապետ Սեյտար Էֆէնտի Լեվէր փաշայն, և Խայերտոէն փաշայն բարեհաճելով, տեղեւ Մէոտէրէւ Մէհմետ ղեալ գրին վարդապետին հետ, ելաւ 38 ժամ հեռի դէպի Մուշ եկաւ Սասուն, Սատին Նուաքելոյ վանքը իջաւ ։ Նա տեղեւ Մէոտէրէն վանքէն 6 ժամ հեռի գիւղին մէջ թողուց. չըլլի որ յանկարծ ապստամբներէն վնասուի ։

Վանքին մէջ Կիրակոս վարդապետը Պոլսոյ ազգային մար- դը ըլլալով, զանիկայ յղեց Պոլսոյ ազգին քով։ Թէ Աղճէ կողմն վարդապետը եկած է. կողմն որ հետը տեսաքին մը ը- նէ. ինչ հրամանը կը ըլնէ. ինքը գոյ ըլլա. նա տան կոտա- ւանքը։

Նոյնիկայ երթալուն պէս Պոլսոյ ազգն վարդապետի բա- րեը ընդունելով, ելաւ եկաւ վանքը, քսան զոյգ քաջ ըս- պառազինեալ հաստաբազուկ, և երկարահասակ այր թիկնա- պահներով. որոց ահէն մարդ կըսարսափէր ։ Երկու ժամու չափ տեսութիւն ընելէն ետքը Պոլսոյ ազգն ըսաւ վարդա- պետին. Ահա ես հեծայ կ՚երթամ. ես գալը և ըէգալը փաշային քով վարդապետ ժամ երկրային եկար նաւալէ ըսաւ. ըսինք՝

## 1847· [illegible]

[illegible]

Մ՚իւս օրն երեկոյին ժամ 12ին ելաւ չորս ժամ հեռի վանքէն, իջաւ խորին անտառախիտ ձորերուն մէջ. մինչև հասաւ գետին եզերքը· ուր սրընթաց գետ մը սարսափելի կը վազէր։

Գիշերը ընդմիջեցաւ և թանձր խաւարը գիտես թէ կը ծանրանար վըանին, երկինքը իրեն աստղերով փոքր բոլորակ մը կ՚երևէր ձորին այնքան խորութիւնէն։

Սաստիկ լռութիւն մը կը տիրէր, բայց երբեմնակի ձորերուն մէջէն այլանդակ զարհուրելի ձայներ կը հնչուէր, որ մարդուս սիրտը և մարմինը կը սարսափեցնէր։

Ու երկիւղալի փտանգաւոր գազանաբնակ ձորերուն մէջ կէս գիշեր ժամանակին, սրընթաց գետին եզերքին ծառի մը ներքև կայնած կ՚աղօթէր յիշեալ վարդապետը. և կ՚ըսէր· "[illegible]

Յանկարծ ոտնաձայն մը եկաւ, և քիչ ատեն չանցաւ երկու հրացանի ձայն ալ եկաւ հեռուէն· վարդապետին հետ եղող փաշային երկու [illegible], յերկիւղէն բըռնուած դողալով եկան վարդապետին քով, ըսին իրեն. "[illegible]"։

Վարդապետը աղօթքը լմնցունելէն ետքը ըսաւ ատոնց. "[illegible]"։

[illegible] · 19·

1847 · [illegible] Մկրտիչ Վար-դապետը։

---

[illegible]

" [illegible]
[illegible] · 10։

Տակաւին սա սարսափելի ձորին մէջ կանգնած՝ մխիթարական և քաջալերական բանիւ կը զօրացունէր հետը եղողները, մէյմ'ալ տեսան որ բարձր լեռներու գլխէն ոտաց ձայներ և դղրդումներ սկսաւ գալ:

Կէսգիշերուան ժամ էր 8 · [illegible] եկաւ քսան զոյգ քաջ թիկնապահներովը · մինակ [illegible] անուն տղան հետը բերած է թէ՝ իմ տեղս տղայս թող գայ , ես չեմ գար [illegible] քով:

Ինչ և իցէ տղայն առին եկան վանքը · յղեցին [illegible] քով · և Կիրակոս վարդապետը դարձեալ յղեց [illegible] քով յորդորելու և համոզելու , ինչ և իցէ լման 40 օր աշխատեցաւ , կերպով մը բռնեց [illegible] և անոր հետն ալ անոր պէս վեց [illegible] ալ , առին բերին Տիգրանակերտ [illegible] յանձնեցին :

Ասո ըրած ծառայութեան համար , [illegible] գրեցին Բարձրագոյն դրան իմաց տուին · երբոր Բարձրագոյն դրանէն կը հարցունէր Պատրիարքարանին : " Թէ [illegible]

1847 Մինչեւ Հոկտեմբեր Գ. ամսոյ Պոլիս գալը Սամսոնոյ Բարերարութիւն, և Բանտ. Սուրբ Փրկիչ:

---

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ

Ահա վերոյիշեալ վարդապետի աշխատութեանց մէջ մէկ քանի աղէկութիւններ կը տեսնուի, Ա. Թագաւորական գործերը աշխատութենէ ազատուեցան, Բ. ըլլալիք ծախքերը տեղը մնայ, Գ. աղքատները ապագայ նեղութիւններէն պրծան. Դ. երկու կողմէն վիճաբանութիւն և մրմունջքն ալ պատ մը-նացին, Ե. ողորմութիւն ալ ընկերներուն վերցուեցան. առանց մէկու մը վնաս գալու. Զ. շատ տարիներէն արգիլուած թագաւորական հարկերը բերուեցան արքունի գանձարանը գրուեցան:

Տէրութիւնը կը հարցունէ այգպիսի աշխատողը, որուն աշխատութեան փոխարէնը վճարելու. պատրիարքարանէն ալ նախանձու կը պատասխանուի թէ՝ « Արդէն աշխատաւոր վարդապետ մը չունինք »:

1847. Հոկտ՛ 10ին բաւական ժամանակ Տիգրանակերտ մնալով՝ վերջապէս պատրիարքարանէն արժանաւոր գրերուն պատասխան մը չառնելուն համար, ստիպուեցաւ դարձեալ Պոլիս երթալու. թէ Մուշ և թէ Խնուս գլուխը եկած ցաւերուն համար: Ահաւ բազմակնիք վկայական Մուհուր-ները 140 ժամ հեռի եկաւ Սամսոնով Պոլիս 1847 ին և դեկտ. 20. այս դ. գալն է Պոլիս: Ահա 80 ժամ Սասուն երթալ գալը, 138 ժամ Յամթայ Պոլիս. եղաւ 959 ժամ. որ միշտ ձիու վրայ նստած կը ճանապարհոր-դէր:

1847 Մկրտիչ Վարդապետ օրինաւոր խոստովանութիւն և դատ։

## ԳԼ. Ե.

Նոյն Պատրիարքարանը բողոքեց իրեն գլուխը եկած ցաւերուն վրայօք. և խնդրեց արդարութեամբ դատը տեսնուի։ Ընատեն Հակառակին կողմնապաշտները շատկէկ ըլլալով, ուզեցին յիշեալ վարդապետը կերպով մը լռեցունել։ Վասն որոյ յանցանք մը շինեցին և հնարեցին. անով զինքը Փրկիչ յղեցին 15 օր բանտարկեցին.

“Արդէօք թէ փօսթախանայէն օտար մարդկանց գիրը բերած բացած կարդացած է. և գիրերն ալ տարած Փրկիչ հիւանդանոցին մէջ պահած է. Վարդապետը գիտէր որ այս բանը ինքը չէր ըրած, վասն որոյ համարձակաբար ըսաւ. Եկէք երթանք Փրկիչ նայեցէք սենեակիս մէջ։,, Այս խօսքով առին տարին ներս մտան, բան մը չի գտնալէն ետքը, երբոր եկաւ դուրս պիտի ելնէր արգիլեցին զինքը իբրև յանցաւոր։

15 օր արգիլուած մնալով՝ վերջը հանեցին զինքը, որպէս թէ ալ չի՛ պիտի բողոքէր. բայց ճշմարտութիւնը ինքն իրմէ յայտնի կը տեսնուէր լուսաւոր աչքերու, թէ՝ իրաւունքը Մկրտիչ վարդապետին ձեռքն էր, և արդարութիւնը անոր կողմն էր։

Յայտնի և բացարձակ կ'աղաղակէր մեծ Ժողովին մէջ Մատթէոս պատրիարքին առջև դատ կը խնդրէր, ըսելով.

“Ես Պօլսէն չէի ելլար. ինչու և ինծի՝ համոզելով խոստումներ ընելով Առաջնորդ ըրէք յղեցէք զիս, որ ելլամ բարեկարգեմ Քիւրտիստան,,։

“Իմին յանցանքս ինչ էր, որ խնամքին մէջ չէս բանեցուցերէն ետքը՝ վերջապէս Մուշին մէջն ալ բանտել 80 օր բանտարկել զանազան նեղութիւններ տալով ինձ,,։

“Ես այս դատը մեծ անձերու համար չեմ խնդրեր, այլ և

**1848. Մկրտիչ Ճարտարապետ 1700 ղուրուշ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը նուիրած ըլլալը։**

---

խնամամ եմ ըրած յանցանքս և ապաշխարեմ. չէ՛ նէ՛ Բող արդարութեանը յայտնած է, որ ամէն մարդ խնամայ անդարդ տեղը ղարղարելու »։

« Եթէ ես Բրօթէսթանթ ըլլայի, բնաւ երբեք մտքէ մը չէ փելաթեան չէղեր կարողանային ինձի ընելու, եթէ ազգէ քեզ ըլլայի, հարկաւ չէր կարենայ մէջ թուրքէր յանձնուած խոստումս չէ-րէ ընէին. չէ՛ թէ հալածանքս հալածանքէն, եթէ ազգիս տէրով մը տէր ըլլայի, և չէրէ ղալաքէն, թող որ քեզ կէրքե-րած հէրս կը հալածանքէն. ապա թէ ո՞վ ինչ պատճառ ինձի այս վնասները հասցուցին, և Քրիստոնէութեան բարեկարգութեան արգելք եղան և պատճառն կը մնէին ալ։

« Ես հիմա ալ ինծի Փրկիչ տարիք դրիք, և 1700 ղուրուշ ալ գիշերը հէյդէէ բերանը բացած առեր գնացեր են. Սանդըքճեար Յօհաննէս աղային ըսի. — Ես իմաց կուտամ ըսաւ Սրբազանին. անոր ալ համար հոգ չըտարուեցաւ։ Եթէ ես փօռթոհանայէն գիր առած եմ, աչա փօռթոհանան մօտ է, հեռի չէ. անձամբ երթանք հարցունենք բայց ես գիտեմ այդ բաները իմ գլուխս կը բերեն որ ես լռեմ, դատ չխնդրեմ, որ ատիկայ անհնարին բան է. ըսման չորս ամիս առ դատը ուղղութեամբ տեսնուելու համար, Մկրտիչ վարդապետը Պոլսոյ մէջ, տեղ չմնաց որ չբողոքեց, տակաւին ան ատենուան գրերը և Մահուերները կը կենայ. ուղղը կրնայ տեսնել յիշեալ վարդապետին քով։

Վերջապէս Թնիրեաքեան Յարգի Պետրոս աղայն, և քանի աղայք մէջ մտնալով համոզեցին և խոստացան թէ՝ խնուս և թէ Մուշ եղած վնասները վճարեցին, և կանխիկ հակառակորդէն 2000 ղուրուշ առին տուին իւրեան, որպէս թէ՝ մնացեալն ալ պիտի վճարեն. (Նէ՛ ալըրըն ախըմի)

Ու Տիգրանակերտու քաղաքին պատրիարքական փոխա-

**1849. Տէյարպէքիր (Գոլէրա) ախտին սաստը, և ժողովրդեան չարչարումը։**

---

Նորդ անուանեցին, որպէս թէ՛ ալ Մուշ չերթայ, ու արգելք ըլլան իրեն աշխատութեան դէմ. այլև Տիգրանակերտ նստի, Գէորգեան բարեկարգէ. ուստի տուին Կոնդակը, և խոստացան միշտ օգնական ըլլալու իրեն աշխատութեանցը. ելաւ Պօլսոյ 1848 յունիս 1 եկաւ 138 ժամ հեռի Սամ-սոնով Տիգրանակերտ։

Ըստ միջոյին Թէ՛Նարբերդուն և Թէ՛ Տէյարպէքիրու մէջ Գոլէրա ախտը զօրացած շատ կոտորումներ կ'ընէր. վասն որոյ՝ քաղաքին ժողովուրդը ցրուեալ գտաւ. իսկ ետքը մնացեալ ժողովրդոց համար արիասիրտ ոգով եկաւ մնաց քաղաքին մէջ. որչափ և ննջեցեալ կը լինէր՝ օրինաւոր թաղել կուտար, և մնացեալներն ալ վարդապետական սուրբ խրատներով կը մխիթարէր։

Երբոր դադարեցաւ կոտորումն, քանի ամէն եղքը ցրուեալները սկսան գալ տուններնին, անահ և աներկիւղ ամենայնի։ Մէյ մ'ալ տեսան որ յանկարծ սկսաւ Գոլէրա ախտը, նոր եկող ցրուեալներէն կոտորում ընել, որչափ որ պէտք էր. և ապա միանգամայն դադարեցաւ և խաղաղեցաւ։

Հիչ մտքերնին չբերին Դաւիթ մարգարէին բանը որ կ'ըսէ " Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց. Եթէ ելանեմ յերկինս դու անդ ես. և եթէ իջանեմ 'ի դժոխս. և անդ մօտ ես. և այլն. Սաղ. ՃԼԸ. 7։ Ըստմիտ մարդիկ՝ իրենց քովը եղած . . . մեղքէն չեն փախչիր որ մազնիսի նման Աստուծոյ բարկութիւնը իրենց քով կը բերէ. այլև Աստուծոյ վճռած բարկութեան սուրի բերանէն կը փախչին։ Ըստ ախտի սրուն բերանէն փախան. բայց Աստուծոյ առջևէն չկարացին փախչիլ. դարձեալ նոյն ախտով տարաւ զիրենք։ Ըստմիտ Նինուէացւոց նման ապաշխարե-

---

լու չէին փութար. Ղովտին կնոջ պէս կը փախչին և աղի արձան կը փոխուէին։

Իսկ վարդապետը՝ «Ի քեզ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան» կ'ըսէր և կ'աշխատէր։

Յետ դադարման և խաղաղութեան 1849. Յունվար սկսաւ նախ քաղաքին մէջ՝ կարգ ու կանոնները հաստատելու ձեռք զարնել, եկեղեցեաց իրաւունքները իմանալ. կալուածներէ եկածները տումարի առնել. ու բացուելիք վարժարաններու յառաջ եկամուտը շիտկել, և այս ծախքին դուռը բանալ. որ գործին «հիմն ՚ի վերայ վիմի ըլլայ հաստատուն.» Մատ. Է. 25։

Տակաւին այս աշխատութեան մէջն էր Ասորոց Ջէյթուն արքեպիսկոպոսը, իմացուց վարդապետին. «Եթէ խնդրածդ ՄԱՐԻԲԱՍ ԿԱՏԻՆԱՅ անուն Հայոց պատմութեան գիրքը՝ ահա Ըրէֆնոս Մաղան գիւղը կայ և տեսած եմ այդ գիրքը և վերցուցած գրուած. կուզենէ՝ մարդ խրկէ բերել տամ»։

Սոյն լուրը առածին պէս գրեց իմացուց Պօլիս և անկէ Գերապատիւ Տատեան Յովհաննէս պէյը շատ ծախք ընելով իրեն յատուկ մարդը Զրաճեան Հաճի Թովմաս աղայն յատուկ գրերով ճամբեց եկաւ վարդապետին քով Տիարպէքիր, որ երթան յիշեալ գիրքը բերեն։

Երբոր 30 ժամ հեռի գնացին խնդրեցին գիրքը յայտնի չեղաւ. ասոր համար բոլոր Ասորեստանու վանօրայքը և եկեղեցիները և հին գրքատունները այժմեայ Եաղուպ Արբայեան Կաթուղիկոսին հրամանաւ և գրով և Թարգման վարդապետով շրջեցաւ յիշեալ վարդապետը 1859. Ասորեստան բազում նեղութեամբ. և շատ ծախքեր ընելով, վերջապէս չգտնուեցաւ։

Զէյթուն Եպիսկոպոսի գրածը, Ապուլ Փարաճ պատ-

մագրին համար Մարիլաս բանալով գրեր է ժողովուրդ ։ Շատ մը աշխատութիւնէն 'ի զատ 188 ժամ համբերութիւն ըրաւ ատ աջագին քեռներուն մէջ. և շատ ընծայներ և դրամ վատնելով. եկաւ Տէրողեաներ Ապրիլ 20 ։ " Ամենայն ոգւոյ մի՛ հաւատայք ,, Ա. Յով. Դ. 1 ։ լաւ միտքը պահեց ։

Ու միջոցին Մատթէոս պատրիարքը կը հրաժարի պատրիարքութենէ, Յակոբոս կը նստի պատրիարք, վասն որոյ Յակոբ եպիսկոպոսը կը համարձակի Թախանձանաց գրեր գրել Ողորմեան Գևորգապատիւ Յովհաննէս աղային. Թէ՛ " Ինչու կ'ընես այս, չես փրկեր Տէրողեաներ Առաջնորդ ըլլալ ,, նոյնպէս իրեն կողմնապահներուն ալ յատուկ գրելով, քաղաքին մէջ խռովութիւնը ծայր տուաւ ։

Աստի բարեկարգութիւնը հերքող, անձնասիրութիւնը պատուողները իրենց մասնաւոր օգտին համար սկսան միաբանիլ ։

Մկրտիչ վարդապետը տեսաւ որ՝ օր քան զօր խռովութիւնը պիտի շատցունեն շահասէրները. վասն որոյ ինքը զինքը ետ քաշելով՝ խաղաղութեան կողմը բռնեց, հրաժարականը տալով գրեց Պոլիս ։

Յակոբ եպիսկոպոսը եկաւ Տէրողեաներ, և Մկրտիչ վարդապետին ալ հրամանագիր եկաւ, որ երթայ Շապին—Գարահիսար Պետրոս եպիսկոպոսի, Կարապետ վարդապետի, Գաբրիէլ փոքրաւորի սպանման վրայօք քննիչ, և Պատրիարքական փոխանորդ ։

Քաղաքացւոց բոլոր մեծաց և փոքունց, բայց քանի շահասէր անձանց սիրելի ըլլալուն ։ Իրեն միամեայ աշխատութեան փոխարէն՝ 'ի պատիւ ինքեան տուին շնորհակալութեան Մահազարնամէ մը, որ տակաւին կայ պահած. ուզողը կրնայ տեսնալ յիշեալ վարդապետին քով. և փառաւոր յուղարկաւորութեամբ գնաց Սեբաստ և անկէց Եւդոկիա ։

---

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ.

Ալ հարցուի, երբոր վատ մարդ էր ատ վարդապետը, ինչո՞ւ շնորհակալութեան գրեր կուտան, և փառաւոր կը յուղարկեն. եթէ լաւ էր՝ ինչո՞ւ թոյլ չտուին մնալ և բարեկարգել Քէօբրիւլեան և Տիգրանակերտ:

Առոր օրինակը Տէր Ղուկաս Աւետարանին մէջ. Ը. Գլ. 37 համար. «Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ եղ կողմանք Գերգեսացւոց գնալ 'ի սահմանաց նոցա,,:

Բատերը կը ցանկային Յիսուսը տեսնելու, ինչպէս որ սուրբ Աւետարանը կը վկայէ. Մատ. ԺԳ. 17. «Բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ և ոչ տեսին,,: «Հերովդէս ցանկայր 'ի բազում ժամանակաց տեսանել զնա,,: Ղուկ. ԻԳ. 8. «Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօրն իմ,,. Յոհան. Ը. 56. «Զաքէոս կը խնդրէր տեսանել Յիսուսը,,. Ղուկ. ԺԹ. 2.

Բայց Գերգեսացիները աղաչելով ճամբու կը դնէին, որովհետև իրենց առօրեայ մասնաւոր շահերուն վնաս կուտար:

Երբոր դևերը մարդոցմէ կ'ելլէին. հրաման կը խնդրէին որ խոզերուն վրայ մտնան. և Յիսուս ալ նոյն հրամանը տալով. խոզերը ծովը թափուելով կը խեղդուէին, վասն որոյ խոզին տիրուըտանքը խուռն բազմութեամբ կ'աղաչէին որ ալ բժշկութիւն չընելով իրենց սահմանէն դուրս ելլելու կը հրաւիրէին:

Ո՞վ շնորհակալութիւն. ինչեր ըրած ես, և ինչեր ալ պիտի ընես: Եւան Ադամէն զատեցիր, բաւական չը-սեպեցիր. այս անգամ՝ Եւայն և Ադամը 'ի միասին Աստուծմէ միանգամայն հեռացուցիր. ալ ուրիշ զատած-ներուդ ըսելիք մը չի մնար. զոր օրինակ՝ հայրը՝ զաւակ-

մէն · մայրը՝ աղջիկմէն . հայրը՝ սկեսրէն . եղբայրը՝ եղբօրմէն · քոյրը՝ քրոջմէն · ազգականը՝ ազգականէն · դրացինը դրացինէն · քաղաքացին՝ քաղաքացոյմէն · ընկերը՝ ընկերէն · սիրելին՝ սիրելոյնմէն · վարդապետը՝ աշակերտէն · քահանայն՝ ծուխերէն · վարդապետը՝ վիճակէն · եւայլն եւայլն · այս ամէնը ընողն է լուսաւորութիւնը , ինչպէս որ յայտնի կ'երեւի · Թող տանք միւս գէշութիւններն ալ · որ լուսաւորութենէն յառաջ եկած է · այսինքն՝ նախանձը , բամբասանք , հայհոյութիւնք , խռովութիւնք , մինչեւ անգամ սպանութիւն · եւ այլն ·

Անոր ցուցակները Աստուածաշունչ գրքին , եւ Հայոց պատմութեան մէջ շատ կը գտնուի . եւ ահա մէկ ցուցակն ալ Տիգրանեան Մկրտիչ վարդապետին Տիգրանակերտէն փառաւոր յուղարկաւորութիւնը կը լինի · լուսաւորեալ եւ լուսաւորեալներուն ձեռքով ·

Երբոր կը խոստանային Մկրտիչ վարդապետի ընելիք բարեկարգութիւնը ընել · Տէր Թէոդորոսը 26 · — ո՞ւր է . ո՞ւր մնաց · տակաւին Հայոց տղայքը Հայերէն կարդալու համար՝ Բռոթեսթանթից վարժարանը կ'երթան եւ Տաճկերէն կարդալու համար ալ Մզկիթներու եւ Հուճրէներուն մէջ Տաճկաց մանկանց հետ կը կենցաղավարուին : Արդ հետեւ օրինաւոր վարժարան մը հաստատելու թոյլտուութիւն չի տար լուսաւորութիւնը · ո՜հ : Թէ եւ բարեսիրտ քանի անձինք կը միաբանին օրինաւոր վարժարան մը բանալու չի յաջողիր : Այսան զի լուսաւորութիւնը քառասուն հազար ղուրուշ ծախս ընել կուտայ · հարկաւոր չեղած Եկեղեցւոյ եւ Առաջնորդարանի գաւիթին դռները կը ծեծցնէր · ահա Տիգրանակերտու Առաջնորդին խելացութիւնը : Ալիբունար Ս. Աստուածածնի եկեղեցին եւ Պըլթրպիլ մշտնջենական քահանայ մըչեն գտներ · Տէր Եփրեմ 6 : Եւ վերջապէս եկեղեցւոյ դուռը

չեն բանար. Նիւթական եկեղեցւոյ դուռը կը մեծցնեն: Հարցնենք իրեն. զինուորեալ եկեղեցիին պիտոյքը յառաջ հոգալ պէ՞տք է. և թէ նիւթականին. այսինքն՝ ժողովուրդը առանց քահանայի, մանկունքները առանց օրինաւոր վարժարանի մնալը հարկաւո՞ր է, և թէ եկեղեցւոյ հարիւրաւոր տարիներէն յառաջ շինուած և մնացած դուռները հարկաւո՞ր էր շինել և մեծցնել:

Արդարև նիւթական եկեղեցին հարկաւոր պէտք է: պայծառ և փառաւոր ըլլալու. որովհետև տուն Աստուծոյ է Ղուկ. ԺԹ. 46: "Եղիցի տուն իմ տուն աղօթից":

Բայց նախ և յառաջ զինուորեալ եկեղեցւոյ խնամք տարուելու է, որ Նիւթականն ալ զինուորեալին համար շինուած է:

Երբոր զինուորեալը տկար խեղճ, ողորմելի, տգէտ և կոյր ըլլայնէ՝ անոր նիւթական եկեղեցին հաստատ հիման վրայ չկրնար մնալ: Ինչպէս որ կը տեսնուի, շատ տեղուանք և մանաւանդ Քիւրդիստան, և Հայաստան շատ եկեղեցիներ և վանօրայք, է որ՝ տակաւին ողջ կեցած է անմարդաբնակ. և է որ՝ միանգամ աւերակ. զորօրինակ՝ Նափրկերտ. սուրբ Աղբերիկ, Էջմիածնի կողմերու մասնաւոր վանօրայքը. և այլն և այլն: Փնտռողը շատ աւերակներ կրնայ գտնալ զինուորեալ եկեղեցւոյ տկար և տգէտ մնալու պատճառաւ:

Ահա՛ այս տեսակ խեղճ տէր մարդիկ՝ էր որ՝ Մկրտիչ վարդապետը փառաւոր ճամբու կը դնէր:

Ամէն մարդ կը ցանկայ մաքուր և պարզ ջուր խմելու. անոր համար լեռնէն իջած ջուրին, գետնի տակէն մաքուր ճամբայներ կը շինեն. և արժանի կը լինին մաքուր ջուրը խմելու:

Երբոր մէկ, կամ երկու շահասէր մարդոց ձեռքը (Թարլան) ջրին եղերքը գտնուելու ըլլայ, անոնք չեն կամենար

**1850** և **1851**. Մէրտինէ Էրզրումէն Շապին—գարա հիսար գալը, և Տրապիզոն :

---

*լեռան ջուրը գետնի տակէն երթալու . որ իրենց մէկ կամ երկու կտոր ճուրլան ջրուի նոյն ջրէն :*

*Թէ և հրիաբար ջրին ճամբայ չինող մ'ալ ելլէ , անոր ալ թոյլ չեն տար շինելու . իրենց երկու կտոր չբուսնալիք ճուրլան ջրուելու համար , բոլոր քաղաքացւոյն պղտոր և հողոտ ջուրը կը խմցունեն . և անոնք ալ զրկեալ կը մնան յստակ ջուրը խմելէն , և արժանի կը լինին պղտորեալ վը-նասակար ջուրը խմելու : Քանի որ Յօնան մարգարէի դըղ-մենին Տիարպէքիրցւոց գլխուն վերան բարձրացածէ . տա-կաւին Յօնանին պէս պիտի քնանան , մինչև որ Աստուած տկար որդան հրաման ընէ զանի կտրելու , որ արևը ծագէ իրենց ու Քիւրտիսթանի վերան :*

"Ձայն որ լսուեցաւ ձայնը լալոյ լսուեցաւ ". — Եւ որ է–մատաղանն է՝ խորհելոյ . Աւրեմն . "Յիշէ՛ շփոթման մը և նոյն զննմանութեանն ". Քանզի "Որ տանէ շփոթմունքեան փոյ ա-լոյն , զի յայտնի վայէն փոխել նորա նե Աստուծոյ փորձեցան ". Յեր . Գ . **21** :

### ԳԼ . Զ

*Գանք հիմայ մեր պատմութեան կարգին . երբոր մտաւ Շապին—գարահիսար գտաւ Հայոց ժողովուրդը յետին ծայր խռովութեան մէջ . եկեղեցին՝ Լուսաւորչայ Աւարանը՝ վարժա-րանը աւրած փոշի դարձած . իշխաններուն կէսը Տրապիզոն բանտին մէջ : մնացածներուն ալ ետևէն հրաման եկած էր որ պիտոր երթան Տրապիզոն ,*

*Տրապիզոնի մէջ չորս ամիս մնալով ինչև իւյէ գործերը կարգի դրուելով ,* **1850** *մարտի* **2***ի . Սիրասնով* **28** *ժամ հեռի եկաւ Շապին գարա հիսար :*

## 1851. Մկրտիչ վարդապետը կը հրաժարէ Շապին—Գարահիսարէն.

Տրապիզոնի մէջ չորս ամսուան եղած գործերը շատ է, աս տեղս մեր համառօտութիւնը չի ներեր գրելու. ուզողը կրնայ Գերապատիւ Սամիկոնեան Կարապետ պէյէն ստոյգը երկարօրէն իմանալ, որովհետև յիշեալ, Պէյին ձեռքով կը տեսնուէր գործերը։

Շապին—գարահիսարին մէջ շատ նեղութիւն քաշելով՝ երկար միջոցներով հազիւ թէ կրցաւ հաշտեցնել զիրենք, և շատ աշխատութիւններ քաշելով եկեղեցւոյ շինութեան հիմն դնել տուաւ. 1851ին սկսան շինել, և Պատրիարքարանէն աս միջոցին յիշեալ վարդապետին Առաջնորդական ֆէրմանը, և արքունի ականակուռ նշանը եկաւ. հաւատարիմ աշխատութեան փոխարէնը։ Իշխանին մէկը Տրապիզոնէն եկաւ, ուզեց որ՝ ինքն ալ ձեռնամուխ ըլլայ եկեղեցւոյ շինութեան. ուստի բոլոր ժողովուրդը դէմ կենալով՝ չընդունեցին։

Դիմեց յիշեալ Իշխանը Առաջնորդին՝ գոնէ անոր ձեռքով գործին մէջ կը յուսար մտնելու. երբոր Առաջնորդէն ալ յոյսը կտրեցաւ, սրտին մէջ իմացաւ որ՝ աս Առաջնորդի օրովը չպիտի կարենայ հարստահարութիւն ընել. վասն որոյ սկսաւ Առաջնորդը քաղաքէն հանելու հնարքը գտնալ, և գտաւ ալ և կատարեց ալ։

Գտաւ իրեն կամակից Պոլսոյ մէջ մէկը, ան ալ Յակոբ Պատրիարքը խանգարել ըրաւ. որպէս թէ 18000 ղուռուշ աս Իշխանը Մկրտիչ վարդապետին տուած կըլլէնի. ուստի Պատրիարքը կը գրէ, կա՛մ փարան տո՛ւր, և կա՛մ Պոլիս եկո՛ր։

Որովհետև աս որոգայթը հնարողը այնպէս հնարեր էր որ՝ հարկաւ Պոլիս պիտի երթայ վարդապետը, որովհետև լաւ գիտէր չէ թէ 18 հազար՝ այլև 18 փարայ տուած չէր. ուստի կամայ ակամայ Պոլիս պիտի երթայ։ Ան ատեն անոր

տեղը վարդապետ մը կը բերէ ։

Շատ գրութիւն երթալէն գալէն ետև՝ ստիպուեցաւ Պօլիս գնալու · եղաւ ես 28 ժամ եկաւ Կէրասուն և անկէց շոգենաւով Պօլիս · 1852 դեկտեմբեր, ահա այս չորրորդ գալն է Պօլիս ։

Տակաւին վարդապետը ծովուն վրան, Պօլիս կուգայ ։ Իշխանի կամքը կատարեց Պատրիարքը, Էվէրէկցի Կարապետ վարդապետը յղեց Առաջնորդ Շապին—Գարահիսար · լման վեց ամիս Պատրիարքարանը մնալով երկարօրէն քննութիւններ սկսաւ ըլլալ, մինչև վեց ամիս · վերջապէս բանի մը հիմն սուտ ըլլայ նէ՝ տասը տարի ալ քննես՝ բան մը չպիտի գտնաս ։

Հիմա կը հարցուի · եթէ անմեղ է՝ ինչու Առաջնորդական պաշտօնէն կը հրաժարեցնեն · և եթէ մեղաւոր է՝ ինչու անմեղութեան գիրը կուտան, որ մինչև ցայսօր նոյն գիրը կը կենայ յիշեալ վարդապետին քով ։

Ահա յայտնի է գործը ինչ կերպարանքի մէջ մտնալը, ալ ըսել և զրուցելը մեծ անխելքութիւն է, « Լուռ եղէ և ոչ բացի զբերան իմ » · Մատ · ԻԶ · 63 ։ և Սաղմոս ։

Բայց յիշեալ վարդապետին քով այլ ևս կնքեալ զօրաւոր ձեռագիրներ կար, թէ որ վարդապետը վրէժխնդիր ըլլալու կամք ունենար նէ՝ ատ գրերով կրնար գէշութիւն հասցունել յիշեալ Իշխանի անիրաւութեանցը ։ Իսկ ատ գրերն ալ Գերապատիւ Պէյլէր Յակոբ էֆէնտին քանի անգամ ուզեց որ վարդապետին ձեռքէն առնել, ու վարդապետն ալ չէր տար, չէ թէ գէշութիւն մը հասցնելու համար, այլև ժամանակ կը լինի որ կը հարկաւորի ։

Բայց Գերապատիւ Պէյլէր Յակոբ էֆէնտին հնարիւք մը վարդապետին ձեռքէն առաւ · 1852 սեպտեմբեր 22 օրն Դշ. Մկրտիչ վարդապետը տարաւ իրեն սենեակը Վաքըֆ—խանէ,

**1852 · Օգոս · Դերսաադեթէ Պէյլէր Յակոբ Էֆէնտին՝ գիրը հասնէ Մկրտիչ Վարդապետն և 1514 ժամ գրաստի վրայ Նորէն Ուրֆէնը Չէջէու Բաբանոյն ։**

---

Ըստս անգամ մը նայինք աս քովիդ եղած գրերը, օրինակները հանէ՛ տո՛ւր ինծի, վարդապետն ալ միամտօրէն հանեց սկսաւ գրել օրինակը հանելու, մէյմ՛ալ տեսաւ որ սեննեկի դուռը գրին, բռնեցին բոլոր գրերը առին ձեռքէն։

Թէպէտ վարդապետը շատ նեղացաւ. բայց ինչ օգուտ գործը լմնցուցին, աս գործողութիւնն ալ որ ըրին, չէ թէ վարդապետէն կասկած մը ունէին. այլ զի՛ որ կը լինի աս գրերը ուրիշ մարդու ձեռք կ՚անցնի, կարելի է որ գէշութիւն մը տակէն կելլէ. միանգամ թող անհետանայ գրերը ապագայ չարը խափանելու, յիշեալ աղայն բարի մտօք խաղաղացուց գործը։

Առ Իշխանը որ Մկրտիչ վարդապետը այդպիսի զըպարտութեամբ Պօլիս բերաւ տեղը Կարապետ վարդապետը տարաւ դըրաւ, իրեն կամքը կատարեց, բայց չվայելեց, ինքն ալ աղքատի մը տունը երթալով, ան տեղը կտոր մը քնանամ ընելով, գլուխը դրեր քնացեր, ա՛լ չէ արթընցեր. առանց հաղորդութեան կեանքը կնքեր լմնցուցեր. Աստուած անոր յանցանքը չի յիշէ. ամէն։

Հիմայ նայինք քանի՛ ժամ ճամբորդութիւն ըրաւ յիշեալ վարդապետը, Աշա՛ 138 ժամ Սամսոնէ Տէյարպէքիր. 188 ժամ Սորեստանու լեռները, Յամթայ 90 ժամ Սեւող 14 ժամ։ Օրուայ. 12 ժամ առաքելոց վանքը և 9 ժամ Շապին—գարա հիսար. 48 ժամ Տրապզոն. 28 ժամ Կիրասոն. 28 ժամ վերստին Կիրասոն և անկէց Պօլիս. ըմեն 555 ժամ. և 959 ժամ ալ առաջինը. ըրաւ 1514 ժամ. որ գրաստի վրայ նստած ճամբորդութիւն ըրած է։

Այս անգամ մեղքնալով իրեն. որպէս թէ յանիրաւի զինասուեցաւ. բերին Նօզզատու Առաջնորդութիւնը տուին

Մկրտիչ Փորթուգալը Եօզղատ Աղջկանց վարժարան կը հաստատէ, քննութեան աղջկան և տղայի նշանադրութեան:

---

իրեն 1852. Օգոստոս 27ին որն Դշ. եղաւ 60 ժամ հեռի Սամսոնէն եկաւ Եօզղատ:

Եօզղատ քաղաքին մէջ երեք ամիս կեցաւ վարժարաններուն այցելութիւններ ըրաւ. և աղջկանց համար յատուկ վարժարան բացաւ, Աղօթական և Գործնական արհեստներ սորուելու համար:

Այս վարժարանին համար Լուսաւորչական ընկերութիւնը հաստատեց. Տե՛ս Նոյեան Աղաւնի լրագրին 1852 և Սեպ՛ 3 և Դեկտ՛ 27. Մայիս Նոյ՛ 12.

Ժողովուրդը աս վարդապետին ազգասիրութեան համար յարգեցան իրեն և շատ կը սիրէին: Այս միջոցին գիւղական 20 տարեկան աղջիկ մը՝ և 25 տարեկան տղայ մը, եկան խնդրագիր մը մատուցին վարդապետին:

ՕՐԻՆԱԿ ԽՆԴՐԱԳՐԻՆ

Ֆազիլէթլիւ էֆէնտիմ, պէն պօ՛ կըզըն իւչ սանտըր թէ նըշանլանմըշըմ, պէնըմ տէտէմ իլէ իլէ՝ պէնի պաշգա էվլէնտիրէր. իսթէր մի՝ պէնի պօզըմ, պէնըմ օլսըն պու. պօզուլմագ իսթէր: Աման էֆէնտըմ. ալլահ աշգընա, հաղգըմըզը: 1269 րէճէպ 20. Գէորգ և Եղիսաբէթ:

Այս խնդրագիրը առաւ, ղրկեց կանչել տուաւ. Տէր Մարտիրոսը և Տէր Գրիգորը. Ներսէս Ռեստիքը. Ոսկիա-յենը, Պօղոսը. Սիմոն աղայք, և այլն: Երկարօրէն քննեց և իմացաւ. որ մեղօք չէ՛ բայց՝ աղջիկը կուզեն բռնութեամբ զատել իրեն բուն նշանածէն, և տան ուրիշ տղայի մը, բայց աղջիկը, կը պոռար և կաղաղակէր ինքը զինքը օտար հաւատքի մէջ ձգելու ցոյց կուտար, եթէ բռնութեամբ զատուելու ըլլան:

Եօզկատ աքսորէն Պօլիս կ'ուգէ Մկրտիչ Վարդապետը:

---

Որովհետև դրսերը ատանկ բռնութիւններ շատ կ'ըլլան: Ամն ատ աղաղակները ամիս մը տևեց, աղջիկը գնաց Բաշային արզուհալ տուաւ, անկէց ալ հրաման եկաւ. Թէ ատոնց գործը հոգալու է. վերջապէս վարդապետը մտածեց երկարօրէն. և խորհեցաւ:

Թէ որ ատոնք պսակեմ, ոմանք մարդիկ ըլլս շատ պիտի նեղեն. ալ Եօզղատ պիտի չկարեմ մնալ. և եթէ չպսակեմ, ատոնք աղքատ ըլլալովնին Աստուծոյ պիտի բողոքեն. ուրեմն թող Աստուծոյ չբողոքեն զրկեալ. քանզի Աստուած կ'ըսէ. " Զրկեալն 'ի յենէ բողոքէ առ իս, բողոք հեծեծեալ ենաս յականջս Տեառն զօրութեանց ,,. Թող ես նեղուիմ, և Եօզկատ ալ պէտք չէ ինծի ըսաւ, եղաւ հրաման բրաւ քահանայից որ պսակեն:

Նոյն քահանայք եկան ոտքը ձեռքը ընկան ըսելով " Աման Հայր սուրբ. մեն մեռնինք, դուն փրկուիս. մեն կոտորուինք՝ դուն [illegible], [illegible] դուն [illegible] դատաւորեալ. [illegible] դուն [illegible] Բարեփառն Հայրն:

Մտածեց վարդապետը, իրաւ անանկ է ըսաւ, ուստի ինքը եղաւ հագաւ Վեղարը. 1852. Նոյեմբեր 25 Երեքշաբթի օրն պսակեց, և դրաւ ճամբու. գնացին:

Նոր վրայօք խռովութիւնը ծայր տուաւ և ինքնալ չկեցաւ, որպէս թէ Աստուած յատկապէս ատ խեղճերուն պսակուելուն համար՝ վարդապետը Պօլսոյ բերաւ Եօզկատ: և երկրորդ աղջկանց վարժարան բանալու, ահա երկուսնալ կատարեց եղաւ կերթայ: 44 ժամ հեռի Եօզկատէն Պօլիս: Եղաւ Եօզկատէն 3 ժամ. Սարըլար գիւղը. 6 ժամ Իպրահիմ քէօյին. 5 ժամ Սարըմ դէյ. 3 ժամ Չօրում. 7 ժամ Չախալ խանը. 6 ժամ Սամսըն, Դենիզ" 12: Եղաւ ճամբորդութեան ժամերը լման 44:

Եկաւ պօլիս, եղաւ Պէյ օղլու Քէչիչեան հաճի Կարա-

Աղքատ Պօղոսին համար խաղաղութեան եւլեւլը , և Մկրտիչ վար- դապետի Պոլիս գալը :

---

պետ աղայէն տունը իջևանեցաւ այս Հինգերորդ գալն է 'ի Պօլիս . տեսնենք այս անգամ ինչ պիտի ընէ Մկրտիչ վըշտակիր վարդապետը · կեցէք 'ի մէջոյ կեցոց ։

ԳԼ. Բ.

Երբ ներկայացաւ Պատրիարքարանին ։ Բարկացաւ Յակոբ պատրիարքը · Թէ՛ ինչո՞ւ եկար · պատասխանեց · — Աստուած գիտէ որ Եօզղատ երկու անկատար գործ կեցած մնացած էր , ինձմով կատարել տուաւ , դարձեալ ճամբու դրաւ , զիս բերաւ Պօլիս · '' Եղիցի կամք Տեառն օրհնեալ · Եւ բարկացաւ , Թէ՛ օրինաւոր պատասխան չէ աս , պատասխանենց · — Եթէ օրինաւոր չէ՛ աս իմ պատասխանս · ցաւալ եմ , ինչպէս կըկամենաս այնպէս տամ պատասխան ։

Դարձեալ բարկացաւ վռնտեց առջևէն , և մէկ ժամանցաւ ևս կանչեց ըսաւ , ըսէ՛ ճշմարիտը ինչո՞ւ եկար · աՀա տես քեզի համար գրերեն որ խռովութիւններ հանած ես , թող աս պսակը ճէհենէմ ըլլար՝ և չընէիր ։

Պատասխանեց · — Ցաւալ եմ — պսակը ճէհէննէմ ըլլալնէ՝ ես ալ ճէհէննէմ պիտի ըլլայի , մեղք չէ՞ ինձ · ուրեմն գնա՛ տես ինչպէ՞ս պիտի դադրեցնես աս խռովութիւնը , ըսաւ Սրբազան պատրիարքը · գնա՛ , դադրեցո՛ւր ։

Միւս շաբաթուն՝ շատ Եօզղատցիներ թափեցան Պատրիարքարանը և ըսին աս դատը՝ օրինաւոր պսակ էր , որ ըրաւ Մկրտիչ վարդապետը · քանզի երեք տարի էր որ նշանուած էին · ոմանք անձինք կուզէին աղջիկը առնել ուրիշինտալ · աղջիկը մեռնել իրեն աչքը առած էր և նշանածէն չէր զատուէր · վարդապետը աղքատին պսակը ձրիաբար ընելով մեղաւո՞ր եղաւ · ևայլն ևայլն ։

[illegible]

---

Շատ երկարեցաւ աս գործը · անատեն՝ Պօլսոյ երեւելիքն և ժողովքը, ամէն կանհրէն պաղած ու կուգային Պատրիարքարանը և ոչ կերթային · բոլոր Ազգային գործերը երեսին վրայ մնացած կեցած էր, պատրիարքէն և [illegible]

Աստի՝ վանեցին, Թիւրութիւնցին, Ընթացցին և այլ շատ քաղաքներէն ցաւ ունեցողները ժողովեցան, [illegible] Մկրտիչ վարդապետին քով · և գրեցին [illegible] և տուին Թագաւորին, [illegible], 1853 · [illegible] 26·

ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՐԶՈՒՀԱԼԻՆ ՕՐԻՆԱԿՆ Է

[illegible]

Մարտի 1ին եղաւ հրովարտակ մը, մարտի 7ին եղաւ ժողովը · որն [illegible] · այնպիսի տեսարան մը բացուեցաւ որ Պատրիարքարանը չտեսնողը և Պատրիարքարանի ճամբան չըգիտցողը, ան օրը տեսաւ, ճանչեց:

Ահարկու և պատկառելի ատենին մէջ հարցուցին Մկրտիչ վարդապետին, Թէ՝ — [illegible]

[illegible]

Խաչէծիյէն էչմալը, և նշանատոր քանի մը էզնլարրիլաները։

հէլ, ալգէն նէրէյէ և ալդայ վէծակը լուդընէլ Աստուծոյ հօ-
ծօլը մէր պարդան է՝ ըսաւ լմնցուց ։

Ան օրը խորհելիքնին խորհեցան, Աղայ Պօղոսեան Մարգար Աղայն, և խաչէծիյէլին մարդը · եղան Մեծլիքէն · առան Մկրտիչ վարդապետը, գնացին Պոլսը ։ Ան ատեն Խաչէծիյէ նշըըրն Բաֆաֆի քոլըն էր Մաքսուտ ամիրան անոր օըրաֆնէր, և յիշեալ Ամիրայն Մկրտիչ վարդապետին խը-նամք կը տանէր, անոր համար, ինքը քան զամենը յառաջ դուռը գնացած քաղչային քով նստած էր ։ Տէր լուսաւորեսցէ հոգին, և զաւակները բարեխնամ պահեսցէ ։

Մտան փաշային քով, փաշայն Պատրիարքարանի գիրը կարդաց նայեցաւ վարդապետին երեսն 'ի վեր ու ըսաւ ·
« Մէծլիս օլդուն մը · պատասխանեց — դէյիլ · — Մէծլիսէ գան-դըն մը · պատասխանեց — խայըր ։

Բարկացաւ փաշայն՝ դարձեալ Պատրիարքարանէն գա-լած գիրը կարդաց, հարցաւ վարդապետէն մէծլիս օլդուն մը պատասխանեց այո, դէյիլ · — Մէծլիսէ գանդըն մը՞ պատասխանեց, խայըր ։ Այս բարկացաւ փաշայն, այդպէս երեք անգամ հարցուց · վերջը ըսաւ, Նէչի՞ն գանմադըն, պատասխանեց, էլլէ չէմէ նէչի՞ն օլմադընըզ, էմր պօյլէ օլդուքէյըմ, Հրաման ըրաւ · Սէօյլէ · Էֆէնտըմ գէնտինըզէ Մէծլիսին օճա-նը գարար, մէծլիսէ գօմադըլար թէ գըլմայըմ գանդըլըմ, էախօտ գանմադըլըմ ։

Ատանկ որ ըսաւ մշտակիր վարդապետը, փաշան պա-տասխանեց · — Պօնտըն գէյլէ չօգ էյի ըլաճագըր, հար դէր էլլէրը պադըլաճագըր, նէ՞ գէթէր պադըլմաղըա՝ չէանթէսսը ար-գըհալ էտըլ, չէանթէսսէ Բօսթէզ էմիճեն · էալընըզ պանա կէ-լըն էֆատէ էյլէյըն, էլլէնըզէ կէօրըլըլ · ըսաւ, ճամբու դրաւ ։

Պատրիարքարանը սկսաւ ան օրէն օրինաւոր Նոր ժո-ղով հաստատեցին, Ազգային գործերը ըստ կարելի կերպին

Մկրտիչ վարդապետի [illegible] խօսակցութիւնը Սրբազան Պատ-րիարքին հետ :

---

տկսաւ տեսնուիլ:

Նա միջոցին քանի մը երևելի գործեր պատահեցաւ · զանց չենք առնել աս տեղս յիշելու :

1853 · Ապրիլ 5 Պէրպէրեան Յակոբ վարդապետի Թաղումն եղաւ Քահնազարեան Կարապետ վարդապետը Դամբանական ճառը խօսեցաւ Պէյօղլու Ս · Երրորդութեան եկեղեցին ·

Մայիս 8 · Մատթէոս Պատրիարքը Երմաշու Վանից Առաջնորդ անուանեցաւ :

Մամիկոնեան Վարդան աղայն Մուշ գնաց բարեկարգելու :

Մկրտիչ վարդապետը ներկայացաւ Սրբազան Յակոբ պատրիարքին · առանձին քանի մը հարցմունք ըրաւ ամենայն խոնարհութեամբ :

Օրհնեալ էք · — ըսաւ · — Ներեցէք ինծի , որ խօսիմ : — Ներուած է քեզի , խօսէ , ըսաւ :

« Չէր Յ[illegible] եպիսկոպոսը Քերովբէմեանի վրայ յետևանք-ներ [illegible] համար : 1841ին , 45ին , և 46ին , և 47ին Քերովբէմեանց համար [illegible] և գործով աշխատեցաւ , երբոր [illegible] կը [illegible] , [illegible] :

Աւստի զանազան վնասներ քաշելով Պօլիս կուգայի օգնութիւն խնդրելու :

« [illegible] օգնութիւն չգտնալէս ետքը , [illegible] [illegible] , [illegible] որ [illegible] — [illegible] · [illegible] · [illegible] · և [illegible] :

Ես [illegible] մէջ և [illegible] [illegible] 'ի [illegible] , [illegible] [illegible] , և [illegible] · [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] » :

[illegible] [illegible] , [illegible] և [illegible] էմ · [illegible] [illegible] [illegible] [illegible]

Մշոյ Սուրբ Յօհաննէս, Գալուստ և Խեան ֆրերը տալը, վարժարաններ բանալը:

---

տարի նոյն էին տար, որ որոնք մէջ յղացած Քրիստոնէութեան համար բարերարները յառաջ ի լոյս բերողը:

Անի որ՝ քոյր, ամէնը, Ճշմարիտ պաշտօնեայ եմ, ինչո՞ւ Վերջին Աստուածային պաշտօնեայ չէ ապրին և անոնք կը յղեն. Մեզ չէ՞ ժողովրդեան:

Ձեմ գիտեր, ինծի համար գործ կը գտնան չէ շահելո՞վ, և ինէ չէ նի՞նչերն գործի համար. տար պատասխանը կը խնդրեմ Հոգեւոր ժողովոյնմէն:

Պատասխանեց Արբաշանը. — Այս մ՛ հարցուներ, մեծ որդով գնա. Յետեւ եկած բարեխը Քրիստոնէութեան խղճալեացը բերէ բան մը ըլլայ ու՝ ինծի ղրկով գրէ. Աստուածով այս անգամ կարգէ կը տնեն Քրիստոնէութիւնը:

Վերջապէս հաստատ խօսք տուին որ, մինչև ցմահ Քրիստոնէութեան Առաջնորդը դու ես, Հաւատարմացուցին զինքը, ֆէրման կոնդակը շինեցին և գրեցին տուին իրեն:

Ինքը ալ՝ «Լաւ է յուսալ յԱստուած, քան յուսալ մարդիկ»: «Ի քեզ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան», Քանզի, «Որ ապաւինի ... ... լոյսն». Յօհ. Գ. 21:

Բաւ և սկսաւ ճամբորդութեան պատրաստութիւն տեսնել:

## ԳԼ. Օ.

Նաև վարժարանի վերաբերեալ գրքեր քանի հազար ղուրուշի, և այլ վանից պէտք եղած էշեաներ. և ատ միջոցին ճամբու խարճլըղի համար՝ 1000 ղուրուշ Տատեան Պօղոս Պէյը. և 1000 ղուրուշ խաֆֆաֆ Կարապետ Պերպէրեան Ազգասէրները տուին վարդապետին:

## ԳԼ․ Ա․

Եկաւ Տրապզոն Յունիս 14 · անկէ 15 օրով · 150 ժամ հեռի եկաւ Մշու Ս․ Յովհաննէս վանքը · Յուլիս 29 · գրքերը և էջմաները յանձնեց Մ․անից · և հարկաւոր եղածին չափ վիճակին հետը առաւ գրքեր և ընծայներ եկաւ 6 ժամ Շէնըք ։

Շէնիքու եկաւ Գուլը գաւառը տուաւ Հայաբնակ գիւղօրէից վարժարանի համար գիրք ։

Աշարօն գիւղը՝ տուն 50 · քահանայ 3 · Տէր Յարութիւն, Տէր Պետրոս, և Աւէտ՝ Կիրակոս · Երեցփոխան Կոմէ · տուաւ անոնց 13 կտոր, Սաղմոս, Գործոց և այլն ։

Գենղերլանք գիւղը՝ 80 տուն · Տէր Կարապետ, Տէր Պօղոս · Աւէտ՝ Տ․ Կարապետի տուներ · Երեցփոխան Կուրծօ · տուաւ 17 կտոր գիրք ։

Հնձքար գիւղ՝ 40 տուն · Տ․ Աբրահամ · Աւէտ՝ Արօ · տուաւ ասոնց ալ 13 կտոր ։

Եյուբ գիւղ՝ 15 տուն · Տ․ Հայրապետ · և Աւէտ՝ Առաքել · տուաւ 8 կտոր ։

Շիւղէք գիւղ՝ 10 տուն · Բասուր 10 տուն · Կրէմօրի 10 տուն · անոր քահանայները Աշարօնք գիւղէն կուգան · բոլոր տունք 220 ։

Եղաւ Գուլը գաւառէն, եկաւ Խութան նահանգը, 6 ժամ հեռի Սաղտուն · այս նահանգի Հայաբնակ Սուրբ Յովհաննէսու վիճակ գիւղօրէից տուաւ գրքեր ։

Փառկայ՝ տունք 150 · քահանայ՝ 4 · Տ․ Պօղոս, Տ․ Յօհաննէս, Տ․ Գրիգոր, Տ․ Եղիա, Աւէս Կրպէ, և Խնուժէ · տուաւ գրեանք 14 կտոր ։

Հեղին՝ տունք 60 · Տ․ Աստուածատուր · Աւէտ՝ Ղա-

---

ղար, տուաւ 19 կտոր գիրք:

Աղտոուն՝ տունք 60. Տ. Առաքել, Տ. Կարապետ, Ոսկան՝ Կրօ և Ամլան. տուաւ գիրք 18 կտոր:

Արքալ՝ տունք 30. քահանայն՝ փախկայէն կուգայ. Ոսկան՝ Սարգիս. տուաւ գիրք 16 կտոր:

Արգկօնք՝ տունք 15. Ոսկան՝ Խաչօ. գիրք 14 կտոր:

Խշխնցոր՝ տունք 15. Ոսկան՝ Արօ. գիրք 14 կտոր:

Ընկուզնակ՝ տունք 30. Ոսկան՝ Կրօ. գիրք 16 կտոր:

Տունք ամէնը 360. ասոնց եկեղեցիները փոքր. անլուսամուտ մթագին մէյմէկ մառանի նման են անզարդ. միայն քարաշէնք մը, ոչ սիւնոց և ոչ այլ ինչ. հնոտի վարագոյր մը, նոյնպէս զգեստնին, եայլն:

Ելաւ ասկէ եկաւ Արիւպող վանքը, 12 ժամ դէպի Հարաւ. նստաւ այս տեղս. մարդ խրկեց Հէյնի. Լճէ. Հազրօ գիւղերը. Հայնու Տ. Պետրոսը. և Շաշոնց Ստեփան աղայն, և Մալղաղան Պավարը, և Լճու Աղէքսան աղայն, և Հօբուսմայ Մելքոն, և Ոսկան Յակոբը. և Հազրուայ մահտեսի Խաչատուր աղայն. և Թիւրպէնտին մահտեսի Սարգիս և Ստեփանը, և Պետրոս աղաները, բերել տուաւ. և Շմշմու Ոսկան Հասէ աղայն: Եւ հաւաքեցուց երեւելիներուն մէյմէկ ... վերարկու. եկան Պատրիարքին կոնդակը կարդացին, վարժարանները թէև խանգարուած էր, դարձեալ բացին. և տուաւ հարկ եղած վարժարաններուն գրքեր. 1853. Սեպտ՝ 10:

Ելաւ ասկէ, 14 ժամ ճամբով եկաւ Տէյարպէքիր Ս. Սարգիս եկեղեցւոյ Առաջնորդարանը իջևանեցաւ. Սեպտ՝ 24:

Քիւրտիսթանի քաղաքական գործերը տեսնուելու համար՝ Մկրտիչ վարժապետին 1 ձեռք ... լաթ հագուեցուց կարգեց (Մէկթէպ պաշի). և Արուսեան մահտեսի Պետ-

րոսին աղ ճեղքէ և 1 ժէս հագուեցուց , ըստ (Գոյժոյ ժէն-եւոր) . հաստատեց կարգ և կանոնները , ելաւ քաղաքէն 4 ժամ եկաւ Սատի գիւղ :

Սատի գիւղ 150 տուներ . մէկ եկեղեցի . Հրաշագործ Ս . Խաչ . 4 քահանայ . Տ . Ենովք , Տ . Գասպար , Տ . Յակոբ . Ոսկէս՝ մահտեսի Սարգիս . մահտեսի Պօղոս եայլն : Բացաւ հոս վարժարան , Տ . Յակոբը դրաւ վարժապետ . տուաւ 120 կտոր գիրք . և քերական ձրիաբար . և ելաւ ասկէ , 10 ժամ հեռի եկաւ Սիլիվան . 1853 Յունուար . 4 Փէ-րան գիւղը Ոսկէս՝ Սրգէին տունը իջևանեցաւ . որ Սիլ-վանցիք Հայերէն չեն՝ գիտեր : Տէս 24 . Թղթահամարը :

Սիլիվանի մէջ մէկը երկու կին բերած էր և երկիրը ե-ղած էր երկու կողմ . կէսը կ՚ըսէր բաժնուիլ , կէսը կը պըն-դեր հաստատ մնալ . որովհետև Յունաց Տ . Կոզման պը-սակած էր վերջին կինը :

Քանի որ Մկրտիչ վարդապետը չեր եկած Քիւրտիս-թան , ասոր վրայօք խռովութիւն մը չկար . Թեղագրուե-ցան Մշու և Տիյարպէքիրու , և այլ Վանօրէից վանահայ-րերէն , որ խռովութիւն մը ելլէ՝ բարեկարգութեան կա-նոնները չհաստատուի :

Արդարև շատ մեծ խռովութիւններ հանեցին , մինչև ան-գամ շատ միասներ քաշելով յիշեալ վարդապետը սաստիկ հիւանդանալով եկաւ Տիյարպէքիր 16 ժամ . Դեկտ՞ 14 :

Նա մասին համար շատ դրութիւններ ըրաւ Արքազան Պատրիարքին , ինչպէս որ հարկը կը պահանջէր , այնպէս գիր մը չխրկեց . որ կարգի դրուէր գործը :

Լման 3 ամիս մնաց Ս . Սարգիս եկեղեցին հիւանդու-թեամբ . որոյ բժիշկն էր Յոյն Խէմոստէնը . շատ ծախքեր և վնասներ ըլլալէն ետքը , ելաւ Տիյարպէքիրու եկաւ Քիւր-տիսթան . ուր որ վարժարաններ կար , 60 ժամ շրջելով աշ-

քէ անցունելով , եկաւ նստաւ Առնիպրիղ վանքը · 1854 · Ապրիլ 30 ·

Երկու ամիս մնաց այս վանքին մէջ հոգևոր և մարմնաւոր գործքերուն նայեցաւ · Խարզանու և Սասունու վանահայրերը եկան քովը · կարգ և կանոնները ընդունելով գնացին ։

Նոյն տարին , 32 ժամ զանազան նեղութեամբ եկաւ սուրբ Յովհաննէս վանքը · և վարժարանը բացաւ · Քիւրմէյտացի տիրացու Առաքելը վարժապետ դրաւ · կարգ և կանոնները կը շարունակուէր , իսկ Ռուսիոյ պատերազմին լուրերը որ հռչակուեցաւ Քիւրտիստան , ուստի Պօթանի մէջ Եզդիշէր Բէյ-ը ապստամբեցաւ · շատ զօրքերով կը շրջէր յափշտակութեան , և աւերութեան երկրին ։

Մկրտիչ վարդապետին բարեկարգութեան հակառակ-ները օրը եկաւ · լոյս մը երեցաւ իրենց · ուստի սկսան Մշոյ գէշութիւնները դուրս գալու · վերջապէս Մշոյ Առաքել վարդապետը և իրեն թիկնապահները գնացին Գոյմագամին քով զանազան ստութիւններ ըրին , երբոր մարա-ֆայի կայնեցան , բոլորն ալ ամօթով եղան ։

Վերադարձաւ եկաւ վանքը նստեցաւ , սկսաւ խորհիլ ու ինքնիրեն ըսել · „Էյ Խնդրանէ որ կ'ընես · տանէ մէկ աշխա-րհէմ տանց Լուսաւորչեան համար · տանէ ղանազան քինաներու ցնեղ կը հասցունեն , ով բարակեան է ,, ։

Որչափ որ տանջանք կ'ըսէր , բայց իրեն խիղճը թող չէր տար , որ աղքատ ժողովուրդը աս տգէտներու ձեռքին ներքև ձգել իբրև գերի ։

Վերջապէս սկսաւ երկնքէն ձիւնը թափթփիլ , ձմեռը իրեն զօրքերով կը պատէր Մշու ահագին լեռները և ձո-րերը · վեց ամիս պայմանաւ ։ Այան որոյ Մկրտիչ վար-դապետի հակառակորդներու կողմէն երկնահաս ձիւնը կ'ը-սէր · —Եկե՛ր եկե՛ր գնա՛ , քանի որ ծերունին ձմեռ չէ նըս-

1855 · Թ. Րծէլ ասարք Թ. ումայ Զանէք Նրաշէնէր ։

---

տեր դրանդ առջև ։

Շատ վնասներ քաշելով եկաւ վանքը, Խաղեշով եկաւ Սղերտ քաղաքը, 39 ժամ հեռի ։

Ետ ենդն ալ Բիթիսը դէշանալով շատ նեղութիւններ կար. ինքը յորդորեց մահտեսի Աստուածատուր վարժապետը, որ շարունակէ տղայոց դաստիարակութիւնը ։

## ԳԼ. Ժ.

Եղաւ ինքը ասկէ, ուղղակի եկաւ 13 ժամով Թորճիլ կոչուած Ս. Թովմաս Առաքելոյ վանքը քովը նստաւ ։

Ետ Եկեղեցին Ս. Թովմայ Առաքելոյ անուամբ կառուցեալ, յառաջմանէ 800 տուն առ եկեղեցւոյ շրջապատը եղած կը լինի. երբոր Հայերս կը շինեն. առ տեղի բնակիչները հոն կերթայ. այս տեղս կը մնայ աւերակ ։

Իսկ այս եկեղեցւոյ մէջ շատ յայտնի հրաշքներ ըլլալուն համար՝ բոլոր Մահմետական քիւրտերն. ուխտի կը բերեն (մատաղ) կ'ընեն, և ինչ հիւանդ որ երեկոյին եկեղեցւոյ մէջ մնայ, առաւօտուն ողջ կ'ելլէ ։

Վասն որոյ՝ այս եկեղեցւոյ շրջապատը ոչ ոք գէշութեամբ կարէ մերձենալ. ուստի ապահով տեղ մը ըլլալուն համար՝ եկաւ Մկրտիչ վարդապետը առ տեղս, վարժարանի ձեռով քանի՝ սենեակ շինեց, և նստաւ 1855 · Մարտ 20 ։

Շատ ծառեր և այգի տնկել տուաւ, առաջան (հանդաղ) շինել տուաւ, բոլոր ունեցածը ատոր համար ծախս ըրաւ և Քիւրտերուն օր քան զօր կը գէշանար. Վանահայրերը՝ և Մշու և Տիարպէքիրու կղերներն ալ մեծ ուրախութիւն մը կ'զգային իրենց սրտին մէջ. կանոնները չհաստատուելու վրայօք ։

1856 · Ապրիլ · Աշտիշատ դէմ բանուեցաւ Քիւրտիս

1856 · [illegible]

---

թան, կտոր մը խաղաղացաւ, ելաւ դարձեալ 80 ժամշըր-ջան մը ըրաւ, եւ վիճակները · Սղերտ, Խարզան, Սասուն · եայլն :

Վարժարաններուն նայեցաւ և այցելութիւն ըրաւ, եկաւ արքունի զօրաց համար Երզրում շինէ խրկելու աշխատեցաւ · և Բիւրոտիստանու ժողովրդոց խնամք կըտանէր կերպով մը ·

Սղերտու Իսրայէլ խղճալի տղային փափագը տեսնելով տուաւ իրեն յանձնարարական գիր · յղեց Պօլիս Պատրիքարան · որ Ս · փրկիչ նստի · ուսումն սորվի, և նստաւ չորս տարի, եկաւ Սղերտ 1860 և նստաւ մահտեսի Աստուածատուրի տեղն վարժապետ · և մահտեսի Աստուածատուրը գնաց Պոեհ և այն տեղին եղաւ վարժապետ :

Այս միջոցին Հազրոյի մահտեսի Պապալը շատ գէշութիւն և հարստահարութիւնն ընելուն համար երկրացիք միաբան եկան Յամիթ, զինքը արգիլեցին իշխանութեան հրամանաւ · Ազգային գործերուն ձեռնամուխ ըլլալէն ·

1857 · Մարտ 20 · եւ շրջանը կատարեց 150 ժամ ճամբորդութեամբ · եկաւ Թորճիլ, և անկէց Յամիթ Պօլ-բեցւոց համար ծանր աշխատութիւններ կրեց, վասն [illegible] գէշութեան · որ ատ գէշութիւնն ալ վերցնել տուաւ :

Այս միջոցին Հազրոյի մահտեսի Պապալը դարձեալ երկրացւոց գէշութիւն ընելուն համար բռնեցին ([illegible]) ըրին :

[illegible] աղքատ ժողովրդոց 16 հազար ղուրուշը Յակոբ եպիսկոպոսը իրեն կուսակիցներուն զոհ ընելուն համար, շատ ժողովուրդ Բրոտեստանդ և Կաթոլիկ պիտի ըլլային, վերջը կերպով մը Յունայ յետին աղքատ 24 տուն ժողովրդոց եկեղեցին նստիլ, Պօլիս իմացուները յարմար

1858։ Մկրտիչ վարդապետը, Սեպտ—Մահացաւ սուրբ Յակոբ Եկեղեցին Քարոզիչ կ'ըլլայ։

---

դատեց դատողը, վասն որոյ գնացին Յունաց եկեղեցին նստեցան. գրեցին Պօլիս, որ իրենց ցաւերուն դարման մը ըլլուի, մինչև հիմայ կ'ըլլուի։

Դարձեալ 158 ժամ շրջան մը ըրաւ Բիւրտիսթան և եկաւ Տէյարպէքիր, և տեսաւ որ քաղաքին վարդապետը հանգիստ չկենար, ուստի ելաւ եկաւ 160 ժամ հեռի Տրապզոնով Պօլիս. 1858, Սեպտեմբեր. այս վերջերորդ գալն է ի Պօլիս։

ԳԼ. Ժ.

Իջաւ Զաւախոյ [illegible] Խաչ. Հաճի Օհան աղային և Հէյ-նեցի Կարապետի օտան. ատ միջոցին Յակոբ պատրիարքը հրաժարեցաւ, Գէորգ սրբազան արքեպիսկոպոսը եղաւ Պատրիարք։

Յիշեալ սրբազան պատրիարքը, Մկրտիչ վարդապետին տուաւ եկեղեցի մը. որ երթայ ժամարարութիւն ընէ. որ էր Սամաթիոյ Եկեղեցւոյն. Ս. Յակոբ Նորաշէն եկեղեցին. որ ծանր պարտքի ներքև կը ճնշէր։

Ունէր 80 տուն Սամաթիոյ աղքատ ժողովուրդ, և յետին խղճութեան մէջ կը տառապէր, սկսաւ այս տեղը քարոզութիւն ընել ամէն Կիրակի. առաւօտ և երեկոյ կը շարունակէր քարոզը. ուստի շատ մը ժողովուրդ սկսաւ գալ, քարոզ մտիկ ընելու և խաչահանգիստ տեսնելու. այնպէս եղաւ ատ եկեղեցին որ, ամէն Հինգշաբթի երեկոյին շատ մը ցաւագարներ կուգային եկեղեցւոյ մէջ կը կենային, ժամ 1 էն մինչև 4 հսկում կ'ընէր քարոզ կուտար։

Առաւօտուն Ուրբաթ. Ս. Պատարագը կը մատուցանէր և խաչահանգիստը կ'ընէր, մինչև երեկոյ ժամ 11ին

հաչիւ թէ կը հանդստանար ։

Ամէն Սերբաթ օր վարժարանէն տղայք արձակ էին, որովհետեւ Սահմանականաց բազմութիւնը այն տեղ կը գու- մարուէր, հարիւրաւոր այր եւ կանայք, կարդացողք, գո- րապէտք, եայլն եայլն ։

Քանմէն արձակուելէն ետքը՝ կ՚ելլէր վարժարանը ինչ- քան ուխտաւորներ կային, ամէնքն ալ կարգաւ կը շարէր եւ կը նստեցունէր, եւ ապա համառօտ Բժշկ մը կուտար հի- ւանդներուն վրայօք · որ հաւատով յուսացողը յԱստուծոյ պիտի առնէ բժշկութիւն · ''Ոչ խնդրէ առնու հաստով,, ։

ՔԱՐՈԶ ԱՌ ՑԱԽԱԳԱՐՍՆ

''Դոռ Քէլէսէ Մայր Եսքոնտ Էսի Էլէ Բոնըտըըդըլ Երմէնի Թալէրըն Ֆէթիէրի Էլէսն տասս զքսնտաճսք, վէ Նամաղ Եսրէնէճէք Դէյրոսալսն տըըր,, ։

— Սիզ էհլի Իսլամ, Պէյ վէ Աղալար վէ Սուլթան հա- նըմլար, Նիչին թէշրիֆ էյլէմիշսինիզ, շուքրի Ալլահ Աղիմ շանըն լութֆի քէրէմին նիհայէթ իլա, էմրաղլը հասթէլէրէ շիֆալէր օլուտորկընի Սիզ տուտի պիրէր թարըլու, կէրէք աղ՝ վէ կէ- րէք չօգ, էմրաղլարա կիրիֆթար օլտըկընըզտան, պիր շիֆայէ մամուլ. էտէրէք թէշրիֆ էթմիշսինիզ ։ —

— Փէք ալա · հօշ կէլմիշսինիզ, Ինշալլահօ՛ւ Թաալէ ճանը կէօնիւլտէն վէ տէրունի տիլտէն տուա էտէն մուրա- տընի ալըր Իապպիտէն ։ Սէրչի՛ շիֆա պուլաճագսընըզ · ամմա պիր մուլհազէ էտէլըմ քի, Ալլահ աղիմ շանըն հազրէթլէրի պէնի ինսանի պի տէրտ վէ պի իմրազ եարատմըյըտը, միւ- ախարան պիր թագըմ տէրտ վէ իմրազլար հարտա՞ն, հա- սըլ օլուպ ինսանլարի րահաթսըզ էյլէտի ։ —

''Ոչ սերմն բայց սերմանեցեր յագարակին քում · այսինքն՝

1858· Մարդկանց մեղաց համար զանազան հիւանդութիւններ կ'ըլլեն·

---

('ի Դրախտին)· արդ' ուստի՞ ունիցի որոմն,,· Մատ· ԺԳ· 27։
Պու սուվալէ ճէվապ վէրիյօրլար ինէք տիլտէն ճումլէ փէյղամպէրլէր, քի պու տէրտ վէ էմրազլէր պէնի ինսանլէրըն նօգսանութի իչուն թային օլունտու· նասըլ քի՛ Տաւիթ փէյղամպէր տէր· "Յանդիմանութեամբ վասն մեղաց խրատեցեր զմարդ, և մաշեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա։ Սաղ· ԼԸ· 12·

Օհրա գատէ վէ պէլա կիւնահքեարլարըն պաշընտան էքսիք օլմըյէճէքտիր· "Դարձցին ցաւք 'ի գլուխ նորա, և կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց,,· Սաղ· Է· 10· Տէյիմտի՛ հէր քէս քէնտի քէնտինի խօգլիյէրէք միւլհաղէ էտուպ տուշունսըն քի· քէնտինի պիլէրէք պու անէ տէկին Րապպանըն հանկի՛ էմրինէ գարշը միւղայիր հարէքէթտէ պուլունմուշ, օնուն իչին թօվպայ էտէրէք, վա'տ ու նիյէթ էյլէսին, քի պիր տախի ó մագուլա միւղայիր հարէքէթլէրտէ պուլունմայաճագընա, քի Ալլահ ազիմ շան հազրէթլէրի մէրհամէթ էտուպ պրագըն օնուն թագսիրաթընի,

Տէյիմտի՛ ճիւմլէնըզ տէրունի սաֆ օլարագ, նիյէթլընըզի Րապպանըն ինտընտէ հազը էյլէյին, քի պէն ճիլայի կիւնահքեար, սիզ իսէ պէրապէր, տէրունի տիլտէն, տօվա իլէ վէ ճանի կօնիւլտէն Յիսուսի Քրիստոսի իւզէրլէրինըզէ գըրիա'թ էտէրէք, (նամազ վէ նիյազ) էտուպ կիւնահլարըմըզի աֆ էյլէսին, ամին· վէ հէր քէսըն էմրազնի քէնտուսընտէն պէր թարաֆ օլարագ, շիֆալէր պուլաճագընըզ, թամ իհթիգաթ իլէ· "Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա և կեցցէ,,· Մարկ· Ե· 31·

Այս համառօտ քարոզը տալէն ետքը՝ կ'սկսէր սուրբ Աւետարանը կարդալ և խաչահանգիստ ընել, և ապա կ'ըսէր· "Ե՛րթ որպէս հաւատացեր եղիցի քեզ, հաւատք քո կեցուցին զքեզ,,· Մարկ· Ժ· 52· Կիթ իհթըգաթընէ կէօրէ սաղալտըն: Արդարև միւս շաբաթուն շատերը կուգային

շնորհակալութեան · թէ՛ մեք բժշկուեցանք : Ինչպէս որ տասը բորոտը սրբուեցան, անոնցմէ մէկը դարձաւ շնորհակալ եղաւ · ինչպէս որ կ'ըսէ : " Մի՛ ոմն ՚ի նոցանէ իբրեւ ետես եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն ՚ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած ,, · Ղուկ · ԺԷ · 15 : Նոյնպէս ատոնք ալ յայտնի գոհութիւն կուտային Աստուծոյ · թէ՛ բժշկուեցաք:

Թո՛ղ միւս Քրիստոնեայ ազգերը, և մանաւանդ Հռոմէականները, որն որ՝ խուռն բազմութեամբ ժողովրդին հետ խառն կայնած բժշկութեան անունելով քարոզին մինչ կ'ըսէին :

### ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հիմա պէտի մտածենք, բժշկութիւն ի՞նչպէս կըլլայ · ամենք բոլոր Քրիստոնէից հաւատացելոց երկրպագութեան վրայօք · Այսան որոյ յայտնի կ'ըսեմ · եթէ Քրիստոնեայ ես · և Ս · Աւետարանը կը հաւատաս, մտի՛կ ըրէ որ խօսիմ · քանզի մեր խօսքը Աւետարանը ընդունող տարակուսանաց մէջ մնացողներուն համար է · և ո՛չ թէ միանգամ անհաւատներուն : Սիրելի՛ն լուարուք :

Ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զցաւս և զամենայն հիւանդութիւնս · Մատ · Ժ · 1 : Զհիւանդս բժշկեցէ՛ք, զբորոտս սրբեցէ՛ք, զդեւս հանէ՛ք, ձրի առէք, և ձրի տուք · 8 :

Ըստ հրամանը որ տրուեցաւ Առաքելոց, անոնք ալ սկսան բժշկել, Տե՛ս Գործոց · Ե · ԳԼ · 16 : բերէին զհիւանդս և զնեղեալս այսոց պղծոց, որք և բժշկէին ամենեքեան:

Տե՛ս Պօղոս Առաքեալ ի՛նչ կ'ըսէ · " Ումեմն ՚ի Հոգւոյն տուեալէ բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ · այլում շնորհս բժշկութեանց նովին Հոգւով․ Ա · Կորն · ԺԲ · 8 :

## 1858. Հաւատքին զօրութիւնը շատ հիւանդներ կը բժշկէր ։

Ասոր համար Հրէից չար քահանայները՝ և նախանձ կարդացողները և տաճարի պաշտօնեայ իշխանները կը դիմէին Առաքելոց վրան, և կը բռնէին բանտը կը դնէին ։ Գործ. Դ. 1։

Վասն որոյ Պետրոս Առաքեալ կըսէր. "Եթէ [illegible] այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով բժշկեցաւ,,. Գործ. Դ. 9։

Քանի՛ որ Հոգին կայ, ամենայն բան հաւատով կը կատարի. Տես ինչ կ'ըսէ Յիսուս ։ "Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, [illegible] լերինդ այդմիկ փոխեաց աստի և անդր փոխեսցի, և ոչինչ անհնարին լինիցի ձեզ. Մատ. ժէ. 19։

Վասն որոյ Եսայի մարգարէն կ'ըսէ քեզի. "Հայեա՛ց 'ի [illegible] բանը հաւատքին քովն է, հաւատք եղած տեղը Քրիստոս ինքը չերթալով մինակ բանիւ ալ բժշկուեցաւ հիւանդը ։ Տես ինչ կ'ըսէ հարիւրապետը Յիսուսին. "Տէր չեմ բաւական ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա՛ բանիւ և բժշկեսցի ծառայն իմ,,. Մինչև անգամ Քրիստոս զարմացաւ ատոր կատարեալ հաւատքին վրայ ու ըսաւ ։ "Եւ ոչ Յիսրայէլ այսչափ հաւատս գտի երբէք,, վասն որոյ ըսաւ. "Երթ որպէս հաւատացերդ եղիցի քեզ, և բժշկեցաւ ծառայն նորա յայնմ ժամու,,. Մատ. Ը. 15։

Այրոս Իշխանին ըսաւ. "Մի՛ երկնչիր. Բայց միայն հաւատա՛ և կեցցէ՛,, Ղուկ. Ը. 50 ։ Եւ տեռատես կնոջն ըսաւ. "Քաջալերեա՛ց դուստր. հաւատք քո կեցուցին զքեզ. Երթ 'ի խաղաղութիւն,,. Ղուկ. Ը. 48։

Արդարև շատ տեղուանք, և շատ հիւանդանոցներու մէջ բժշկութիւններ կրնայ ըլլալ Յիսուսի անուամբ. եթէ հիւանդին՝ կամ հիւանդին տիրոջ, հաւատքը հարիւրապետի Այրոս Իշխանի, տեռատես կնոջ հաւատքին նման հաւատք ըլլայ նէ՝, ինչպէս որ Յիսուս կ'ըսէ. "Իսկ Որդի մարդոյ եկեալ գտանիցէ արդեօք հաւատս յերկրի.,, Ղուկ. ժԸ. 8։ Ա-

1858. Թերահաւատները մեր 'ղեկտամէն Աստուծոյ շնորհացը հաստատել կը մնէ բժշկութիւն։

---

ախկայ ըսելէն ետքը, տես ատ Յիսուսի բերած օրինակն ալ՝ որ ըսաւ. "Բազում բորոտք էին յիսրայէլի առ Եղիսէիւ Մարգարէիւ, և ո՛չ ոք 'ի նոցանէ սրբեցաւ, բայց միա՛յն Նէեման Ասորի. Ղուկ. Դ. 27.

Ուրեմն Թերահաւատ Քրիստոնեայները որ փորձելով Աստուծոյ հզօր կարողութիւնը, և տուած իշխանութիւնը կը տկարանայ հաւատալու. վասն որոյ արժանի չեն ըլլալ Աստուծոյ զօրութիւնը տեսնելու։

"Եւ ո՛չ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա,, Մատթ. ԺԳ. 58. Քանզի կ'ըսէին թերեհաւատութեամբ. "Բժիշկ բժշկեա՛ զանձն քո. որչափ լուաք զոր արարեր՝ 'ի Կափառնայում. արա՛ և աստ 'ի քում գաւառի,, Ղուկ. Դ. 23. Տես ատ մարդը ի՛նչ կ'ըսէ Յիսուսին. "Մատուցի զնա աշակերտացդ քո, և ո՛չ կարացին բժշկել զնա,, Հիմայ տես անհաւատ հիւանդի տիրոջն ի՛նչ կ'ըսէ. "Ո՜վ ազգ անհաւատ և թիւր՝ Երբոր աշակերտները հարցուն Յիսուսին թէ՝ — Մենք ինչու չկրցանք հանել. — պատասխանեց, "Վասն թերահաւատութեան ձերոյ ո՛չ կարացէք հանել զնա,, Մատթ. ԺԷ. 16.

Ահա՛ յայտնի եղաւ որ երկու կողմանց, այսինքն՝ հիւանդին և աղօթող քահանային հաւատքը կատարեալ և ջերմ պէտք է. տես Յակոբոս ի՛նչ կ'ըսէ. "Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ կոչեսցէ զերիցունս . . . և արասցեն 'ի վերայ նորա աղօթս . . . և աղօթք հաւատովք փրկեսցեն զաշխատեալն և յարուսցէ զնա Տէր. և եթէ մեղս իցէ գործեալ, թողցի նմա,, Յակոբ. Ե. 19.

Տես աղօթքը քահանայն պիտի ընէ. բայց յարուսցէ զնա Տէր կ'ըսէ. և ո՛չ թէ Քահանայն և վարդապետը։

Ահա՛ հաւատացեալ անձի մը համար այսքան վկայութիւն հերիք է. թէ որ անհաւատ է՝ Աստուածաշունչն գիր-

1860 · [illegible]

---

քը անգամ արևու ճառագայթներով աչքին մէջ բերելով ձգես, ինքը աչքը կը գոցէ՝ և երեսն ալ անդին կը դարձունէ · Ճշմարտութեան լոյսին չի նայիր, " [illegible] ,, · Յով · Գ · 19 · " [illegible] ,, ·

Ուրեմն · թէ՛ [illegible] Ս · Յակոբ, և թէ [illegible] Հրեշտակապետ եկեղեցւոյ մէջ յիշեալ վարդապետի և եկեղեցւոյ աղօթիւքը, Տէրը կըբժշկէր կատարեալ հաւատացեալները որ կրաւ էր, փնտռողը կրնայ գտնալ բժշկեալները, ինչպէս որ Հրեայք 'ի [illegible] յետ բժշկութեան գտան, և կը հարցունէին · թէ՝ " [illegible] ,, · Յով · Թ · 24 ։

Որքան Մկրտիչ վարդապետը իրեն վարդապետական պաշտօնը կը կատարէր · որ քան զօր այնքան ալ թշնամիները կը շատնային՝ և զանազան որոգայթներ կը լարէին ։

" [illegible] ,, Սաղմ · Ժ · 3 ·

Իսկ Մկրտիչ վարդապետը իրեն հոգևոր պաշտօնը կատարելէն ետքը [illegible] խղճալի տղէտ մանկանց համար՝ որ Հայերէն չեն գիտեր · անոնց համար [illegible] շարադրեց, և անկէց ետքը [illegible] գիրքը յօրինեց · որ [illegible] ետքը [illegible] գիրքը Վարժարաններուն մէջը դաս պիտոր տրուէր ։

ՈՀ ։

Նա գիրքը պիտի սորվեցներ անոնց երկու տարուան ժամանակին մէջ՝ [illegible], [illegible], [illegible] ։ Նա գրքին համար տասը հազար ղուրուշ խոստացաւ

**1860 · Ննջեցելոց անունը հոգին տալէն հետը, 2000 օրինակ գրքին ճակատը գրել:**

---

Այվազեան գերապատիւ Յովհաննէս աղայն տպուելուն համար՝ բայց չկատարեցաւ, դրամը չվճարուեցաւ, գիրքն ալ անտիպ քանտին մէջ մնաց:

Բոլոր ազգերն պատմեալ 'ի հող
Գործն Հայոց յիշատակող:

Այս գիրքը մէկ էջը Հայերէն՝ և միւս էջը Փէրսերէն գրուած, որոյ բովանդակութիւնը Քէօրսերէն քերականի վերջը գրուած կայ: Աւգուստ կրնայ տեսնալ Ս. Փրկիչ Տպարանին մէջ հազար օրինակ տպուած անոր յառաջաբանութեան մէջն ալ:

Շատ ննջեցեալի ժառանգները՝ իրենց հօր և մօր, կամ եղբօր և քրոջ, կամ զաւկի, և այլն. սրտերնուն դառն կսկիծը թեթևցնելու համար՝ շատ չափազանց ծախքեր կ'ընեն ննջեցեալի յուղարկաւորութեան, գերեզմանի շքեղութեան, կարծեմ թէ այնքան ուզածնուն չափ սրտերնուն կսկիծը չի մարեր, որքան որ յետին աղքատ կարգաւորաց և աշխարհականաց ողորմութիւն ընեն. և մանաւանդ այդպիսի հարկաւոր գրքեր, որ կայ մութ արկղին մէջ, և կսպասէ բարեմիտ Նազարեարի մը, որ իրեն ննջեցեալին անունը, և կամ ողջերուն 2000 օրինակ գրքին ճակատը ոսկեգրով գրուած միլիոնաւոր մարդկանց ձեռք անցնելով՝ զանազան ողորմութիւններ և օրհնութիւններ իրենց համար ըլլայ:

Ահա ահ [illegible] [illegible] տասն երկու հազար ղրուշով կը տպուի, ով որ ուզէ հանել, բոլոր աշխարհին ցույց տալ անմահացունել. թող ձայն տայ Տիգրանեան: Մը-կրտիչ վարդապետին: Ձեռագիրը պատրաստ է, 2000 օրինակ տպելու. անիկայ այնպիսի գիրք մ'է՝ որ ամէն մարդու պիտի վայելէ կարդալու. քանզի իրեն քարոզը՝ մարդ-

կութեան, Քրիստոնէութեան, և Ազգութեան. ինչ ըլլալը յայտնի ցոյց կուտայ:

Եւ այս աշխատութիւնները ընելով, քերականը տպել տուաւ. և ամէն շաբաթ կարգաւ սկսան եկեղեցիները տանել պատարագ մատուցանել, այսպէս կ'շարունակէր, և ժողովուրդը խուռն բազմութեամբ ետևէն կերթար:

Ինչպէս Պէյօղլու Ս. Երրորդութեան եկեղեցին. որ ամէն տեսակ Քրիստոնէից ազգերը եկած էին. նոյնպէս Խասգիւղի եկեղեցին՝ որ շատ ժողովրդեան հետ շատ մ'ալ Հրէայներ եկած էին, և այլն:

Ահա՛ այս բազմութիւնը Մկրտիչ վարդապետի ետևէն զատելու համար, քանի՛ անգամ Պատրիարքանը բերին զինքը, և պատուիրեցին որ հիւանդի վրայ մի՛ երթար և մ'աղօթեր. և ինքը այս պատուէրը պինդ բռնելով չէր երթար, վասն որոյ սկսաւ ժողովուրդը Պատրիարքարանէն յատուկ Թէզքէրէ բերել թէ՝ այս ինչ կամ այն ինչ տեղը երթաս Խաչահանգիստ ընես, և կամ Պատարագ. և այլն: Ահա՛ հարիւրի չափ ասանկ Թէզքէրէներ կայ Մկրտիչ վարդապետին քով:

Երբոր տեսան չ'ըլլար, Թէզքէրէի համար յատուկ գըրագիր մը պէտք է. վասն որոյ բերին զինքը Պատրիարքարանը բացարձակ կոնդակ մը տուին իրեն, որ ա՛լ Թէզքէրէ չուզէ. և ո՛ւր որ հրաւիրեն, համարձակ երթայ: Ահա՛ նոյն կոնդակն ալ Մկրտիչ վարդապետի քովն է:

Տեսան չ'ըլլար. որքան զօր Մկրտիչ վարդապետի ետևէն ժողովուրդը չի պակսիր. Քրիստոնեայներ, Մահմէտականներ. Հրէայներ. որ իրենց ջերմ հաւատքը՝ վարդապետի Խաչահանգիստ ըրած ժամանակը բժշկուած Աստուծոյ զօրութիւնը տեսած ըլլալովնին, վասն որոյ վարդապե-

1860 · Սուրբ Աւետարանովն մեր սրբութիւն բանալ ամօթ ա-դանէրուն դէմ։

---

ող ո՞ր Եկեղեցին երթար, բազմութիւնն ալ ետևէն կերթայ։

Բայց ոմանք մարդիկ, այն բազմութիւնը անոր ետևէն երթալը ամօթ կը սեպէր. և Խաչահանգստի աղօթքը ոչինչ բան մը կ'երևար աչուընուն, վասն որոյ ամօթ կը սեպէին իրենց օտար ազգաց առջև այն վարդապետի սուրբ Աւետարանով ըրած արարողութիւնը։ Որովհետև Քրիստոսի Աստուծոյ մերոյ սուրբ Աւետարանէն թերահաւատ ըլլալնուն պատճառաւ, Յիսուսի այն խօսքը իրենց միտքը չէին բերեր, որ կ'ըսէր ։ Մարկոս · Ը · 38 ։ '' Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և զբանս իմ, ի շնացող և ի մեղաւոր ազգիս յայսմիկ, և որդի մարդոյ յամօթ արասցէ զնա ,, · եայլն ։

Իսկ Մկրտիչ վարդապետը ո՛չ մէկին անվայել խօսքին կը նայէր, միշտ իրեն վարդապետութեան և քահանայութեան պաշտօնին վայելածը կ'ընէր, և սրբազան Պօղոս առաքելոյն բանը կ'ըսէր · Հռոմ · Ա · 16 · որ Հռոմայեցիներուն կը գրէր · '' Զի ո՛չ եթէ ամօթ ինչ համարիմ զԱւետարանն, զի զօրութիւն Աստուծոյ է, ի փրկութիւն հաւատացելոց · նախ՝ Հրէի և ապա Հեթանոսի ։ Ահա՛ այս Պօղոսը ըման կարդա՛. տե՛ս ինչպէս կը յարմարի այժմեան մարդիկներուն համար ։

Տե՛ս Պօղոս ինչ կ'ըսէ իրեն Տիմոթէոս աշակերտին, '' Զի ո՛չ ետ մեզ Աստուած հոգի վատութեան, այլ զօրութեան և սիրոյ զգաստութեան · մի՛ այսուհետև ամօթ համարեսցիս զվկայութիւն Տեառն մերոյ, և մի՛ զիս զկապեալ նորա · այլ չարչարեաց ընդ Աւետարանին ըստ զօրութեան Աստուծոյ ,, Բ· Տիմ Ա· 7։

Միրջապէս օր քան զօր վարդապետը կը տեսնար որ · առ նախանձու թշնամիները իրեն մինչև անգամ կենացը պիտի վնասեն, վասն որոյ ինքը զինքը սկսաւ խրախուսել, ըսելով '' Համբե՛ր Տեառն և քաջալերեա՛ց · զօրասցի՛ սիրտ քո և

1860. Արևելեան Բարեկարգ Ընկերութիւն կը հաստատուի :

---

համբե՛ր Տեառն,, · Սաղմ · ԻԶ · 14 ·

" Արեգակն ի տուէ մի՛ այրեսցէ, և մի՛ լուսին ի գիշերի Սաղմ · ՃԻ · 6 ·

" Դուք էք աղ երկրի, ապա թէ աղն անհամի, ի՞ւ յաղեսցի · · · Դուք էք լոյս աշխարհի · · · այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարի · և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է · Մատթ · Ե · 11 · " Երանի՜ է ձեզ, յորժամ նախատեսցեն զձեզ և հալածեսցեն և ասասցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ, ցնծասջի՛ք և ուրախ լերո՛ւք, զի վարձք ձեր բազում են յերկինս, զի այնպէս հալածեցին զմարգարէսն · (և զհայրապետսն) որք յառաջ քան զձեզ էին ,, Մատթ · Ե · 11 ·

Թշնամինները խորհեցան որ Պոլսոյ մէջ իրեն վնաս մը չեն կարող հասցնել, կամեցան որ Պոլսոյ ելլելէն ետքը վնասել · վասն որոյ տետրակի մը Յաւելուածին մէջ ուղղանուն չափ վարդապետի վրան ստորագրելով կը յղեն Խաւլու և Քիւրտիսթան · ուր որ Առաջնորդութիւն պիտի ընէր յիշեալ վարդապետը · որով վնասելու պատճառներ բռնելու համար ։

ՍՀ · բարեսիրտ վարդապետը՝ Քիւրտիսթան հաստատուած և հաստատուելի վարժարանները միշտ շարունակուելու նպաստի համար՝ Պոլսոյ մէջ " Բարեկարգութիւն Արևելեան ,, անունով ընկերութիւն մը հաստատեց · որ Հոգաբարձու ըլլան Քիւրտիսթանու, որոյ անդամները ներքոյ գրեալ Պատրիարքի անձինքներն էին ։

Նախագահ՝ Մօսէեան Միքայէլ աղայ ·

Գանձապետ՝ Գալէան Յարութիւն աղայ ·

Մանուէլեան Հաճի Գալուստ աղայ · Պէհլուլեան Ոհաննէս աղայ · Թընկըրեան Վարդան աղայ · Հաճեանց Հաճի աղայ · Բաբաղով Համբարձում աղայ · Մէհէնտիսեան Յովհաննէս աղայ · Իպրահիմեան Տիգրան աղայ · Սըմըճեան Յարութիւն աղայ ·

1860 · Վարժարաններու մէջ խաչհանգիստ ըրաւ · տղայոց ալ իրենց նորընտրած գրքերէն մէկ կամ երկուս կարդացին :

---

Կամացայեան Սարգիս աղայ · Մելիքեան Գրիգոր աղայ ·
Առաքելեան Գրիգոր աղայ · Ոսկերիչ Սիմոն աղայ :
Երկաթեան Մկրտիչ աղայ ·

Եւ դուրսէն ·

Կարապետեան Պօղոս էֆէնտին (յեգեզաւոր) :

Երբոր թշնամիները տեսան որ Մկրտիչ Վարդապետը իրեն գործը հաստատ հիման վրայ կը դնէ, իրենք ալ որոգայթներու գործիքները զօրացունելու հնարքները սկսան խորհիլ :

Թո՛ղ խորհին · « Զխորհուրդն զոր խորհի, խափանէ Տէր զի Աստուած ընդ մեզ է », Եսայ. Ը. 10 ·

Երբոր մօտեցաւ երթալը, շատ բարեսիրտ մեծ և փոքր Ամիրայք, Պէյք, Էֆէնտիք, Աղայներ · աղքատ և հարուստ՝ ընծայներ, դրամներ տուին յիշեալ վարդապետին · իրեն Թըր-ձնելու Ս. Թովմայ առաքելոյ վանից, և իրեն խարճագնացութեան համար :

Վարժարանները շրջեցաւ, խաչհանգիստ ըրաւ : Օրհնեալ տղայք, իրենց կարդացած գրքերը, թէ՛ հին և թէ՛ նոր բերին տուին վարդապետին · վերջապէս թէ՛ նոր տպած Քերականները, և թէ՛ ժողոված հին և նոր գրքերը, և թէ՛ իրեն վարդապետական գրքերը · բոլորն ալ գրքեր վերջը պիտի տեսնաք գումարը · և ուր դրուիլը :

Քանզի որ առնէ զծնողութիւնն քոյ առ լոյսն :

Նա միջոցիս, Աբէլեան պարոն Կիրակոս աղայն՝ որպէս թէ Նալու երկրին և Վանիցը աղէկութիւն մը ընեմ ըսելով, Նալուա Առաջնորդութեան պաշտօնն ալ վրան դնել տուաւ և 5000 ղուռուշի նշանագրամ ալ տուաւ վարդապետին որ ճամբայ ընելու իրեն պիտոյից համար :

Վարդապետը խորհեցաւ, Քիւրտիստան վեց Վանք :

**1861. Պարտէզպանը Չուխուր չէշմէ—խանը երթալը. և այն մէջ Անջէնք հետը Վէարտէսեան երթալը։**

---

երկուս ալ Գալուստ, կը լինի ութը. առանց կառավարութեան համար՝ Սահմանադրութեան տետրակին ալ հետը առաւ՝ որ հանգստութեամբ գործը կարգի դնէ։

Բայց դուն տե՛ս որ՝ Պատրիարքութեան և Քէհյայութեան ժողովոութեան տետրակի յաւելուածը պատրաստ է իրեն համար խրկուելու իրեն Առաջնորդական վիճակին մէջ. որ բոլոր ժողովրդոց աչքէն հանելու ու մխասուելու համար։

Ո՛հ. Ժողովուրդ. "Զի՞ արարի քեզ, և ի՞ս տրտմեցուցի զքեզ" Միք. Զ. Աշտալի վարդապետը այս տետրակի յաւելուածէն տեղեկութիւն մը չունենալով՝ մաքուր սրտով ճանապարհի պատրաստութիւնը սկսաւ տեսնել 1861. Մարտի 1։

Այս միջոցին Ակնէ—քաղցի Գրիգոր և Աւետիս երկու եղբարք, Պէյօղլուցի Տիգրան, Սամաթիացի Յարութիւն կամեցան և խնդրեցին որ Մկրտիչ վարդապետին հետ երթալ վանօրէից մէջ ամէն մէկը գործի մը դրուելու, և կամ վարդապետ ըլլալու։

Ու պարտիզպան Գալուստն ալ՝ իմացաւ որ ատոնք պիտի տանի վարդապետը, ինքն ալ եկաւ աղաչեց թէ՝ ես ալ կուգամ. քանզի տեղս պարտէզը ձեռքէս առին, կուգամ Գալուստ պարտիզպան կը լինիմ։

Որքան որ վարդապետը չուզեց տանելու, բայց Պէօզէնտճի Սիմօն աղայն մէջ մտնելով, բարեխօսեց որ տանի հետը. երբոր վարդապետը խօսք տուաւ տանելու, յանժամ վարդապետէն գաղտնի կ՛երթայ,

Չուխուր չէշմէ—խանը, կը գտնայ Գալուայ նոր եկող Մելէք Պետրոսը, և Փաշըկենց Աւետիսը, (որն որ Քաղաքական գործով եկած էին Պոլիս. և գործերը տեսնելով պիտի երթային Գալու)։

1861 · Բուլղար հոգւոյ վանքը , Տաճարներ կը կառուցանէ ; առջն ժամը գրէ ներքև կ'առնէ ։

---

Ատոնցմէ լաւմը Բալուայ պարտէզները խմնալով, կ'աղաչէ ատոնց՝ որպէս հաւանեցայ ձեր երկրին · ան ատեն կը գրեմ ձեզի · որպէս գալու ըլլայք · տունս հետերնիդ բերէք · անոնք ալ կ'ըսեն Թո՛ղ ըլլայ ։

Մկրտիչ վարդապետը տեսաւ գործերը որ պիտոր ըլլէր , իրեն հետ եղան ընկեր՝ Բալուեցի Տ · Խորէնը , պարտիզպան Պօղոսը , իրեն տղան · Գրիգոր և Աղիսիս · Տիգրան և Յարութիւն · ասոնց ծախսը հոգալով՝ մինչև Բալու տարաւ ։

## ԳԼ · ԺԸ

Մտուս չոգենաւը 1861 · Մարտի 26 · ելաւ Սամսօն · 133 ժամ հեռի՝ Ապրիլ 19 յաւուր Աւագ չորեքշաբթին մտաւ Բալու · և անկէց 3 ժամ հեռի՝ ելաւ Բաղցրահայեաց վանքը ։

Հազար տարուայ վանքը · ոչ էջաններու թեֆթէր ուներ , և ոչ եկամուտ · և ոչ ալ Կալուածոց ։ Ամենէն յառաջ ատ թեֆթէրները հաստատեց որք բոլոր վանից էջանները ներքըյ գրեալքն էր ։

[illegible] ԲԱԼՈՒԵՑ [illegible] · 1861 Ապրիլ 26 ·

Եկեղեցւոյ [illegible] ·

հատ

17 Շուրջառ ·
3 [illegible] թագ ·
2 Արծաթ գաւազան ·
3 [illegible] գաւազան ·
3 Արծաթ Սկիհ ·
2 [illegible] փոքր խաչ
1 Արծաթ [illegible] ·
1 Արծաթ [illegible] ·
1 Արծաթ փոքր Սկիհ Մե-ռոնի ·
1 Արծաթ գոգնոց ·
1 Արծաթ բուրվառ ·
1 Արծաթ սաղաւարթ ·
1 Արծաթ մական ·
3 [illegible] վակաս ·
2 [illegible] ·
3 [illegible] ·
2 Արծաթ քշոց ·
2 [illegible] քշոց ·
7 Արծաթեայ Աւետա-

հատ

3 Արծաթ Մասնատուփ ·
3 Մեծ վարագոյր ·
2 Փոքր վարագոյր ·
2 [illegible] Աւետարան ·
1 [illegible] ·
1 Յայսմաւուրք ·
2 [illegible] Շարական ·
1 Ժամագիրք ·
3 Արծաթ կանթեղ ·
3 Մեծ [illegible] ·
15 [illegible] շապիկ ·
6 Արծաթ Մասունք ·
1 [illegible] ·
8 [illegible] [illegible] 40 [illegible] Եկե-ղեցւոյ [illegible] ·
70 Մեծ փոքր արծաթ խաչ
1 [illegible] խաչ ·
21 [illegible] ·

1861 · Ապրիլ · վանից ելեալքը :

| | |
|---|---|
| 1 Հայր Մաշտոց · | Տէր Մեսրոպ · |
| 1 Փոքր Մաշտոց · | Տէր Գէորգ · |
| 3 Պաւազանագիրք · | Մ · Գրիգոր ժենց · |
| Օսքար վարդապետ · | Ռաքել Պասապին · և |
| Տէր Համբարձում · | այլն · որ և 15 կնքով |
| Տէր Պօղոս · | կնքել տուաւ · |

Արտաքին ելք :

| | |
|---|---|
| 11 Մեծ և փոքր պղինձ · | 5 Գառաչա մինկերէ · |
| 4 Լէյէն · | 4 Մաղա · |
| 4 Երգրըէ · | 1 Իաբէա · |
| 40 Թաւաքի մեծ և փոքր · | 11 Կտոր Տէորկերէ · |
| 156 Մեծ և փոքր սահան · | Բախըմ Հասէլը · |
| 16 Մանր թեփսի · | 60 Ընկողին · |
| 9 Մեծ և փոքր Քեփչիրէ · | 80 Տէօշէք · |
| 4 Սինի · մեծ և փոքր · | 102 Բարձ · |
| 2 Մանղալ · | 14 Խալի · |
| 5 Խեշթ · | 5 Փալաս · |
| 10 Ըսքուրայ · | 6 Կարպետ · |
| 18 Պաքաղ · | 1 Օօմբ · |
| 2 Սըրխայ · | 2 Երեսի բարձ |
| 2 Թաս · | 2 Երկանք · |
| 7 Պօշ խաշէ · | 1 Ղահվէ Բախըմ · |
| 5 Լէյէն · | 50 Կարաս · |
| 1 Հացի պատուկ , | 140 Կտոր գրքեր · |
| 6 Սինիլ · | 11 Մանգաղ · |
| 1 Շերէփ · | 6 Բահ · |
| 2 Սէտչէհ · | 2 Թէփէչէ · |

1861 · Ապրիլ Ծարեկարգում, Վանից Ծարեկարգութեանը

| | |
|---|---|
| 3 Ըշխշ · | 2 Խալըր · |
| 1 Սաճ ետ · [redacted] ' | 4 Պարան · |
| 1 Փոքր Լէյէն · | Անասուն |
| 1 Կեօղեօլի Լէյէն · | 14 Կով · |
| 2 Բախչա ըմղէկ, մեծ. փոքր · | 6 Մոզի · |
| 2 Թիւնճիւնէ Թաղար · | 15 Մաքի · |
| 2 Սեֆեր Թաս · | 20 Ոչխար · |
| 4 Մեծ և փոքր Թաս · | 2 Ընձուղ · |
| 5 Կուկում · | 2 Եկոխշ · |
| 15 Ղազան · մեծ և մանր · | |
| 12 Չամչալ · | |

Ասոնք տումար ըրաւ, և ապա սկսաւ վանից սենեակնե-րը լուսցընել, աւերակները շինել շինկել. և այլն։

Կեսկէն—ծաղուցէ Գրիգորը՝ Լազարեար, Տիգրանը՝ Մէմագրայեան Տպարանին գործակալ. պարտիզպան Գալուստը՝ պարտէզներուն, մաշտոցի Յօհաննէսը՝ Տերեւ. Զաքար վարդապետը՝ վեքիլ. Յակոբ վարդապետը վերակացու. Ռուբէնլ վարդապետը՝ ձան ցեղնող. Անդրէասը՝ վարժապետ. այս ամէնը կարգի դրաւ, Անդրէաս վարժապետին մէկ տարի վերարկու հագուեցուց, որ լաւ խնամք տանի Վարժարանին։

Եւ Ս. Խաչի վանից՝ Մանաճայր Մարտիրոս վարդապետը բերաւ. անոր ալ մէկ տարի վերարկու, և Ռուբէնլ վարդապետին մէկ ալլծա տուաւ իրենց, և երկու սնտուկ գիրք տալով՝ յղեց Բիւրտիսթան Ս. Կօնօնոս վանից վիճակը, որ է Խարզան. վարժարան բանալու։ 1861 Փետրուար։

**1861 Վերաբերութեանց նշխարք Բալու կուգան. եւ պատուով կը զետեղուին.**

---

Նոյն միջոցին պատրիարքական Օ.սյուսուր կ՚ուզէ գրել Պոլիս Սրբոյն Պետրոսին՝ թէ Վերադարձը ըլլայ տունս Հետըդ բեր եկեր, ամենայն ծախսը կուտամ. Այսպէս կը շարունակէ գրելը, ... փարթամութիւն չէ ... , եւ քերթողութեան ... խաստապայէն ... , որը Պօղոսը եւ Յովհաննէսը Տիրոջը, Վիկան սեպուհին, մէկ ործալ խաչով մոչտոց մը տուաւ սէր Պօղոսին, եւ փարթամանի հանդէր, տուաւ հինգ ձագմա, երեքնորեկ, մէկ կըտակարան, երկու աստուածաշունչ, վերաւ քերական. Նա մէկ չուհա փիլարկու մըն ալ Ճանաչին հագուեցուց. Դըրաւ ճամբու որ երթան վարժարանի հոգ տանին. Տիրանակներ ... գերագոյն Յովհաննէս աղայն Մինասեան, հետը եկած էր, հայնու սերրաֆ շաշանց Մանիւան աղան, եւ այնեու ...ս Սահակը.

Ի պատիւ յարգի Յովհաննէս աղային Մանիւանին եւ Սահակին մէյմէկ չուհայ փիլարկու հագուեցուց, եւ երեք սալթամալ Գանիէլին, Օհանին, Զիլֆոյին հագուեցուց ... աղային ալ աղօթից գիրք մը տուաւ ընծայ.

Հագրօյու խասապոյի մըլի Ղազարը որ երբեմն վարդապետին շատ ծառաներ հասուցած էր. ատ ալ երկրացոց աւելի հարստահարիչ ըլլալուն համար, բոլոր երկրացիք զինքը ատելած էին, ազգային եւ քաղաքական գործքերէն. Նոր համար գնացեր բողոքելմանը ըլլալու բողոքելմանց քարոզիչներ զինքը չեն ընդունած, սոսնկ յուսահատ կեցած մնացած ժամանակին, կ՚ըսէ որ Մըկրտիչ վարդապետը Բալու եկած է. խնդրյն եղաւ եկաւ բալուայ վանքը. Հազար մեղան մէկ չունչով կըսէր, եւ

Երբոր կ'ըսէր որ՝ այ դէշութիւն մէկու մը չ'ընելուն, աս ամբաստանելի երդումին հաստատելով վարդապետը, ըն-դունեց զինքը, պաշտպանիչը ըսաւ: Ինկէց ետքը՝ սկսաւ աղաչել վարդապետին թէ չնամիլ Ցամիթ էֆէնտուն 30 հազար ղուրուշ պարտքը ունի, զինքը նեղը դրած դրամը կուզէ, իրեն քանի մի օր անմիջապէս, կամ տեղաց մը դրամ ճարէ, աղէ, մինչեւ որ ինքը վճարէ:

Խոստացաւ ամէն ջանք թափել, եւ կրցածին չափ որ մէկ Աղայ մը հետ խօսեցաւ, անոնց ալ մէկ մէկ ալ կեր հաւանեցուց. ճամբու դրած, որ երկամ հարցը վարժա-րանը կերթայ գնած. Ղալաթը ինչ վարդապետին քով եւ չէր զատուէր անկէց. որ իրեն ցաւոյն ճարը ըսել կը խնդրէր.

Զրաճեան հաճի Թովմաս աղայն, եւ յունաց ազգապետ Պալի աղան, ասոնք ալ գալէն գնալէն ետքը, վարդապետը եկաւ բալու, հաստատեց Պոլսոյին քաղա-քական անդամները բոլորն ալ երդում ըրին որ գէշ գործ չ'ըրանեն. երդմնազանց չ'գտնուին որ չ'պատժուին.

Ամէն երկու ամիս եւ կէս մնաց աս տեղը եղած իրաւունքը. 3056 ղուրուշ եղաւ. եւ ծախքը 5929 ղու-րուշ. 2973 ղուրուշ վարդապետը իրեն քսակէն ծախս ըրաւ. աստի Ֆ-Քր-Խ Տէֆտէրը կայ, ազգային ժողո-վով կընքուած, ուզողը կրնայ յիշեալ բաբունեայն քով տեսնալ.

Աշխատ վանքէն եկաւ բալու որ պիտի քիւրտիս-թան երթար, խօսքուն Ջաքար վարդապետը եկաւ վարդա-պետին ըսաւ, թէ որ աս պօլսեցի Գ.ալուստը, եւ Գրի-գորը վանքը թողուս ես վաքիլ չեմ ըլլար, քանզի, եր-կուսը իրարու հետ ամէն օր կռիւ կընեն.

## 1861 Գալուստենը պօլիս մտնալը. Ուղևորներ ընտրել տալը.

Վարդապետն ալ ըսաւ. դուն վէքիլ ես. որն կուզես պահէ որը չես ուզեր ճամբայ տուր, աս խօսքին վերայ գնաց Ջաքար վարդապետը. Գալուստին ճամբայ տուաւ։ Ուստի վարդապետն ալ ճամբայ տուաւ, թէ գնայ պօլիս. ան ատեն Գալուստը շատ աղաչեց վարդապետին, թէ պօլսեցի խմին պահչէկս տէրը, Ահմէտ էֆէնտին տիէրպէքիր. ղատի եղած եկած է. անոր վերայ առնելիք ունիմ. գամ հետը դրամս առնեմ. անկէց կերթամ պօլիս. Բայց՝ ես քանի անգամ գրեցի որ տունս գայ, իսկ մէլիք Պետրոսը տակաւին պօլսոյ չելած, շուտով երթամ, թող չաամ՝ ուշելու ըսելով. եկաւ վարդապետին հետ տիէրպէքիր. 1861 յուլիս 10.

Իսկոյն ղատուժէն առաւ 700 ղուրուշ, վարդապետն ալ տուաւ քանի ղուրուշ, ան ատեն ալ մինասեան Մինաս աղան պօլիս կուգար, անոր թէսլիմ ըրաւ Գալուստին քով եղած ստակները, չ՚ըլլայ որ ճամբան թէլէֆ ընէ.

Ու պատուիրեց Մինաս աղային որ դրամը պօլիս երթած ատենը. տանի սամաթիայ, երկու իշխանի յառջեւ թէսլիմ ընէ Գալուստին, որ հէր քէշ իմանայ որ առանց դրամի չէ եկած.

Այսպէս ճամբաւ՟ դրաւ գնացին, վարդապետն ալ գնաց քիւրտիսթան բարեկարգելու.

Երբոր Գալուստը պօլիս կը մտնէ, անոր տուն ալ բաղուեցի մելիք Պետրոսին հետ, չորս աւուր պօլսոյ ելած կ՚ըլլնին ։ Բաղուեցիք կըսեն՝ Գալուստին թէ, անտոնդ տողաւէն ամառնայ ալ հասած կամ գնայ հասէր, կամ բօսթանջի մէր էրէ, որ ձէրթան։ Ինքը որքան որ միտք կընէ, կամ գրէ, կամ երթայ, իսկոյն Մկրտիչ վարդապետի, բերանը

քաղցր, սիրտը չար թշնամիները, կը համոզէն գալուստը ոչ գիր գրել եւ ոչ ինքը երթալ ։

Գալուստը կընեն դրախտի միջի Եւայի օձը, ի- րենք ալ կը մնան փորը, չար սրտերնուն եւ չար կամ- քերնին ինչպէս որ ուզեցանանկ զրուցնել տուին, ուր որ կամեցան ։ Ամենուն առջեւ մունետիկ մը (Թելլալ) ը- րին եւ Թող տուին պօլսոյ մեջ ։

Նու մելիք պետրոսըն ալ կուգայ բալու որ Գալուստը չգտնար, ուստի տունը կը տանի գիւ- ղը իրեն տանը մէջ կը պահէ. 1861 օգոստոս 18 ։ Հիմայ Նայինք Մկրտիչ վարդապետը ո՞ւր է. եւ ո՞ւր կը շրջի ։

ՊԼ․ ՃՄ

Ձիարպէքիրէն 12 ժամ հեռի Հայնի ղասապայն, որն որ տղայոց վարժարանը հաստատէր, եւ աղջըկանց հա- մար ալ բացաւ վարժարան մը եւ դրաւ վարժուհի ծերու- նի Եղիան ։ տուաւ 60 հատ քերական, 20 հատ շահնա- զարեան հեգ. 50 ղուրուշ ալ դրամ. ասա կարդաց կա- նոնները եւ ընդունեցին ։

Ասկէ ասկէ 9 ժամ եկաւ Հողքոյ վարժարանը բացեր, տիրացու չէին էր վարժապետը, ելաւ Թրձիլ վան- քը, սահմանադրութեան տետրակը կարդաց, կանոնները ընդունել տուաւ եւ կնքեցին. բոլոր ռէսներու մէկմէկ քերական ընծայ ըրաւ. 60 հատ ։ Ասկէ ասկէ 5 ժամ եկաւ մակարայեցւոյ վանքը, լծեցին, եւ գուլբեցին, եկան կարգ եւ կանոնը ընդունեցին. եւ կարապետ վարդապետին տուաւ չուհա վերարկու մը, եւ վանիցն ալ ասմա ժա- մացոյց մը ։

## 1861 Ամառ . Կեսարիոյ վարժարան եւ գիրք եւ ընծաներ են տրուեր ։

Նոյա ամէ 36 ժամով հեռու Ամառ քաղաքը , սեպտեմբեր 9 օրն շաբաթ ։ Յայտնայ գրիած Մարտիրոս վարդապետը եւ Եղիայի վարդապետը , երկու սրնտուկ գրքերը Մարտիրոս նորագոյն Վարդապետին սուտ ու փուճ որոտման է եկեղեց կրելով ձեռք , փոխեր , գնացեր են քալոր . Ոսկեր դիկեց սնտուկներ ընդուն բացաւ , գրքերը յանձնեց տիրոջը մաշտեոն Կինոսին , ով կոտու վարձարանի աղքատ տզայոց տուաւ 70 քերական 5 սաղմոս 5 գործոց , 4 Նարեկ 1 այբենարան մաշտոց ։

Հաստատեց աղջիկնց վարժարան ողորմելի Մարիամը դրաւ վարժուհի տուաւ 130 քերական , 20 շունազարեան հեգ , 10 շուրուշ դրամ . եւ այս վարժարաններուն կարգեց հոգաբարձու , մաշտեոսի ակէր Օհաննէս քահանայն , մաշտեոսի կարապետ , մաշտեոսի Օվէ , եւ մուսայէ ռուսոյն , առաջ 3 շուշա վերարկու եւ 1 խուռնի էնթարի հագուեցոյց . որ լաւ խնամք տանին վարժարաններուն ։ Եօլա տակէ 14 ժամ , հեռու ընեղեն բացու վարժարանը , ակէր մուրատի եկանը դրաւ վարժապետ , տուաւ 300 քերական , 50 շահնազարի հեգ . 10 սաղմոս , 5 Նարեկ , 2 քերականութիւն , 2 տարեկան , 1 ճաշոց , 2 տօնացոյց , 5 գործոց ։

Տէհ գիւղին , տուաւ 50 քերական . 20 հեգ , 2 Նարեկ , 4 սաղմոս , խոյրահամ մաշտեոսի Օհաննէս , խմրզա , եւ ղազօ , առանց մեկմեկ խուռթնի էնթարի հագուեցոյց որ սիրով ըլլան վարժարանին խնամք տանին ։

Պօղաղէ մաշտեոսի Պօղոսին տուաւ 30 քերական , հաւաքեց գիրենք որ երթան վարժարանը բանան , հագուեցոյց 2 խուռթնի էնթարի , Պօղոսին եւ կուլէին .

1861 · [illegible]

Հիզանու Տէր Օհանին տուաւ 50 հատ Քերական, 4 Սաղմոս, ղօք, ռէս Յարութիւնին և ոսկերիչ Սիմոնին տուաւ 5 Սաղմոս, 5 Գործոց, 2 Նարեկ, 100 Քերական, նորընծայ Տէր Խաչիկն ալ դրաւ վարժարան։

Ելաւ անկէց 30 ժամ եկաւ Սլիվան, դրաւ վարժարան Տէր Պաղարի Զաքարը տուաւ 60 Քերական և 1 գօտի մը ընծայ, Տէր Կարապետն ալ ըրաւ Թիկնապաշ, և [illegible] վերարկու հագուեցոյց ռէս Զալցին որ հող տանի վարժարանին։

Քինիաթ գիւղին՝ 1 Ճաշոց, 1 Շարական առենի, և 30 Քերական, ռէս Մըրքէին ալ մէկ վերարկու հագուեցոյց։

Ելաւ անկէ 10 ժամ եկաւ Խրձիլ, տուաւ վանից երկու մեծ խաչ արծաթեայ, 1 մանմատուփ արծաթ։ 1 Աւետարան արծաթ, 1 արծաթ Մաշտոց, 1 բուրվառ, 1 ձեռք զգեստ, 1 մեծ վարագոյր, 3 [illegible], 1 [illegible] մանկանց մոմ, 4 գօղնոց, 2 Սկիհի ծածկոց։

25 Քերական, 20 Հեգերէն, 3 Գործոց, 3 Նարեկ, 3 Սաղմոս, 1 Տօնացոյց, 1 Խորհրդատետր, 1 Ժամագիրք փոքր, 1 Ժամագիրք առենի, 1 Ճաշոց։ 160 հատ Քերական ալ հասարակ ասոր անոր բաժնեց։

Ելաւ անկէ 12 ժամ եկաւ [illegible], 1861 [illegible] 1. որ պիտի նստէր ձմեռանը այս տեղս [illegible] քաղաքական գործերուն համար բարեկարգութիւն մը ընել, և ժողով հաստատել. տակաւին այդ խորհրդեան կ՚զբաղէր, Բաղուայ յանկարծ Զաքար վարդապետը, Յակոբ [illegible] եկան [illegible]. Հետեւնին երկու [illegible], մէկ [illegible] կը հրաւիրէր վարդապետը դալ Բաղու միւս [illegible] դէպի Մուսխա կուզէր երթալ. օգնութիւն և տեղ խնդրե-

լու համար, և ժողովուրդը Ռուսիա գաղթեցնելու ։

Ասոր այս Տոհմերները վարդապետին քովը կեցած է, ուզողը կրնայ տեսնալ. անանկ մարդ ժողովուր շարներ որ ինքն գլխաւոր ժողովրդեան արիւնը ծծողներու մէկն է ։

Ինչ և իցէ՝ Մկրտիչ վարդապետը կը համոզէ զիրենք, Օշաքար վարդապետը կը մնայ Քէօրօլխճան. որպէս թէ վարժարաններուն հսկէ, և Սարաֆֆոր Յակոբը կ'երթայ Պոլիս կը հաշակէ թէ մեր բանը չյաջողեցաւ ։ և այլն ։

Ասոր վարդապետն ալ Տէր Ղատուրին հետ ելաւ, ահագին լեռները ձիւն և ձմեռ դառն նեղութեամբ 40 ժամ հեռի, եկաւ Պոլսոյ վանքը՝ 1861 Դեկտ., 20. Օրն Չորեքշաբթի ։

Շուտ մը գրեց Խարբերդու Կուսակալին, Զեյթունցիներու տուներու կէսը Հայոց վրայէն վերցուց, և 25 հազար ղուրուշ Մէճիտիէ օսկիին աւելի առնուած ըլլալով, գնաց Խարբերդ հրաման բերաւ ետ առնելու ։

Նոյն աս միջոցին վաթսուն մարդ եկան Զարսանճաքուտին զինքը սաստիկ ձիւն և ձմերան մէջ տարին փիրին, որոց Ալէյներու ծանր ծանր անտանելի գէշութիւնը թեթևցընելու համար ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Որովհետև վարդապետի համբաւէն տեղւոյն Պէյերը և Ալէյները շատ համարում ունէին վարդապետին վրայօք. որով շատ բարիք կրնար ըլլալ հասարակութեան. ինչպէս որ ըստ կարելի կերպին կը լինէր ։

Բայց ի՞նչ օգուտ. թէ փէրին, և թէ Պոլսոյ մէջը. քանի հատ մարմին անհոգի. սուտ անուն քրիստոնեայ Հայեր կան՝ որ իրենց մարմնաւոր փառելիք հոտած փորեր-

1862 · Անդամոյն ընդ մեր փերերը · և Ներսուբեան :

նու մանաւոր շահերուն համար խեղճ թշուառ հասարակ ազգաց ժողովուրդը գերի ըրած են իրենց · արիւննին կը ծծեն , որոց Աստուած կամ քաղց և կամ գողց տայ , ամէն :

Աստիսի մարմին անհոգի մարդիկներ · թող չկարծեն որ նա՛ կարողութիւն չունի զիրենք չարաչար պատժել տալու · Աստուծով զիրենք փոշւոյ նման կարող է հոսել տալու իրենց հարստահարիչ չար գործքերովը · բայց նորա ձեռքը կապած է Յիսուս այդու բանիւ թէ՝ "Թոյլ տուք և երկոցուն միանգամայն աճել մինչև ի հունձս : Տես Մատթ · ԺԳ · 15 :

Հիմայ նա ալ ատպէս կ՚ընէ , այնքան կը համբերէ մինչև դարձի գան · ապա թէ ոչ Օսմանեան արդար օրէնքներովը որ մը խղճալի ազգատներու իրաւունքը տեղը պիտի գանայ , և հարստահարիչները պիտի պատժուին :

Բայց նորա ճշմարտախօսութեան և արդարութեան համար քաշած նեղութեան փոխարէնը Աստուած կը վճարէ իրեն հարիւրապատիկ · և զնա հալածողներն ալ զանազան ցաւերով պատժեր , կը պատժէ , և պիտի պատժէ ալ ինչպէս որ շատերը տեսած ենք :

Բայց մեք պարտաւոր ենք ըսելու · " Տէր թո՛ղ դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն , ներեա յանցանաց նոցա , և դարձո՛ զնոսա ի լոյս ճանաչողութեան , և արժանի արա՛ ողորմութեան քում ,, :

Փերինու Աղայներուն հետ տեսութիւն ըրաւ · Հաճի Ապտէշ Աղային ժամացոյց մը տուաւ ընծայ · Հայոց Իշխանաց երկու վերարկու հագուեցուց · և 1 թօփ շալ ընծայ տուաւ իրենց և հաշտեցուց զիրենքի ոչ մի ինչ ընծայ ընդունելով Աղէշ աղայէն ամենայն վեհանձնութեամբ վերադարձաւ Բաղու 1862 փետրվար :

Թէպէտ Հաճի Աղէշ աղայն լաւ ջորի մը և ընծայներ պատրաստեց և բերաւ որ տայ , ինքը չընդունեց և չառաւ :

**1862** · Թուլուսայ և փերինոս Մոնժերալնոյ Պէյերու համարում վարդապետին վրայ։

---

Ինքը կ'աղաչէր ամբցունելով զՆոօջ տղայն և զմիւսնե-րը, Հայոց ազգին լաւ ըլլալու համար. անոնք ալ ընդու-նելով կը մեղմացնէին խստութիւննին, ինչպէս որ բոլոր փերնցիք գիտեն. և Պօլիս շատ կան. ուզողը փերնցոցմէ կրնայ իմանալ Մ'կրտիչ վարդապետի ջանքը՝ և Նոյներու գործը։

Նոյնպէս Թուլուսայ Պէյերը շատ մեծ համարում ունէ-ին յիշեալ վարդապետին վրայ. և մինչև ցայսօր ալ ունին։ Թէպէտ խելքը պակաս մարմին անհոգի ոմանք շահասէր Հայեր, Պէյերու առջև ազգին և անկլին վարդապետին ա-նունը կտրելու կ'աշխատէին, և մինչև հիմայ ալ կ'աշխա-տին. բայց ոչ ինչ և 'ի զուր։

Իսկ դէշ Հայերը ինչ կը հասկնան գէշութիւն ընելէն, ատ քանի ոչինչ Հայերը իրենց հարստահարութիւնը հա-մարձակ ընելու համար աղքատաց վրայ, Մ'կրտիչ վարդա-պետին վրայ Պօլսոյ Պատրիարքարանին սուտ ձեռքերով և գինեմոլ մարդերով աղաղակել սկսան. և Պատրիարքարանի Նախկին ժողովին մէկ երկու անդամներն ալ՝ անոնց սկսան ձայնակից ըլլալու զանազան պատճառներու համար. որ այս տեղս գրել արժան չեմ սեպեր թէ մեր վեհանձնութեան, և թէ վարդապետի խոհեմութեան։

## ԳԼ. ԺԳ

Եկաւ վանքը, տեսաւ որ վարժարանի տղայքը յետին խղճութեան մէջ, աղտոտ ուլտ անօթի, վրանին գլուխնին կտրտած. ոչ ուտելիք՝ ոչ հագնելիք՝ ոչ կարգ և ոչ կանոն. հարցաւ և քննեց, իմացաւ որ ատ գէշութիւնը Հաւաւու գիւղէն և Թուլուսայ մէջէն մէկ երկու մարդու կամեցողու-

1862 · Բոլոր 51 հազար դուրուշ ծախուց դրամը ·

---

Թեամբ Զաքար վարդապետը վանքը տակնուվրան ըրեր՝ ու խորհրդով ըլեր եկեր Տէյըրմէնտէրէ որ ինքը Վէրտախան մնայ քանի օր, մինչև Առաջնորդը երթայ Պոլիս, աս աւերումը տեսնալով՝ ձգէ վանքը ետ քաշուի, և այս Զաքար վարդապետը, և իրեն ընկերները առաջինին պէս բուկին առնել ծախել իրենց կամաց համաձայն ընկերներովը։

Իսկ Մկրտիչ վարդապետը երկար համբերել չըր հացով և պաղ ջրով ալ կեանքը պահել գիտէր. վասն որոյ սկսաւ վերստին կարգի մտնելու թէ վարժարանը, և թէ վանքը աշխատիլ։

Վասն որոյ վանքէն ելաւ Պոլիս. ընդհանուր ժողովքը հաւաքեց վանքի և վարժարանի խղճութիւնը իմացուց լըրութեան ազգին, անոնք ալ՝ վարդապետի սէրը և անխոնջ աշխատութիւնը տեսնալով ուզեցին որ մեծամեծ օգնութիւններ ընել բայց ինչ օգուտ շահասէրներու սիրտը կը վառէր, արգելքներ տալու ճամբան կը խորհէին. ինչ և իցէ Աստուած բարի տայ իրենց, թէև մարդկութենէ զրկուած են, Աստուծոյ արքայութենէ չզրկուին։

Հասարակութիւնը բերին 51 հազար դուրուշի հաշուեցուցակ մը տուին Մկրտիչ վարդապետին, որն որ վանից դրամն էր, ասոր անոր քով բաժնուած կեցած էր մեծերուն քով առանց տոկոսի, և աղքատաց քով տասը— տասներկուսէն տոկոսիւք, ո՜հ. Աստուած։

Տուածնուն հաշուեցուցակը այսպէս էր։

| | | | |
|---|---|---|---|
| 17650 | Մարդան վարժապետ։ | 41650 | |
| 14000 | Զաքար վարդապետ. | 04000 | Ոսկան վարդապե- |
| 10000 | Հավակցոյ քով | 05700 | տին քով Մարգ- |
| 41650 | | 51350 | տէր Յակոբ։ |

Օտաքար վարդապետը երբ կ'ըսէ Մկրտիչ վարդապետը գնացեր Զօր—ամնձօք · կարծեր որ իրեն մտաց խորհուրդը կատարուեր , շուտ մը սաստիկ ձմերան մէջ 42 ժամ հեռի կուգայ վանքը · որպէս թէ արտ փափագանացը հանելով կ'ըսէ , փառք քեզ Աստուած , որ զիս դժոխքէն ազատեցեր յարքայութիւն բերիր քիչ ժամանակի մէջ ատ ուրախութիւնը տրտմութեան կը փոխարկուի , երբոր կ'ըսէ , Մկրտիչ վարդապետը Բաղու · կ'աշխատի նորէն վանքը կարգի մէջ ձգելու ։

Ատ միջոցին Հավավ գիւղէն Մելիք Պետրոսը կուգայ Բաղու կը բողոքէ Առաջնորդի ներկայութեամբը բոլոր ժողովականներուն պարտիզպանի իրեն ըրած դէշութեանց վրայօքը · թէ ես Պօլսիքէն , ատ պարտիզպանը եկաւ Զօխօռ—նէյմ խանը մէջի շատ աղաչեց , որ ինքը գիր գըրած ատենը իրեն տունը հետեւինս Բաղու բերեմք ։

Մենք ալ խօսք տուանք , աչա իրեն երեք կտոր գրեիը իրեն ձեռագիր խմբաւ եւ մեհմուրին գիրը · մնաց որ ինքը եկաւ խանը Օտա—պաշի հօճի Օհան աղային առջեւ աղաչեց պաղատեց , թէ տունս հարկիւ բերէք հետեւնիդ երբոր գրեմ ։

Հիմայ բերի , այսօր վեց ամիս է , որ տանս մէջ կը պահեմ , ալ կարողութիւն չունիմ պահելու · տանս մէջ հարսերս եւ տղայներս հետս կռիւ կ'ընեն , թէ որ ազգ ենք՝ մինչեւ գարուն ալ դուք բերէք քաղաք պահեցէք · գարնանը պարտիզպանը կուգայ կը տանի ։

Ասանկ ըսելով , Բաղուայ Հոգեւոր եւ Քաղաքական ժողովը յարմար դատեց · որ անիկայ բերեն իրենց վարժուհի ընեն , աղջիկներին կարդացունելու համար՝ վասն որոյ Աւագերէց Տէր Մեսրովպին տունը պատրաստեցին , եւ 150 Քերական եւ Հեգերէն , եւ այլ գրքեր վարդապետը տուաւ

վարժարանին և բերին դրին վարժուհի։

Երբոր վարդապետը սկսաւ 51 հազար ղուրուշը վանից համար բուսցունելու աշխատիլ, յանկարծ մեծ խռովութիւն մը հանեցին, որպէս թէ վանքը լուսաւոր Գրիգորը գողութիւն ըրեր։ Շուտ մը բոլոր գիւղացիները վանից մէջ լցեր, Եկեղեցին և Առաջնորդարանը փակեր և նստեր կը պահեն։

Գիր կը գրեն Պօլսոյ կը յղեն Մկրտիչ վարդապետին թէ՝ ինչ շուտով վանքն եկուր, քանզի վանքդ գողութիւն եղած է։

Մկրտիչ վարդապետը ատ գիրը առածին պէս կիմանայ թշնամութեան գործը. ուստի ինքն ալ մարդ կը ղրկէ, փակերէն կուտայ գեղացւոց փակերուն տեղը. Եւ ատ գողութեան լուրը հանողները բերաւ Պօլսոյ. Եկեղեցին և Առաջնորդարանը փակերուններէն ելաւ առաւ. թէ որ սուտ ելնէ ատ հաշակած լուրերնին, պատիժնին քաշեն. եթէ ստոյգ ելաւ, ինքը վճարէ ինչ եղածը։

Քննութիւն ըրաւ լուսաւոր Գրիգորէն, Գրիգորը ըսկսաւ պատմել այսպէս։

Վարժուհին գիւղէն Պօլսոյ պիտի գար ինձմէ սնտուկ մը ուզեց որ իրեն քոթէնները և ժէռանները, Չինի—Նուղախները մէջը դնէ Պօլսոյ բերելու համար։

Եկեղեցւոյ մէջ փոքր սնտուկ կար, որուն մէջ շապիկ, շուրջառ կար, վարժուհւոյն ըսի եկուր նայէ, կ՚ըլլայնէ՝ տամ, տար Պօլսոյ. վերջը ղրկէ թող գայ. եկաւ վարժուհին երեկոյին. մութ էր մոմը վառած ձեռքս եկեղեցին իջաք. երկու փոքր սնտուկը հանեցի, որ տամ տանի գիւղը և բաները մէջը դնէ մինչև Պօլսոյ, և անկէց դարձնէ։

Քու թշնամիներդ գիշեր ցերեկ ետեւդ են, որ քեզի վնաս մը հասցունեն, հիմայ ատ սուտ համբաւը հանեցին,

որ բոլոր Պէյերը և Հասարակութիւնը քեզմէ սրտերնին սպա-ղեցունեն : Ետ մանաւանդ տանք տակաւին շատ փորձանք պիտի բերեն գլուխդ, քանի որ վանից դինին տանց բեր-նէն կտրած ես, և 51 հազար ղուրուշն ալ բուսցունելու ջանք կ'ընես : Թէ որ չես հաւատար ինձ, աչմ հրամէ' վան-քը տես · թէ որ շիւղ մը կոյած բան կայ' ես վճարեմ:

Ելաւ Մկրտիչ վարդապետը առաւ հետը Բալուայ քա-հանայներէն, Աւագ Տէր Մեսրոպ, Տէր Համբարձում, Տէր Գէորգ · մահտեսի Յակոբ աղայ փօսնց · Ռաքէլ ա-ղայ Պասապեան · Ռաքել աղայ Կօզենց · և այլ բազմու-թիւն շատ գնաց վանքը:

Բացին [illegible] դռները և մտան ներս, հանեցին 1861 Ապրիլ 1: Գրուած Նոր Տումարը սկսան կարդալ մէջը գրուած վանից թէ արծաթեայ և թէ զգեստեղէն եկեղե-ցական [illegible]:

Տէր Համբարձումը կը կարդար կուզէր · լուսարար Գը-րիգորը [illegible] կը բերէր · բոլոր ինչ որ Տումարին մէջ գրուած կար բերելէն ետքը՝ տասը [illegible] արծաթէ անօթ-ներ և զգեստ աւելցաւ · բոլորն ալ եղան ամօթով, սկսան գետնին նայիլ:

Մկսաւ վարդապետը ըսել · "[illegible]" [illegible]

Հիմայ տես որ՝ ստորագրութիւն տուողները սկսան եր-կիւղ կրել, քանզի սուտ ելան · վասն որոյ Մկրտիչ վար-դապետը բերաւ զիրենք տեսան, ու ըսաւ իրենց ·

[illegible]

մէջ պետք տառապին: Եւ մանաւանդ քէշեր ցերեկ ձեր պահներ պետք քան Աստուածաշունչին գրան արջեր լաւ ոզեան, որ գտան կենէ յառն ալ տեղան մը ձեր պետք ըսեր ես որդին կրայ:

Անոր՝ ով ձեզի իշխանութեան կը յանձնեմ և ով ալ խորհուրդ կը ծածկեմ. այլ և ձեզի կը յանձնեմ այն Արդար Դատաւորին՝ որ նա լաւ գիտէ իմ միտքս և ձեր միտքը: "Տէր ինչէ զիրար և զիրեկանան,,: Գնացէք, գնացէք դուք հոգը տարած ձեր քեզան կը ընդունէք, և կորինը տարած ձեր սրտին կը պահէք: Աստուած ձեզի այս զօրութեանը քեզարէնը պետք կնակ, քայց ձեզի ողորմի, զէս ազատէ. ըսաւ ու գնաց սրտառուքը ողորմելիքեն սկսածուն: Այս միջոցին ան տեղը գտնուողները բոլորն ալ ըսկսան լռութեամբ խորհիլ: Իսկ յանցաւորները մեծ սոսկում մը զգացին, և շղթայով Խնդրագիր մը գրեցին, և ան տեղը գտնուող չեղողք մնացած առ չարութեան Աղաներուն և քահանայներուն ստորագրեալ բարեխօս աղերսանքը. բերին տուին Մկրտիչ վշտալի վարդապետին:

Որոյ օրինակն էր այս Խնդրոյ թուղթը:

"Հոգևոր Հայր մեր Մկրտիչ վարդապետ:

"Մարդս միշտ սխալական է, մեք ստորա
,, գրեալքս առ չարութիւնը, առ զրպարտութիւնը ըրինք
,, քեզի համար, ու շատերուն ալ չտեսածնիս տեսածի պէս
,, ըսինք, ու թաքրիք ըրինք: Հիմա սխալեցանք, մեղայ,
,, կ'աղաչենք քեզի, որ աս մեր յանցանքնուս ներես. Մի
,, գարէ ատ մեր ըրած զրպարտանացը շատ զղջացինք, երբոր
,, տեսանք զմեզ Զօղէշին չես մատներ, Աստուծոյ դատաս
,, տանին ձգեցիր, և Աստուած մեր վրայ փոխխնդիր ըրիր:

1862 · Յանցաւորներու ուղղման և խոստովանութեան Խնդրագրին Ստորագրութիւնները ։

---

„ Կ'աղաչենք որ թողես և ներես մեզի , մեղայ , ինչ որ
„ զրուցեցանք՝ սուտ ու մեզնէ հնարած խօսքեր են , Հայր
„ սուրբ գքեզ ունիմ միջնորդ , և այլն „ ։

1862 · Մարտ 2 · Ծանօթ Բովանդակ և այլն , և այլն

Ի Բովանդակ վանս ։

ՅԱՆՑԱՒՈՐՆԵՐՈՒ ՄԷՕՀՐԵՐԸ

Բարեխօս Միջնորդներու Ստորագրութիւնը ։

ԲԱԼՈՒԵՑ · Լուսաւ Տէր Մեսրոպ , ՆԱԽԱԳԱՀ ժողովոյն՝ Տէր Համբարձում . մահտեսի Տէր Գէորգ · մահտեսի Տէր Երանոս . մահտեսի Յակոբ Աղայ Փսոնց · Ռուաքել Աղայ Պասապեան · Ռուաքել Աղայ Կօշենց · Աղամյի Մելիք—Խոսրով · Արշամանու Մելիք—Կիրակոս · Ներքեցի Մելիք—Յարութիւն · Մելիք—Վարդան · Մելիք—Պետրոս · Մելիք—Օսքար ։ Եւս Մելիք—Վարդան · Մելիք—Ստեփան · Օսքար վարդապետ · Ռուաքել վարդապետ ։

Եւ աՀա այս բազմանիւք խնդրագիրը՝ և բազմանիւք Տումարները , Մկրտիչ վշտալի վարդապետին քով կեցած է , ուզողը կրնայ տեսնալ անարգելք ։

Բայց՝ յանցաւորներու անունը տետրակիս մէջ դնելը արժանաւոր բան մը չլինելուն համար չդրինք · ուզողը առանձին կրնայ տեսնել Մկրտիչ վարդապետին քով ։

Բանգի՝ Բոլոր սրբերէ տրուած ձեռոց · —Որ տանէ շնորհաւորութեան ձայն առ յոյսն ։

1862 · Ամէն բան կանոնի ներքև դրուաւ, և Տումարները հաս-տատուեցան:

---

## ԳԼ. ԺԳ.

Երբոր ոմանք գէշ մարդիկ՝ տեսան որ բարեկարգու-թիւնը օր քան զօր սկսաւ յառաջ երթալ, բոլոր Մանօ-րէից թէ՛ Վէրարխմբանու և թէ՛ Բնալուայ, ունեցած Ե-կեղեցական անօթներուն և արտաքին էշխաններուն, Կալ-ուածներուն, եկամուտքերուն օրինաւոր Հաշուեցուցակներ Տումարներ հաստատուեցան. ուտել և խմելը կարգ և կա-նոնի ներքև դրուեցաւ. ա՛լ չի մնաց իրենց շահուն յոյս մը, ուստի սկսան բարեկարգողը ասդին և անդին քաշկըր-տելու: Ինչպէս որ երբեմն սրբազան Պօղոս առաքելոյն ը-րին · շահասէր ոմանք .Տե՛ս Գործոց · ԺԶ· Գլ. և 19 համար, Իբրև տեսին տեարք նորա եթէ ել յոյս շահին նոցա, կալեալ զՊօղոս և զՇիղա ձգեցին ի հրապարակն առ իշխանսն . . . Բա-զում վէրս եդեալ ի վերայ նոցա արկին ի բանտ:

Քանզի ատ կանոնները չ'տրուելէն յառաջ վանից էշխա-ները . ասոր և անոր ծոցը մտնելով, և կռնակը եղելով կ'փախչէին վանից սրնտուկի բանտէն, և ծանր աշխատու-թիւնէն, և կերթային ապատարար փախցնողի մը հետ:

Նոյնպէս գինին և բռինձը, ձէթը և ածուխը, հոքինը և թա-ղարը, կտաւը և աստառը, սուրճը և խուրմը, ուտողը կու-տէր, և տանողը կըտանէր · վասն որոյ հազար տարու չէն մը-նացած վանօրէից մէջ գործածելու ո՛չ անօթներ՝ և ո՛չ ալ սփռոցներ կը տեսնուէր, բայց սակաւ ինչ մանր մէտ մնա-ցածներէն, որ անոնք ալ՝ կամաց կամաց ճամբորդ էին, թէ և բարեկարգողը զիրենք չ'արգիլէր օրինաւոր տումարներու մէջ. Տե՛ս Տումարի 76—77 Երեսները:

Ասոր որոյ արժան է ատ բարեկարգողը չարաչար չար-

չարանօք 'ի խաչ հանել, բայց ինչ օգուտ. (Երկնչէին 'ի ժո-ղովրդենէ) · Ղուկ · ԻԲ · 2: ՄՀ · ո՛վ Աստուած . . . եայլն·
Բոլոր եղելութիւնները Բալուայ վանից և երկրին՝ գրեց յիշեալ վարդապետը առ Գերապատիւ (Սելեֆկէ–պաշէ) Նի-բակոս աղայն , որոյ կամքն ալ բարեկարգութեան հաստա-տուն էր · և գողերու բացած ականները , (լուսամերը) գոցե-լով վանից և հասարակաց օգուտն էր · և Քերդաքաղաքու եղելութիւններն ալ՝ Պատրիարքարանին գրեց և իմացուց , որ անկէ առ դէշ մարդոց ոմանց , յորդորական կամ յանդիմանա-կան գրեր գալով՝ հանդարտին իրենց գործելիք չարութիւն-ներէն , եայլն ,

Բայց առ գրերու հիչ մէկին պատասխանը անգամ չգր-բեցին Մկրտիչ վարդապետին , և մանաւանդ Լրագիր տետ-րակին յաւելուածը , որ 1860ին տպած , ան ալ Քէչէր-հաճի նման ասոր անոր տունը մտնելով՝ կ'աղաղակէր թէ՛ Մկրտիչ վարդապետը չօք մարդ դըր · օնի մի՛ ըներ խօրխան , և մի՛ ըրբաճէ ըրնէր ·

Հիմայ ամէն խոհեմամիտ ընթերցողներ պիտի իմանան որ՝ Մկրտիչ վարդապետին իրեն վիճակներէն ճշմարտօրէն գանգատաւոր մը չկայ եղեր , առքան խռովութեան և քամբասանաց սկզբունքները , տակաւին Մկրտիչ վարդա-պետը Նէնէ–ճաճալը Ս · Յակոբ եկեղեցին Պաշտօնի էր կայ եղեր , և նոր չէր :

Նորութիւնը առ քան էր որ՝ վիճակներուն մէջ երբոր շահախնդիրներու շահը կտրեցաւ , անոնք սկսան առ Քէչէ-րահաճին ձայնին լսել , և անոր ձայնովը իրենք ալ սկսան դղալ ու լսալ:

Հիմա կըխորհինք · քանի որ Մկրտիչ վարդապետը Պօլիս էր · ինչո՞ւ յայտնի չըրին առ յաւելուածին խօսքե-րը իրենց բերանով կամ ժողովքի մը մէջ · երբոր ճշմարիտ

1862. Կը պատրաստէին խաչահանգիստ ընելու, և ազատեց Յա- [illegible]

---

էր գրուած խօսքերը. չէ՞ որ մեր Տէր Յիսուս կ'ըսէ. "Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո երթ յանդիմանեա՛ զնա, յորժամ դու եւ նա միայն իցէք, եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայր քո. ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի եւ կամ երկուս . . . Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջի՛ր յեկեղեցւոջ. ապա եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոս եւ զմաքսաւոր". Մատթ. ԺԸ. 15:

Ինչ առնէ՝ մէկ կամ երկու, և կամ ժողովքով պատուէր մը կամ խրատ մը տուին իրեն որ չ'ընդունեց. Պատուէր տուին իրեն, թէ Հրաժարման մի՛ ըսեր եկեղեցւոյ մէջ որն որ ձեռնադրելէն ետեւը գրուած էր. ա՛լ չ'ըսաւ, և դէմ չկեցաւ:

Պատուէր ըրին իրեն թէ՝ տուները հիւանդաց վրայ մի՛ երթար և խաչահանգիստ մի՛ ըներ. պատուէրը պինտ բռնելով չգնաց. վասն որոյ հիւանդներու տէրուանքը Պատրիարքարանէն սկսան նեղութիւն բերել թէ՝ այս ինչ տեղ երթա խաչահանգիստ ընէ. եայլն որ այս տեսակ նեղութիւններ, Արբազան Պատրիարքի՝ և Նորին փոխանորդին հարկերէն աւելի կայ պահած. ուզողը կրնայ տեսնել. ա՛լ ի՛նչ անհնազանդութիւն ըրաւ, որ Պոլսոյ մէջ չկարողացան իրեն բան մը ըսելու. երբոր Պօլսոյ ելաւ. անկէց ետքը սկսան գէշութիւն ընել. "Եւ հանին զնա արտաքոյ այգւոյն եւ սպանին". Մատթ. ԻԱ. 39:

Հիմա պէտք պատասխանեն թէ՝ աս տետրակը ոչ ազգային էր, և ոչ Պատրիարքարանէն ելած, և ոչ մէկ նշանաւոր մարդու մը գրուած էր. աս տետրակը հիչ մէկու մը առջև յարգ չունեցաւ. որովհետև կլիւք և բամբասանօք լցուած պարկ մըն էր. անիկայ բեռն ընել և ցաւիլ արժա՞ն է:

Նորգարև ոչ ցաւ և ոչ բեռ կրցաւ ըլլալ Մկրտիչ վար-

**1862 · Պօլսոյ տէր մը խորհրդարանը կուտայ, Մկրտիչ վարդապե-տը Պէրպէրեան կուտայ :**

---

դպրեւտին, բայց՝ Քրիստոսին եւ Բաղիշոյ ամենապէտ շահանգիններուն մէկ ներքեւեալ ջախջախեալ գաւազան մը ե-ղաւ, վերար յորդորելու, բարեկարգութեան դէմ զլլելու :

Երբոր առինք սա ջախջախեալ գաւազանին յենացան եռայ · Լ.Զ · 6 : Մկրտիչ վարդապետն ալ Պորպորեայ գա-ւազանին ձայն տուաւ, որ զանոնք փշրէ եւ խորտակէ · Սաղմ · Բ · 9 : Յայտ · ԺԹ · 15 :

Երբոր Պողովատին գաւազանը տեղէն չշարժեցաւ, վասն որոյ շատերը կարծիք ըրին, եւ հաստատեցին թէ արդարեւ ջինջերհային ձայնը՝ լուսահային ձայնն է ընելով սկսան օր քան զօր գէշութիւնը շատցունել Բաղիշեցւոց, աղքատաց արիւնը ծծողները :

Տեսաւ Մկրտիչ վարդապետը՝ որ Պօլսոյ ոչ Սինոդէն գիր եկաւ, եւ ոչ ալ Պատրիարքարանէն, ուստի պատ-րաստութիւն տեսաւ, որ Բաղիշոյ էլլէ, երթայ Քրիս-տոսին այցելութիւն ընել հաստատած վարժարաններուն՝ եւ այլ բարեկարգութեանց :

Նա միջոցին՝ Տեղապահ սրբազան Ստեփաննոս Արքե-պիսկոս հայրը, գիր մը յղած կըլլէր Խարբերդու Առաջ-նորդ՝ Պետրապատիւ Արիստակէս սրբազան Արքեպիսկոպո-սին, եւ անոր մէջ յիշելով պարտիզպանի բողոքը, եւ գիր մ'ալ գրած Մկրտիչ վարդապետին, որուն մէջ կը հրա-մայէր որ յառաջ պարտիզպանի տունը հանգիրծ կաշխուք եւ կարասեօք Պօլիս յղել :

Նոյ յիշեալ Սրբազանը ինքն ալ յատուկ գիր մը գրե-լով Տեղապահէն եկած գիրն ալ մէջը դնելով Խարբեր-դէն կը յղէ Բաղու յիշեալ Բաբունոյն :

Ահա թշնամութեան նշոյլ մը աստեղէն կ'երեւի, որն ու-րստ սովորութեան Բաղիշոյ Առաջնորդին գիրը՝ ուղղակի

Մէջ Ղալաթին ճամբէն կը մնէ Միրօնը ժողովուրդը · Տարեան Յովհաննէս Պէյը Խնդիրը կը կատարէ ։

---

իրեն կամ Բալուայ իշխանի մէկին չեն յղեր · այլ խարբերդ կը յղեն որ՝ տարածուի չեղած գործի մը ձայնը իբրև եղած ։

Երբոր գիրը առաւ ; կանչեց Բալուայ քանի քահանայ և քանի իշխանք , կարդաց իրենց · և Տ · Համբարձում և Տ · Մեսրովպ քահանայքը , և մահտեսի Գրիգոր աղայ Բժենց , և որդւոց Աւետիան Չիլմաճոնց , և Պապայեան Ըռաքել Ըղայն վերակացու դրաւ , որ օր յառաջ ճամբու դնեն · և ինքը նոյն եկաւ .Քէօրթխօթան Համբօ զատապայն 42 ժամ ճամբորդութեամբ ։

ԳԼ. ԺԱ

( Տօսը յաջողութեան համար ողջ անցին )։

Տոմարդութեան , (Ենթանկատեղեակ) ։

Ըս Համբօյու Տատոյեան Պապարը , Էտէրնէ ազնոր եղող Պէյերուն շատ պարտք ունենալով՝ անկէց Խօճայէն պէյը ծողովէր ըրած դրամը բուսցնելու համար ։ Ըս մարդը դըրամ չունենալուն համար շատ նեղը մնալով՝ հրամանն խնդրեց որ ինքը Էտէրնէ երթալու Պէյերուն քով՝ ճար մը գտնելու համար ։ Երբոր հրաման առած երթալու վրայ էր , գնաց Մկրտիչ վարդապետին · շատ խնդիր ընելով՝ որ իրեն յանձնարարական գիր մը շնորհ ընէ Պօլիս . որու որ կը բարեհաճի ։

Մկրտիչ վարդապետն ալ տոր Բալուայ վանից մէջ ըրած սարսափելի երդումին հաւտալով՝ որպէս թէ ապահով եղած էր , տոր յառաջ գալուն դէչութիւն , և հաստահարութիւններ չընելու վրայօք · Տէր Տէրտէլէ 80 եբեալ ·

Տուաւ յանձնարարական գիր մը · Ըո Ըգգաւէր և դե

1862 · Էմրամ կու գայ 3 հատ , Խաբէբայութեան ընել 30000 ղուրուշի համար Մշէ Պազարը :

---

բապատիւ Յօհաննէս Պէյ Տատեան Արքունի վառօդապետին , որուն մէջ կ'ապաշէր վարդապետը առ մարդուն օգնական ըլլալէն ետքը՝ Արտաննէ Մէճիտիէ Նշան մը ու շնորհուիլ 'ի պատիւ և 'ի մխիթարութիւն Հայրենեաց երկրի բոլոր Հայազգին . և 2500 ղուրուշ ալ փոխ դրամ կուտայ առ մարդուն , որ իրեն պարտատէրացը տայ , մինչև Պօլսոյ վերադառնալուն դրամը վճարէ :

Նոյնիսի բարեմտութեամբ յիշեալ վարդապետը՝ առ մարդը ճամբու դրաւ . եկաւ Պօլիս : Որպէս որ արժանն էր յիշեալ Պէյը անոր գործերուն օգնական ըլլալէն ետքը , Մէճիտիէ Նշանն ալ կը հանէ կուտայ իրեն : Կեցցէ՛ Աւգոստափառ Կայսրութիւն և Բարեխնամութիւն Տէրութեան :

Երբոր առ յաջողութիւնը գրտաւ , շուտ մը երեք խոստումներ կուտայ Պատրիարքարանի Խտաւ ժողովոյն , և կը հանեն երեք Էմրամ , և կը ղղէ Տէրտէրեան Մկրտիչ վարդապետին այսպէս .

Շնորհակալ եմ ձեր գրին ... ամէն գործս կարգի գրուեցաւ , այլն : Այս երեք Էմրամին եղբօրս Կեւցի հետ մէկ ըլլաս քալեցունես . և ինծի ալ ... ընելու համար 20 հատ ... ճամբես . և Մուշ Մշկէին ալ ... նութեան համար՝ Էմրամ հանեմ . յղեմ 10 ... առ յղէ այլն . . . այլն . . . այլն :

Նայեցաւ վարդապետը Էմրամները , որ մէկը կը հրամայէր երեսուն հազար ղուրուշ մահտեսի Պազարին , որպէս թէ աղքատ գեղացւոց վրայ առնելիք ունի եղեր քուցնել . որ էր սուտ :

Միւս Էմրամը , կը հրամայէր , իրեն եղբայր Կեւօն արքունի Քաղաքական Մէճլիսին նստիլ . մահտեսի Պազարին տեղ, որ առ ալ երկրայիք չէին ուզեր . անոր համար չորս տարի

1863 [illegible] :

յառաջ արգիլուած էր առանձ գործերու մէջ մտնալէն ։

Եւ միւս Էֆէնտին կը հրամայէր թէ՝ փաշաները անհոգութիւն կ՚ընեն եղեր · երբոր մէկը [illegible] մը կուտայ և սպանման վրայօք չեն հարցուներ և այլն · որ ատիկայ ալ անտեղի սուտ խօսքեր ։

Ետ երեք խնդիրն ալ քննուեցաւ՝ սուտ ելաւ · վասն որոյ Քաղաքական թէ Աղբունի Մէճլիսը · և թէ՝ օտար Քրիստոնէից և Հայոց ժողովուրդը · և թէ՝ փաշան, զարմացան ատ սուտ խնդիրներու · Խնդրագիրը Բարձրագոյն դրան ծանրութիւն տուող մատուցողին վրայ ։

Եւ Մկրտիչ վարդապետն ալ տեսաւ որ ատ մարդը, արդարև շատ գէշ օձու նման մարդ մի է, երբոր ցուրտ անյաջողութիւն մը պատահի՝ կը թուլանայ կը լինի իբրև խմոր, յո՛ր կողմ շրջես կը շրջուի օձու նման · ոչ խայթ ունի, և ոչ թոյն՝ ցրտութեան ժամանակին . քանզի տկար է՝ զօրութիւն չունի այնքան՝ որ քովը եղած թոյնը գործածէ ։

Երբոր յաջողութեամբ տաքցաւ սկսաւ զօրանալ · ուստի օձու նման ձեռք զարկաւ գէշութիւններ ընելու · վասն որոյ վարդապետն ալ ստիպուեցաւ իրեն համար Պօլիս գրելու · բայց ինչ օգուտ եղնալիքը եղաւ ։

Երբոր ատ մարդը տեսաւ Մկրտիչ վարդապետէն ալ յոյս չկայ իրեն շահուն · սկսաւ Մկրտիչ վարդապետին որպէս և կը վայելէր իրեն հոտած բերանին · զրուցել և խօսիլ ։

Որով Խարզանու Մարտիրոս վարդապետին, և Մշու Գլըրքէ Քարան Ռաքէլ վարդապետին կոնսուլներ հանել և ղրկել · որ զանոնք Մկրտիչ վարդապետը վանահայրութենէն հանած էր, իրենց զանազան անվայել գործքերնուն համար, որ շատերուն յայտնի էր, և ուզողը կրնայ քննել.

1863 · Բուրսա գալը, ծովեզերոց Մահօէրը, Խաբեբայութեան ոմանց շնորհքները ։

---

և իմանալ ճշմարտութեամբ ։

Նա գործողութիւնները Տէյարդէօէրու կրկին ալ տեսնելով, ան ալ կամաց կամաց սկսաւ գլուխը դուրս հանել ճպալ, և լեզուն ալ հանելով դուրս փըսալ ։

Լաւ իմացաւ Մկրտիչ վարդապետը․ որ աստ բոլոր հողին ներքև ծածկուած թշնամիներու արթըննալը, Պօլսոյ ոմանց թշնամիներէն դուրս տրուած տկար զօրութիւններէն յառաջ եկած Յարութիւն մ'է, վասն որոյ սկսաւ գրել Պօլիս առ Տեղապահ Արքեպիսկոպոս հայրն․ թէ ես կամիմ Պօլիս գալ, ինչ հրաման կ'ընէք, ևայլն․

Շրջեցաւ բոլոր վարժարանները և մկճակները․ կարգ և կանոնները․ ուր որ թերակատար էր կատարելու ճամբան ցոյց կուտար․ ևայլն․ ևայլն ։

Լման 242 ժամ միշտ [illegible] վրայ նստելով եկաւ Միհրանի Հաշտար գիւղը, որ անկէց պիտի երթար Մակաբայեցւոց վանքը նստեր, Լճու երկրին համար, ան տեղը յանկարծ տեսաւ որ Բալուեցի [illegible] Օհաննէսը․ մեծ Մահօէր մը ձեռքը, մտաւ ներս․ բայց ոտաց մէկը չկայ, կոտրած և ուռեցած յետին խեղճութեան մէջ ։

Ինչև իցէ Մահօէրը կարդաց․ որ զինքը կը հրաւիրեն [illegible] գրել, և իր կողմանէ մարդ մը յղել վանից [illegible]ները [illegible] ընել իրենց, և վերջն ալ կը գրեն․ եթէ [illegible] կը ձգես մինակ մեղի Առաջնորդ կը լինիս, մեք քեզի կ'ընդունիմք․ ևայլն ։

Իմացաւ որ ատիկայ թշնամիներու հնարած գործ մ'էր․ ելաւ իսկոյն 42 ժամ հեռի եկաւ Բալու, բոլոր ժողովուրդը թափուեցան իրեն վրայ․ թէ մեք քեզի 3 հատ մեծ Մահօէր յղեցինք հաղիւ թէ եկար․ ուստի ալ չենք թողուր երթաս ։

1863 · Ակոռեաց Բողոսայ վանից 2 Տարեկան Հաշիւը, և պայման մը ։

---

Վարդապետը ըսաւ ոչ · ինծի մէկ մահզար եկած է, աՀա ձեր մահզարը, ուստի յայտնի եղաւ · որ ժողովուրդը խաբեր · թէ Մկրտիչ վարդապետը տեղս բերելու Համար երեք մահզար պէտք է ըսելով ձեռքէն տուած են. երկուսը Պատրիարքարանը յղած են · թէ Մկրտիչ վարդապետը ասանկ է, և անանկ է · որն որ ժողովուրդը չգիտէր ատանկ ըսելնին ։ Իսկ մէկ մահզարը միայն Մկրտիչ վարդապետին իրենց մարդուն Հետ յղած էին, որն որ պէչկէրը ոտացը զարնելով կոտրած էր ոտքը, թէ ուզեր չես քալեր և այլն · ''Չէ ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի որ ոչ ծանիցի,, և այլն · Մատթ · Ժ · 26 ։

Իսկ ''Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա թէ Աստուծով գործեցան,,։ Յով · Գ · 21 ։

Նոյն միջոցին Պատրիարքարանէն գիր մը եկաւ Բալու. թէ աՀա ձեր խնդիրը կատարեցաք · Մկրտիչ վարդապետը աղէկ · Սարգիս վարդապետը ձեզի Առաջնորդ · քանի օրէն ետքը կուգայ. և այլն ։

ԱՀա Հիմայ յայտնի եղաւ, որ Մկրտիչ վարդապետի թշնամին, ոչ Բալուայ, և ոչ ալ Քիւրտիստանէն եղած է՝ այլ և Պոլսոյ ոմանք՝ որոց թելադրութեամբը և աղերսանօք, և երբեմն Համոզմամբը Պատրիարքարանին Հասկցունելով, կը պարտաւորեն Պատրիարքարանը ատ գործողութիւնը ընելու ։

Որչափ որ Բալուայ բացի քանի շահախնդիր անձանցմէ բոլոր ժողովուրդը ոտքի ելան · թէ մեք մեր Առաջնորդը թող չենք տար . և շատ արզ ու մահզարներ գրեցին Պոլիս · թէ մեք մեր Առաջնորդը չենք տար ։ Այս գրերը և մահզարները մնացեր անպէտ եղան · որովհետև թշնամին տանը մէջն էր · ''Թշնամիք առն ընտանիք իւր,, · Մատթ · Ժ · 36 ։

Աւստի բոլոր վանից անօթները իրեն յանձնուածէն ալ աւելի՝ յանձնեց Վարդան վարժապետին հաստատ Տումարաւ, Թէ որ Վարդան վարժապետը, ջուրը չձգէ կորսընցունէ Տումարը, ահա Տետրակին մէջ կայ գրուած · Տե՛ս 77 Երեսը:

Ու անկէց ետքը, Քաղաքական Հայոց ժողովքին առջև երկու տարուան եկամտից և ծախուց Տումարները ցոյց տուաւ բոլոր հաշիւները · տումարները

Եկեղեցին · 21864 ղրուշ ծախս · Մեծ Ֆէրհատին Տէֆթերով 2
Տարեկան ծախսը · 16421 ղր. էրտոփ · ասոնցմէն անցեն եկամուտ-
ներն կարոր · 5443 Սոսկը Մէջտեղ Հաշտարարեր թողեն

եղած է, Կարծիք և կասկած ունեցողները Մկրտիչ վարդապետի քովը Քաղաքական ժողովքով ու 110 հոգով վաւերացած հաշուետումարները թող գան տեսնեն, կարծիքնին փարատելով · երբոր ճշմարիտ ելաւ, և օրինաւոր ծախք · ան ատեն բաց մնացած 5443 ղրուշը վճարելէն ետքը՝ կը պարտաւորին Մասիս լրագրին միջոցով հրատարակուած 25000 ղրուշը վճարելու Մկրտիչ վարդապետին, և եթէ Մկրտիչ վարդապետին զիմմէթը աւելցաւ ինքը կը պարտաւորի վճարելու · քանզի՝ ''Ով ասոնց ճշմարտութիւնը գայ տեսնէ,, ·

Աւստի շատ նեղութիւններ քաշելով, ժողովուրդը համոզեց, որ ինքը երթայ Խարբերդ և Բալու · ատ գէշ մարդոց համար բողոքելու, ատ կերպով ելաւ եկաւ Տիյարպէքիր · գրեց իրենց մխիթարութեան գրեր, թէ Աստուած ատանկ կամեցեր, ''Եղիցի կամք Տեառն օրհնեալ,, · Թէպէտ ինքը ատանկ կ՚ըսէր, բայց չէր բողոքէր · քանզի ինքը յԱստուած կը յուսար, և Աստուծոյ կը թողուր անոնց իրեն ըրած գէշութեան դատը:

Թէ որ յայտնէր իրենց մէկ անգամ Բալուայ հրաժարականը, անհնար բան էր · Թող մէկն տար և մեծ խռովու-

Թիմններ պիտոր յառաջ գար ։ Իսկ ինքը Պատրիարքարանէ գրին դէմ չկենամ ըսելով, ատ ճամբով ելաւ ամենայն փառաւորութեամբ Իսպահան ։ Նման որոյ կ'ըսէր. "Դարձո՛ւ էին Աստուած, և էիր որ՛ էին 'ի պատերազմունք էմեամ,,. Սաղմ. ԽԶ. 1: "Զի ես 'ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան,,. "Իսկ որ առնէ զշնորհաբերութիւն քոյ առաջին,

Հինգ Քրիստոնէութեան վարժարաններուն տուած գրքերը աս տեղս Հաշուեցուցակ մը կը դնենք, որ ամօթով ըլլան այնպէս մարդիկ, որ Հրատարակած են, թէ Մկրտիչ վարդապետը գրքերը կը ծախէր. և այլն։

Աշերտ Պասապան՝ տղայոց և աղջկանց վարժարանին գիրք, 180 Քերական. 5 Սաղմոս. 5 Գործոց. 4 Նարեկ. 300 կտոր ալ տիրացու Մինասին քով տակաւին կայ, և 40 ղուրուշ դրամ։
494 ըման 494 կտոր գիրք։
377 Բռնտղան Պասապան Տէր Մուրատին յանձնուած
871
252 Վարժարանի համար՝ 300 Քերական. 50 Հեզեքէն. 10 Սաղմոս. 5 Նարեկ. 2 Քերականութիւն.
196
1319
270 2 Շարական. 2 Տօնացոյց. 5 Գործոց. 1 Ճաշոց։
1595 Լման 377 կտոր գիրք։

Ծօք Պասապան՝ ուէս Յարօ. և ոսկերիչ Սիմօյին տրուած վարժարանին համար՝ 100 Քերական. 5 Սաղմոս. 5 Գործոց. 2 Նարեկ։ Հիղանու Տէր Յօհանին 50 Քերական. 4 Սաղմոս։ Տէր Խաչատուր վարդապետին տրուածը, 50 Քերական. 4 Սաղմոս. 2 Նարեկ. Տէր Ղազարին 25 Քերական. մահտեսի Պօղոսին 5 Քերական։ Լման 252 կտոր գիրք։

Ախլիվան. Քինիաթ գիւղին, ուէս մահտեսի Մարգա-

րին · 1 Ճաշոց, 1 Շարական, 30 Քերական, 1 Տնացոյց, Աղերս վարժապետին · 160 Քերական Անթիլիասմէջ բաժնուելու · 1 Շարական, 1 Ժամագիրք Հաղըոյ մըսի Պազարին · 1 Քերականութիւն տիրացու Շահինին · 1 Սաղմոս Մելքոնին · ըմն 196 կտոր ։

Իճէ տրուածը · ռէս Հանուշի և Մրտօյի ձեռամբ 100 Քերական և Հեգերէն · 6 Սաղմոս, 3 Նարեկ, 2 Աստուածաշունչի պատմութիւն · 1 Կտակարան, 1 արծաթ խաչով Մաշտոց Տէր Պօղոսին Սանէս · 80 Քերական Հայնի Գրիգորին, 2 Վարժութիւն մանկանց, Յամիթ ։

Խրճիկ վանից տրուածը · 45 Քերական և Հեգերէն, 3 Սաղմոս, 3 Գործոց, 3 Նարեկ, 1 Տօնացոյց, 1 Աւետարան Ճաշու, 1 Աւետնի ժամագիրք, 1 փոքր ժամագիրք, 1 Խորհրդատետր, 1 Վարժութիւն, 2 Հայոց պատմութիւն · Ստեփան Օրբէլ և Սօղնկայ, Իւ Թաշկինակ, Զարավան Տէր Ստեփանին՝ 30 Քերական, և Հեգերէն ։ Ըմն 276 կտոր, և 30 Թաշկինակ ։

Ահա Քիւրդիստանի մէջ եղած վարժարաններուն 1595 կտոր թէ Քերական, և թէ խոշոր վերոյիշեալներն են, և 30 Թաշկինակ ։

Նաև վերոյիշեալներէն ալ զատ 3042 կտոր ալ Յամիթ Թանգարանը դրաւ, փոխ—ընդ— Գերապատիւ Յակոբ Եպսի հսկողութեան ներքև · որն որ բոլոր Քիւրդիստանու և թէ Յամիթայ աղքատ տղայոց համար բաւականաւոր ժամադրութեամբ տրուիլ · և ժամանակը լրացած ատենը բերուիլ Թանգարանին յանձնել · և այլ պէտք եղածը ուղել և տանիլ ։

Թանգարանի մէջ դրուած գրքերու տեսակը ներքոյ գրեալքն են ։

Քէօրթերէն Քերական, Շահնազարով Գերապատիւ Կարապետ վարդապետի. ընծայած Հնդկերէն. Սմբատ— Մաշրամ, Ստեփաննոս Օրբելին, Պետրոս վարդապետ, Ստեփաննոս Ռօշկեցի, Մովսէս Կաղանկայտուեցի. — Ցե-ղասուն Արդարոց օրհնութեամբ եղեցի: Կը յուսանք որ տա-կաւին շատ գրքեր ալ՝ յիշեալ Գերապատիւ Հայրը տարուէ տարի այս Տիգրանեան Թանգարանին յիշատակ յղելէն ետ չպիտի մնայ վասն աղքատ մանկանց համար:

Նաև Պօլսոյ տրուածները. Սաղմոս, Նարեկ, Գոր-ծոց, Ատակարան, Շնորհալւոյ Յիսուս—որդի, Քերա-կանութիւն, Պարտք տղայոց, Վարժութիւն մանկանց, Ըն-թերցասիրութիւն, Քրիստոնէական Հրահանգ մանկանց, Ժամագիրք, Շարական, Տաղարան, Տօնացոյց, Ճաշոց—գիրք, Մաշտոց, Լապտեր հոգւոյ, Երբեմ—խուրին, Քաղաքավարութիւն, Զենոբ եպիսկոպոս, Պլուտարքոս, Բասիլիոս, Աստուածաշունչ, Պատմութիւն Երուսաղէմի, Պատմութիւն Լուսաւորչի, Պատմութիւն Հայոց, Մեկնու-թիւն Ղուկասու, Մեկնութիւն Կաթուղիկեայց, Խորհրդա-ծութիւն, Եղիշէ, Վարդանանց, Մեկնութիւն Ժամա-կարգութեան, Ներբող Էջմիածնի, Զգօն, Սաղմոս—Տաճ-կերէն, Վարք Սրբոց, Եօթն—կարգեան մեծ Մագաղաթեայ Աւետարան մի:

Ահա վերոյիշեալ գրքերը, որն որ տուին և յանձնե-ցին Մկրտիչ վարդապետին. ան ալ բերաւ կարգի դրաւ. և այս գրքերը տուողներուն գիշեր ցերեկ բարեմաղթու-թիւններ կ'ըլլուին, գործքերնուն յաջողութիւն, անձերնուն ողջութիւն, մեղացնուն թողութիւն, ննջեցեալներուն ար-քայութեան համար միշտ կ'աղօթեն յիշեալ գրքերը կար-դացողները:

1864 · Թանգարանին նորէն բերէ տասնըներորդ յուլիսի ։ Ի Վերակացութ։

---

Սրբեմ՝ կ'աղաչենք վարժարաններու արդար մանկանցը, և անոնց տիրուհիանցը, իրենց կարդացած և լմնցուցած գրքերը, շնորհ ընեն մեր Թանգարանին ։ և կամ մէյ մէկ գիրք թէ հին և թէ նոր շնորհ ընեն յաւիտենական յի-շատակ՝ իրենց անունը գրքին մէջ գրելով, "Տո՛ւք այնմ՝ ուստի ո՛չ ակն ունիցիք առնուլ,, · Ղուկ · Զ · 35 ։ Ահա Պօլսոյ մէկ ամսուայ ճանապարհ հեռի աղքատ մանկունքներ ձեռքի կը նային ու կ'ըսեն · Եղբա՛րք մեզ ալ ողորմեցէք ձեր սեղանէն ին-կած փերանի փշրանքներէն · Քանզի շունք կերակրին անտի և այլն · Մատ · ԺԵ · 27 ։

Սրբեմ ով որ ատ Սյարժարաններուն և Թանգարանին մէկ գիրք մը կամ մէկ ընծայ մը տալու ըլլայ, աչա՛ Պօլսոյ մէջ Խաս—գիւղ Մոմճեան Գերապատիւ Մկրտիչ Աղային թող յանձնէ, Լրագրով կը հրատարակուի ։

Իւսքիւտար · Գերապատիւ Փընճէանցի Գասպարեան Յարու-թիւն Աղային · —Պօլիս · Գերապատիւ ոսկերիչ Մելքիսեդ Աղային, և Չաքըճեան Գերապատիւ Սարգիս և Յարութիւն Աղայներուն · Պէշիկ—թաշ · Կիւրճեան Յովհ · Նշան Աղային · Եէնի—գափու Զորանկեան Մարուգէ Աղային ։

Յիշեալ Յարգելեաց անձանց ձեռօք կորուստ չերթար, ինչը կուգայ կը հանի · և իսկոյն Մամուլ լրագրին միջոցով ալ կը հրատարակուի · Թէ այս ինչ Աղայն, Քէօրփիսթանի աղքատաց Թանգարանին այս ինչ ընծայն տուած էր, եկաւ հասաւ ։

Տիգրանակերտու մէջ ատ Թանգարանի խորհուրդն ալ ներքոյ գրեալ երևելի անձինքն են ։

Սրբակրօն Աւագ—երէց Տէր Գաբրիէլ բարեմիտ քա-հանայ Մայր Եկեղեցւոյ "Սրբոյն Սարգսի զօրավարին,, · Գերապատիւ Պետրոս Աղայ Մուրատեան, Պետրոս Աղայ

Զաքարեան, Գրիգոր Աղայ՝ Պէտիկ Թէրզեան, և Յակոբ Աղայ Փափազեան Գործակատար, և Գիւտանպետ Գրագիր Գէորգ Պատուելի Զօհրապեան Մահտեսի Կարապետեան:

Աւելի կ'աղաչենք այս ուղղախոհ գրքոյկին ձայնին մը-տիկ ընող և ընթերցող Գերապատիւ Ազգայիններուն, և Վսեմաշուք Պէյերուն, Ազնուանունդ Էֆէնտիներուն, Յարգամեծար Աղայներուն, և Բարեպաշտ Հոգևորներուն, որ աչքերնին կտոր մ'ալ սա Նոր հաստատուած Վարժարան-ներուն ու Թանգարանին քաղցր ակամբ նայել, վերցնելով Ազգայինները ձեռամբ և գիտութեամբ:

Գանք հիմայ Բաղուայ մէջ տրուած գրքերը. 100 Քերական վանից համար. 300 Հեգերէն և Քերական Աղջկանց Վարժարանը. 10 կտոր Սաղմոս, և Գործոց. 2 Ժամագիրք, և 2 Շարական ձեռաց, և 1 Աստուածա-շունչ, 1 Թեսաւրոս, 3 Պարտք տղայոց. 3 Հայր փիս-տոս, վանից համար, ըմեն 472 կտոր:

Ահա տեսաք գրքերու տեղուանքը, ուր որ տրուած և դրուած է. գանք հիմայ եկեղեցեաց տուած յիշատակները:

ԱԼԻԲՌՈՒՆԱՐ. Նորաշէն սուրբ Աստուածածնի եկեղեց-ւոյն, մէկ լաւ Սկիհի ծածկոց ոսկէթել, և շուրջառ 2.

ԹՐՃԻԼ. Սուրբ Թովմայ առաքելոյ վանից տրուածը. 3 Սկիհի ծածկոց, 1 ձեռք Ժամարարի զգեստ, 2 մեծ արծաթ Խաչ, 1 արծաթ Աւետարան, 1 արծաթ Մանա-տուփ, 1 արծաթ Մաշտոց, 1 մեծ Վարագոյր, 4 Շա-պիկ, 6 հատ Շուրջառ, 1 Բուրվառ, 3 Պատկեր, 15 կտոր Տաճարի գօտնոց, և Խաչի բունիչներ, Մանկանց մամրուն գլուխներ, և այլն:

Էւ տակաւին մնացածներին ալ կարօտութիւն ունեցող՝ սուրբ Եկեղեցւոյ համար կը տրուի, որովհետեւ Մկրտիչ վարդապետը իրմէ 'ի շատ Քիւրտիստանի մէջ հաւատարիմ աւանդապահ մը չկրցաւ գտնալ. վասն որոյ ասոր և անոր քան մը չյանձնելուն, բարբոքեցան և խռովեցան Մանօրէնից և Եկեղեցեաց ցեցերը։

Գտանք հիմայ Քիւրտիստանի և Բաղուայ մէջ հարկաւոր տեղուանք ձրիաբար ընծայներ տալով, և անոնցմէ սպուտ մը և ընծայ մը փոխարէնը չառնելը։ Որովհետեւ ներքոյ ընծայները այդու գիտաւորութեամբ կուտար, որ սիրով աշխատին ընծայակիրները, Ազգային կանոնները, և Մի շարժարաններու պակասութիւնները լեցնելու և գլուխ տանելու։

Տրուած ընծայներ, իրենց նուանքին և գաւառչայէն · և այլն։

1 Վերարկու Ջու Ճանուշին Աղային, Տպնէ Ոսկես Սահակին, 1 Ճայնի Ստեփան Աղային, 1 Թվինիաթ մահտեսի Մարգար Աղային, 1 Գարգին Ոսկես Զալցին, 1 Կարապետ վարդապետին, 1 Մարտիրոս վարդապետին Խոյ—վանից, 1 Տէր Մեսրոպին, 1 Բաղուայ Յակոբ վարժապետին, 1 վանից Անդրէաս վարժապետին, 1 Ստեփան վարդապետին Կոնոնոս, 1 Ուրֆայէ օղլու մահտեսի Պետրոսին, 1 Ուրախի Սարգսին. 1 Սղերտ Տէր Յօհաննէսին. 1 Բերդէ մահտեսի Կարապետին, 1 Ոսկես Օվջին. ահա 16 հատ մեծ ... վերարկուք։ 1 Սալմայ Ճայեու Օհանին, 1 Գանցին, 1 Զուլֆոյին, 1 Գուլբոյ Պօղոսին, 1 Ճազըրուայ Տէր Թումին, 1 Նագքել վարդապետին Բաղու, 1 Ճազըրուայ Կարապետին, 1 Պետրոսին. ահա 8 ... ։ 1 ... Տէր ... մահտեսի Օհաննէսին, 1 Զաքոյին, 1 Մուսայէ Զատոյին,

1864· Թանգարանին խորհուրդը, և տասն ընծայները և ցէ-ղագրները:

---

1 Աւետս Կուլցյին, 1 մաշտոսի Պօղոսին Պարլարի, 1 Պա-րիպօյին, 1 Մարտիրոսին. ահա 8 Ղուրինի Աւետարան.

1 մեծ Ժամագրոց Մակարայեցւոց Վանից, 1 Ժամա-գրոց փերինու Աղաշ Աղային, թող այլ և այլ աշխատող-ներուն ալ և քերթողներուն ալ հարկաւոր եղած տեղուանք-ները ընծայներ տրուած է վասն օգտին Հայոց քերթողութեան-ցւոց, որ այս տեղս գրելը հարկ չէ. կարծեմ ունողը կրնայ առանձին իմանալ Մկրտիչ վարդապետէն.

Մկրտիչ վարդապետին քերթողութեանէն երկու տարեկան թէ ընծայ, թէ դրամագլուխ, թէ Պօլիս—դրամ. ընդ ամենը ներքոյ գրուածն են. Նախնորդական խրատուն՝ 1500 ղրուշ Մատին Նաւբելոյ վանից դրամագլուխ. 300 ղրուշ Խմանու երկրէն. 1800 ղրուշ Մակարայեցւոց վանից դրամագլուխէն. 200 ղրուշ Պարաւանու Ջօսգան, Պօլիս—դրամի կողմանէն. 1200 ղրուշ Կոնոնոսի վանից վիճակէն. 1200 ղրուշ ալ ասկէց և անկէց. ընդ ամենը 6200 ղրուշ: Նշա քերթողութեանս խրատուն ամենայն ճշմարտութեամբ յայտնեցաք. ինչ մարդու որ չհաւատալիք կուգայ, թող քննէ. Որ աս-նէ ըմբռնողութեան գայ աս լոյսն:

Իսկ ըրածնուս ծախքը աս իրաւանց յարմար չզալուն համար չենք գներ, խոհեմ անձանց մտածելի գործ մ'է, և գուրսերը չորս ձիով և չորս մարդով շուրջ քաղողները լաւ գիտեն ծախուց չափը, ուղողը ծախուց Տումարին ալ կրնայ տեսնալ: Հիմայ մեք մինակ տրուած ընծայներու գու-մարը կը դնեմք աս տեղս, Լուսաւորչէ շինուած մեծ լաւ Աւե-տարկուք 16 հատ. Լուսաւորչէ շինուած լաւ Սաղմոս 8 հատ. Ղուրինէյէ շինուած մեծ և փոքր Աւետարանք 8, և Ժամագրոց 2:

Նոյնք լսելէդ ետքը՝ գանք հիմայ Պօլիս ղրկուած գրե-րուն համար, որն որ հետղհետէ կը գրէր Մկրտիչ վար-

1863 · Քէօրտիսթանի Առաջնորդէ եկած էրաաանտը։

---

գապետը · առ Տեղապահ Արքաղանին, թէ՝ ես կուզեմ Պօլիս գալ, ինչ հրամանդ կը լինի · և պատասխան չէր առնոյր · լման 12 ամիս մի գինի միոյ փօրթուգանէն գրեր տալով, դրամ ծախս ընելով կը յղէր Տեղապահին, որպէս թէ այսօր կամ վաղը պատասխանը կ'առնեմ ըսելով · լման 12 ամիս տևեց · ոչ պատասխան, և ոչ գիր մը կրցաւ առնել · մինչև անգամ փօրթօծէն ալ կը զարմանար, աւրքան գրքամ առնելուն, և մասնաւոր գիր մը իրեն չտալուն վրայ ·
1863 · Ապրիլ 8 · Օրն Երեքշաբթի ·

Պ.Լ. Փ.Օ.

Օր մը Քէօրտիսթան վալիէն նամէ խալէլ—էէամէլ ճաղայն կանչեց Մ'կրտիչ վարդապետը տարաւ իրեն քով, և հարցաւ իրեն ըսելով, —Մօրտախիտաա տօրնէմ, նէ՞ն աանաա բաթ-րէք—խանէտէն մէքթօպ կէլմէօր · —պատասխանեց խայրը · Զարմանալով մը փաշայն ըսաւ · —Ածայէ՞ղ չէք չէյ · զար-մեալ կրկնեց ըսելով · —Սանէ՞ն տէրըը, չէմէթ աանա բաթ-րէք—խանէտէն մէքթօպ էօ՞ք տըր · —պատասխանեց դէլլ · ըսաւ փաշայն · —իչէէ՛ դէօլ չաա մէքթօպդէ, բաթրէք գայմագամէ կէօնտէրմիշ աանէ Սթանպօլա էթմայըր, նէ՞ տէրըը ·

Վարդապետը պատասխանեց թէ՝ ես այսօր 12 ամիս ե-ղաւ որ ամէն փօթթայի գիր կը ճամբեմ փօթթայով տակաւին ընծի փօթթաաանա Մէքթէպէն գիր մը չառաւ, կուզես նէ՛ հարցուր փօթթաճայէն ·

—Էյ չէմէթ նէ՞ տէրըը, կէօրէճէք ճըլըր, էօգաա դէր տէյէ-ճէքըը էօ՞ր մը։ Ըսաւ փաշայն ·

Պատասխանեց վարդապետը՝ —Պէնտէք դէնտէրըըըը աը-ըաաէ տըր, բաշըն չէմէթ դէր մէքթօպ էաղըր, էֆէնտըմըըըն Չանթաէ էը կէթաըն, գաէէ—ըաաաաըըըըըն էեթէ էէե բաթրէք

1863 · Տեղապահէն փոլոյին եկած գիրը ·

---

Գայմագամըն Վէրըսըն, ճեմալըն ալըր կէօտըրըլէն կէդէ՝ ճոլը-ըղա կէօրէճէյըմ էֆէնտըմ · բսաւ փոլոյն , — Տէ հայտէ կէդ , եալ ։

Ինկաւ վարդապետը գրեց գիրը , որոյ օրինակն է այս ·

Արբայական Հայր

Մեր նուաստութիւնը այսօր 12 ամիս է որ գիր կը գրեմ, գրիս պատասխանը չի գար մեզ · և կը գրեմ Պօլիս գամ, անոր ալ պատասխան չկայ · չեմ գիտեր իմին յանցանքս ինչ է , որ չէք յայտներ մեզ ։

Ու հիմայ հաճի Քեամիլ փոլոյն մեզի Ձեր Սրբազնութեան գիրը ցոյց տուաւ , թէ քեզի Պօլիս կուզեն . ատ ինչպէ՞ս գործ է , ես ալ չեմ գիտեր . ես կը գրեմ Պօլիս գալ կը խնդրեմ ։ Ինձի պատասխան չէք գրեր · թէ եկո՛ր կամ մի՛ գար . մինակ Մահմետական իշխանութեան կը գրէք թէ զինքը Պօլիս յղէք , մի թէ՞ ես Ձեր Սրբազնութիւնը Մահմետականով ճանչեցի , և կամ վարդապետ ձեռնադրուեցայ , և այլն · Քաւ և մի լիցի ։

Հիմայ հասկցուեցաւ որ ատ գործողութիւնը , սիրտը տէր ինքը հաճիլ ոմանցմէ յառաջ եկած է , վասն որոյ մեր նուաստութիւնն ալ կը պարտաւորի բռնաբար նորէն գրեալ խնդիրները առաջարկել Ձեր Սրբութեան ։

ԽՆԴԻՐ · Ա

Ա · Իմին գանգատաւորս ո՞յք են , եթէ Քէօրթխմանէ՞ն են , աշմ Տէյարպէքիր կայ · Նօգոպ Կաթողիկոս Ասորւոց · և Կիրկիս եպիսկոպոս Տեղապահ , Յակոբ եպիսկոպոս Հա-յոց · Իրթոխղ եպիսկոպոս Քրիստոնեցւոց , Գերապայծառ

Յակոբոս եպիսկոպոս Կաթողիկոսաց, Փիլիպպոս եպիսկոպոս, Նարդու Կաթողիկոսայ. Մակար Եպիսկոպոս Յունաց. վերյ եպիսկոպոս. և մէկ կաթուղիկոս. և այլ իշխանապետք, և իշխանք. Գրեցէք անոնց. թող լաւ մը քննեն, զիս դատախազիս հետ և իմանան.

Ու մեր քննութեան գրերը թող կնքեն յղեն ձեր մեծութեան. ան ատեն ինչ որ հրաման ընէք, պատրաստ եմ կատարելու ամենայն հնազանդութեամբ:

Բ. Ու թէ՝ գանգատաւորս Բալուայ երկրէն է, ահա անոր մայրաքաղաքն ալ Խարբերդ է, ան տեղէն Առաջնորդներուն և իշխաններուն գրեցէք թող քննեն և իմանան, և ձեզ գրեն, և այլն.

Գ. Իսկ եթէ Պօլսոյ մէջէն է գանգատաւորս, շուտով անկէ ձեռագիր մը առէք. որ քաղած ատենը չուրանայ ըրած գանգատը. քանզի Քիւրտիսթանէն մինչև Պօլիս 24 օր ճամբայ. 3 օր ծովու սարսափելի ճամբայ մըն է, հանգիստ բան չէ, ատքան ահագին աւազակաբնակ լեռներ ու ձորեր և ծովեր անցնիլ Պօլիս գալը:

Ուստի կ'աղաչեմ որ յառաջ սոյն գրիս պատասխանը մեզ շնորհ ընել, քանզի երկու տարի և կէս կը լինի որ բոլոր գրածս գրերու պատասխանը չեմ առած, ատ ալ անոնց կարգը չգրուի. որովհետև փաշայն մեզ ատ քան հրաման տուաւ տեղս մնալու, մինչև գրիս պատասխանը շնորհ ընէք.

1863 Ապրիլ 18 — Մկրտիչ Վարդապետ Տիգրանեան

Ի ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Տակաւին Մկրտիչ վարդապետը կ'սպասէր ատ գրին պատասխանը առնելու, մէյ մ'ալ տեսաւ որ երկու Դա-

եկան հրաւիրեցին զինքը Փ[illegible]ին քով ։

Փ[illegible] հանեց նոր եկած [illegible] , ու ըսաւ . — Մ[illegible] [illegible] :

[illegible] ։

Տես հիմայ թշնամիներու անցաւոր ուրախութիւնը , և սնոտի զուր պարծանքը ։

Նա միջոյին Ց[illegible] 18 պարտիզպան Գալուստը եկաւ Տ[illegible] Մ'կրտիչ վարդապետին ոտքը իյնելով , շատ մարդիկ մէջ ձգելով , մեղայ կը գոչէր պանապան [illegible]ներով , թէ զիս Պոլսոյ մէջ քու թշնամիները խաբեցին , և չեղածը եղածի նման ընձի ու՛ր որ կամեցան զրուցնել տուին , ստ իմ պէշութեան փոխարէնը Աստուած ընձի զանազան ձախորդութիններ տուաւ . կ'աղաչեմ ընձի ներես ։

Իւ աչա իմ ըրած զըսպարտութիւնս Հրապարակաւ խոստովանելու համար , ստ գիրն ալ գրեցի Կ[illegible]ներու ղրկելու և հրատարակելու . և քու թշնամիներդ պիտի ամաչեն ստ իմ ճշմարիտ խոստովանութեանս վըայօք , մինչև անգամ տեղւոյդ Յակոբ եպիսկոպոս Նաջնորդն ալ քեզի թշնամի է , թէ որ ձեռքէն գայ՝ ստ ալ ընձի կուզէ որսալ որ քեզի դէշ ըսեմ ։

[illegible] [illegible] կարծ , քիթը երկար , ինքը դեղին մարդ մը կար · ան ալ ընձի կ'ըսէր , ինչու եկեր ես . գնա բանդ , [illegible] ըրէ մնասդ · առնենք վարդապետէն · ես նայեցայ որ քու թշնամիներդ զես իրենց գործիք կուզեն ընել . ստոր համար կաղաչեմ ընձի [illegible] մը ըսես , որ իմ խիղճս հանդարտի ։

Ինչ և իցէ շատ խօսք և խորամանկ կըտրէն եռքը՝ Մ-

սորւոց Սրբազան Կաթուղիկոսը, Գնէրապատու Կօրկիս ալք եպիսկոպոսը, Ըստադ—երէց Տէր Գաբրիէլը, Փոխող—Ծղըա Յակոբ Աղայն և այլ շատ մարդիկ մէջ մտնալով Ողորմեցին լսել տուին. և ելաւ գնաց Բալու։

Իր անոր տուած միղայի և խորոտոքանոնիկան ինկալը ձեռագիրը՝ յիշեալ Սրբազաններու և Յարգելի անձանց ստորագրութեամբ և կնքով վաւերացած Մկրտիչ վարդապետին քով կը կենայ. ուզողը կրնայ տեսնալ։

Մկրտիչ վարդապետն ալ իրեն ճանապարհի պատրաստութիւնները տեսաւ, 1863 Յունիս 30. ելաւ ճամբայ և այն որ Սուրբ Երուսաղեմայ Արժանապատիւ Յակոբ վարդապետը եկաւ Համիթ, որ սուրբ Էջմիածին Եպիսկոպոս օրհնուելու կ'երթայ։

64 ժամ Համիթայ հեռի, եկաւ Էրզրում, տեսաւ Մէր—ուէր Տէօվլէթլի Մուստաֆա փաշայն, Բալուայ և Խարբերդու Հայոց ազգի խղճութիւնը լաւ մը փաշային իմացնելէն ետքը՝ խնդրեց որ քննիչ մը երթայ լաւ տեղեկանայ առաջարկած խղճութեանց Հայոց. և հացի նեղութեանց որն որ Բալուեցիք կը տանէին։

Տէօվլէթլի փաշայն յոյս տուաւ թէ՝ դուն գնա, Աստուծով ես ալ գործը պիտի հոգամ։

Ասկէ և անկէց հարկաւոր գործի մը համար գնաց Թէֆ-լիզ, և անկէց սուրբ Էջմիածին, Սրբազան Մ. Եհափառ Կաթուղիկոսին ներկայացաւ. Սրբազան Կաթուղիկոս Հայրն ալ խոստացաւ իրեն, թէ գնա Պօլիս, ես քեզի համար պէտք եղածը կը գրեմ. ձեր ամէն գործը կարգի կը գրուի Ս. ճակդ ինչպէս ձեր անխնամ ըլլայ եղեր ես. շուտով գնա Էրզրում նստէ, Պօլսոյ քեզի դէր կուգայ գործդ կը կատարի։ Ու ատ միջոցին Խըլիբեան Գրիգոր Աղային և Սի-մոնեանց Պետրոս Աղային, և մնացեալ Ս. ասակով—Կարա-

1863 · Էջմիածին երթալը, Երզնկայ Բաղտասարեան համար ճա-րեն.

---

պետ Աղայն որ աչք Թագաւորի է, սոնք ամէնն ալ գի-տեն · որ Արքազան Մեծափառ Կաթուղիկոսը՝ Մկրտիչ վարդապետին այդպէս խոստանալով ճամբու դնելը ։

Որովհետեւ Մկրտիչ վարդապետը կուզէր սուրբ Էջմի-ածին միաբան մնալ · վասն որոյ Մեծափառ Տէրը կ՚ըսէր, դուն պէտք է Քէօրթիւմանու ժողովուրդը հաւաքարես, բարեկարգելով · և այլն ։ Նաւ սուրբ Էջմիածնէն եկաւ Եր-զրում · դարձեալ գրեց Պօլիս, թէ ես եկայ Երզրում · աչօ ձեր հրամանին համեմատ քանի օրէն ետքը Պօլիս կուգամ ։

Նոյ գիրը Պօլիս ճամբեց, ետեւ Ընկէյէճի պետրոս Աղա-յին հետ եկաւ Երզնկայ, Սեր—ասէր Մուստաֆա փաշային ներ-կայացաւ, Ինդրելուց համար փաշայն պատասխանեց վարդա-պետին այսպէս · —

Տօղրու տէր իքէ Միլլէթսէ ---- էմ Տէօվլէթիւմըզէ, թէ ի-սնիէթանըզէ ֆարսու օլմադըգ, պէօյլէ ֆէրման իձաէ թուտայըր-մուշ, թէ միւսաատէ օլմադըգ դալազայ կէրէկրին Դուտէարէկերէ ։ գէլա պէզ կէլէրսէ ամիրա՝ դէն մէզատէ կէտէաէրզէ էֆքէլէ գէլիրսէ, իսլէրամըզա մէրէդ եարըդ էլէն գըլէաէմ Դարը—Հէա-մայուն ։

Դօսնդան դէօյլէ էյէ օլձագ տըր Սայէյէ—Շահանէյէին · ի-ջէն վէթէլէնըզա էտը, տաղմ օլան դաարդայէ կէլիշէն աըրըն, և այլն ։ Քանի օր ան տեղը նստելով ելաւ անկէց եկաւ Տրապիզոն, քանի օր ալ Տրապիզոն, նստաւ, և ապա 1863 · Դեկտ · 1 շոգենաւին մէջ շատ նեղութիւններ քաշելով ելաւ Պօլիս · Դեկտ · 2ին Օրն Երկուշաբթի ժամ 11ին ։

---

## ԳԼ. ԺԼ.

Գանձէ—գաւառն Թուղ—խանը իջեւանեցաւ. Մասիս լրագրով հրատարակեց, թէ զիս ուզողը՝ թող գայ տեսնէ զիս Թուղ—խանին մէջ:

Ինչո՞ւ համար ուղղակի բարեկամի մէկուն տունը չգնաց, կամ Պատրիարքարանը. որովհետեւ ամէնն ալ՝ Նուպարի օձէն խայթուած էին. ուր որ երթար մտացնուն պիտի անցընէր, թէ իրեն բարեխօս խնդրելու կամ բռնելու համար՝ այս ինչ տուն, կամ այն ինչ տեղ գնացեր:

Վասն որոյ ո՛չ մէկին տունը գնաց, եւ ո՛չ մէկին ալ ըսաւ ընձի բարեխօս եղէք. այլ եւ՝ ո՛վ որ հետս դատ ունի, թող գայ դատը վարէ. ըսաւ ու կեցաւ:

Բայց Պատրիարքարանի նոր Երբաղան Պատրիարքը, եւ նոր Ժողովքը յարմար չսեպեցին խանի մէջ մնալը. վասն որոյ Մեծապատիւ Ազգասէր Պէշլէրեան Յակոբ Էֆէնտին՝ յատկապէս հրաւիրեց զինքը իրեն համար յատկացած նոր բացուած Պատրիարքարանին մէջ սենեակը նստիլ. եւ դատը վարել. ուստի եկաւ նստաւ, եւ սկսաւ դատը խնդրել. եւ դատախազը ուզել:

Ու իրեն իմացուցին որ քեզի համար Արքունի դռնէն հրաման գնաց Էրզրումայ փաշային որ քեզի թոյլ չտայ Պօլիս մտնելու. անկէց շիտակ Կասպից ծովին մէջ յանապատ կղզին աքսոր ընէ:

Ներկայացաւ Կրօնական Ժողովին, ու ըսաւ. մի՛ գիտնաք որ ես եկած ձեզմէ խնդիր պիտի ընեմ զիս ազատելու աքսորութենէս. այլ եւ ձեր վճռած յանցանքիս վճիռը հանեցէք գրածնուդ արձանագրութենէն. տուէք ընձի ձիտս կախեմ. եւ երեք օր ալ Մայր Եկեղեցւոյ դրան առ-

ջև կենամ · ամէն մարդ թող իմանայ , և ապա ձգեմ եր-թամ ապաշխարանքս քաշեմ :

Ասկէ զատ ուրիշ մէկ հանք մըն ալ չեմ տեսած որ ժանգ չի բռներ , ամէնն ալ ժանգաւոր են · որ ասիկայ բնական է : Բանզի պղնձին , երկաթին , արծաթին , իրենց ժանգ բռնելը հասարակօրէն կամ յատկապէս մէկ պակա-սութիւն մը չէ · իսկ ժանգին մէջ մնալ և փթտիլը պղնձի տիրոջը մեծ յանցանք է՝ որ չէ սրբեր և մաքրեր զանիկայ Կլայէկով · և այլն :

Մարդուս ալ մեղք գործելը իրեն պակասութիւն մը չի-կրնայ սեպուիլ, քանի որ իրեն մեղքին վրայ կը զղջայ և կ'ապաշխարէ :

''Եթէ ասեմք ոչ ինչ մեղաք , սուտ առնեմք զնա · և եթէ ա-սիցեմք եթէ մեղս ինչ մեք ոչ ունիցիմք զանձինս խաբեմք և ճշմար-տութիւն ի մեզ ոչ գոյ ,, · Յօհ · Ա · 8:

''Բանզի՝ ''Միտք մարդոյ ի մանկութենէ ի խնամս չարին արթնացեալ է ,, · Ծննդ · Զ · 5:

Բայց Տէրն մեր Յիսուս՝ մարդս մեղանչական ըլլալու համար ըսաւ · ''Եթէ ապաշխարեսցէ թող նմա ,, · Ղուկ · ԺԷ · 3:

Եւ թէ որ մեղքը մեղաւոր մարդը բանի տեղ չդնէ , միշտ մեղաց մէջ մնալով պիտի փթտի և կորնչի · ինչպէս որ պղինձը ժանգին մէջ կը փթտի · վասն որոյ ըսաւ Յիսուս · ''Եթէ ոչ ապաշխարիցէք , ամենեքեան նոյնպէս կորնչիջիք ,, · Ղուկ · ԺԳ · 3:

Հիմայ ես ալ շնորհակալ կ'ըլլամ ձեզանից , որ լաւ հասկցեր և իմացած էք · որ իմ ժանգ մեղքի մը մէջ ընկած մնացած ըլլալս · անկէց զիս սրբելու համար Կլայէկ աքսո-րութիւնը վրաս քսելու պատրաստ ըրած էք : Ուրեմն յայտ-նեցէք ընձի ալ իմին յանցանքս գրով և ստորագրութեամբ , առնում երթամ սրբուիմ , ինչպէս որ մարգարէն ալ կ'ը-

սէ. «Լուացարուք սրբեցարուք. բարձէք զչարիս ձեր յան-ձանց ձերոց առաջի աչաց իմոց». Եսայ. Ա. 16:

Ես զիս արդար չեմ քարոզեր, ես ալ մարդ միշտ սխա-լական եմ, ինչ մարդ որ անսխալ է և անմեղ, անիկայ թող իմ մեղքը յայտնէ. ինչպէս որ Քրիստոս տէրը ըսաւ. «Ան-մեղն 'ի ձէնջ նախ նա ընկեսցէ քար 'ի վերայ դորա». Յոհ. Ը. 7:

Արդ թէ ո՛ւր ինչ չարչարանք և նեղութիւններ են, որ այսօր 18 ամիս է իմ գլուխս եկած է. եթէ գէշ մարդ էի, ինչու Պոլսոյ հանեցիք. և եթէ լաւ մարդ էի, ինչու վիճակներս ձեռքէս առնելու կ'աշխատուի՝ և գլխ Սահմանադրա-կան իշխանութեամբ Պոլիս բերուելու կը հրամայուի:

Ինչ և իցէ ելայ եկայ Էրզրում, որ Պոլիս պիտի գամ. Էրզրումէն յԱնապատ աքսոր ղրկելու, ինչու Արքունի դուռնէն հրամանագիր կ'առնուի և կը ղրկուի Էրզրումայ փա-շային. թէ Պոլիս չմտնալով յԱնապատ աքսոր ըլլուի:

Մեք Տէրսըմու ապստամբներէն և Անապատի Արաբա-ցիներէն չենք, որ աշխարհը տակնուվրան կ'ընեմք. խղճալի Հայոց ազգի մը անզօր և տկար վարդապետ մը, ո՞վ է թշնամիս՝ թող ելլէ հոս դատ վարէ, և կամ վճռուածնուդ յանցանքիս գիրը, խնդրեմ, թող տրուի ինձ, որ առնեմ եր-թամ. ըսաւ ու լռեց:

Արքազան Պատրիարքը պատասխանեց. ես տակաւին նոր եկած եմ, քու հին գործերուդ վրայօք տեղեկութիւն չու-նիմ. Ժողովքն ալ պատասխանեց թէ՝ աս գործը մեր օրո-վը չէ եղած. այլ և Խառն ժողովին օրովն եղած գործ մի է. վաղը Քաղաքական ժողովին դիմէ անկէց խնդրէ դա-տախազդ. և այլն.

Միւս օրը Քաղաքական ժողովին տուաւ խնդրագիր մը, Քաղաքական ժողովը վճռեց հաստատուիլ մէկ Խառն Գօ-միսիօն ժողով մը. տասը աքսոր ըլլալու պատճառը քննելու

1864. Մկրտիչ վարդապետ դարձ կը տեսնէ, անդադա-դար կ'ուզէ, և կը գտնէ Յարթիւնեանց, և Ռշտունին կը հա-խանջէ։

---

համար։

Կրօնականէն ընտրուեցան Էրժանապատիւ Երրահամ վարդապետ. Բարեկրօն Տէր Յովհաննէս Ճէնտերեան դէյէնդէ. և Տէր Փիլիպպոս գիտնական բարեմիտ քահանայքը, և Քաղաքական ժողովքէն՝ Գերապատիւ Գէորգ Աճէմ. Պէյլէրեան Գերապատիւ Յակոբ Էֆէնտին. Զրանկեան Գե-րապատիւ Յակոբ Աղան։

Յիշեալ Գերապատիւ ժողովը գումարեցաւ Մեծա-պատիւ Պէյլէրեան Յակոբ էֆէնտիյու տանը մէջ, որ 'ի Կէ-տիք—Փաշայ. 1864 Յունիս 16. Օրն Հինգշաբթի։

Մկրտիչ վարդապետի վրայօք թէ բանիւ և թէ գրով եղած ամբաստանութիւնը, կարդային և քննեցին, և Մկ-րտիչ վարդապետի ձեռքը եղած գրերն ալ նայեցան, ար-սորուելու յանցանք մը չգտան յիշեալ վարդապետի վրայ, վասն որոյ Տեղեկագիրը գրեցին և կնքեցին, մատուցին Կրօ-նական և Քաղաքական ժողովին և Երլաղան Ամենապա-տիւ Պատրիարքին։

Երբոր խաչը լսեց Մկրտիչ վարդապետը առանց յան-ցանքի և դատապարտութեան մնաց, իսկոյն մտեցաւ ար-դարադատ այժմեան Կաչութեան ականջին ու լսաւ. "Եթէ արդարև ըրա՝ չէս խաչեալ կայսեր". Յհ. ԺԹ. 12։

Արթուն Կաչութիւնը խաչուէն հարցաւ, թէ ինչ ը-նեմք ասոր. "Ես ըսա ինչ ոչ գտանէ յանցանս յայսմիկ, զորս դուք (և գինեկրատոսք 'ի ձեզ) ամբաստանէք զդմանէ. Ղուկ. ԻԳ. 14։

Էն ատեն գնաց շուտ մը խաւարը աղաչեց փոփոխամիտ Լօռանէն, որ իրեն ձեռքի Աստղներով օգնութիւն գայ. և դարձաւ անկէց եկաւ եւ ներկայացաւ Արքին Կաչու-

1864 · Մկրտիչ վարդապետ Խրիմեանը կ'ուղևորի Երուսաղէմ երթալու , և կը յաջողի երթալ :

---

թեան և սկսաւ սաստկութեամբ ըսել . " Հեղ զբարկութիւն քո ի վերայ նոցա . . . լցո զերեսս նոցա անարգանօք . . . ճանաչել զանձն նոցա անարգանօք . . . ապա յեկեղեցւոյ ոչ . . . եղիցի քեզ իբրև զհեթանոս և զմաքսաւոր . . . և ընկեցէ՛ ի խուռն հանն զդա ,, : Սղմ . ՀԸ . 6 : ՁԲ . 17 : Մատթ . ԺԸ . 17 : Յով . ԽԹ . 6 :

Երբոր տեսաւ խաւար գիշերը , իրեն առաջարկութիւնը , չգործադրուեցաւ . և Մկրտիչ վարդապետի յարգը տեղը . թէ նախկին Երուսաղէմ Պատրիարքներուն քով , և թէ այժմեան Երուսաղէմ Պատրիարքը հօր քով . և թէ այլ Գերաստիճան եկեղեցականաց մօտ :

Նա իրեն տեսաւ Պատրիարքարանի մէջ յատուկ գեղեցիկ սենեակ մը Մկրտիչ վարդապետին համար պատրաստած , ազատ համարձակ կը նստի և կ'ելլէ , միանգամայն սրտի նախանձը սուր սլաքի նման սկսաւ խանձել զինքը :

Ուստի տկար միջնանց պէս օր — հանիւն մէջ ըլլալով , թէ առին սկսան շրջել . յիշեալ վարդապետին դարան մը լարելու , յանկարծ տեսան զինքը Գերապատիւ Պէյլէրեան Յակոբ էֆէնտիին տանը մէջ համարձակ նստած :

Նաև անկէց ետքը Մեծահաւատ Զրաճեան Սարգիս և Յարութիւն Աղաներու , և Հարէնց հօճի Իբրահամ Աղայի , և կէօրճի — օղլու հօճի Նշան Աղայի , Գրանկեան Յակոբ Աղայի և այլ Մեծահաւատ Յարգելեաց , որոց որ տուներնին մօտ էր Պատրիարքարանին . կը տանէին զինքը ըստ արժանւոյն կը պատուէին . թող այլ հեռաւոր թաղերէն և գիւղերէն որ կը տանէին . ինչպէս որ կ'երևէր . և մինչև ցայսօր կը հրաւիրեն և կը տանին ::

Նոյնպէս տեսնելով ևս Աթոռը , սկսաւ սաստիկ նախանձութեամբ և մախանօք տոչնալ , խանձիլ և պապակիլ , ուստի վեր առաւ ինքը զինքը Հայր Աբրահամին

1864. Բաղդատայ մողեսը, և Յամբայ Կէխան, Պօլսոյ խառարը. և Նոյմէր են իրենց չէրենցէ մինչև ողանցեն զՄօղու։

---

*խորանին առջև, և կը խնդրէր Ղազարոսի ցաքէն մաքէն նաբէլ մը ջուր պագանելու լեզուին. այսինքն՝ Սրբութենէն Մկրտիչ վարդապետին համար փոքր վճիռ մը դատապարտութեան ելլելու կ'աղաչէր. ատ խնդիրն ալ 'ի դերև ելլ. առաւ պատասխանը թէ՝* «Վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ»։ Ղուկ. ԺԶ. 26։

*Երբոր ասկէց ալ յուսահատ եղաւ, ձեռք զարկաւ յայլ և այլ ճամբաներ բանալ և գտնալ. կերպով մը իրաւունքը կորսնցունել կ'աշխատէր. ուստի ձայն տուին խա-ղքէն, թէ ետդդ հանգիստ կեցիր. քանզի անաչառ ճշմարտութիւնը և սարսափելի արդարութիւնը՝ հրեղէն սրով կը պահեն զճանապարհ* ծառոյն կենաց. *այսինքն՝* դրախտին Եդե-մայ։ Ծննդ. Գ, 24։

*Նա մեր Տէր Յիսուսն ալ սարսափելի ձայնով մը բսաւ.* «Մի խոտորեսցիս յաջ կամ յահեակ. «Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտցէ, կեցցէ. Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ոչ մտանէ ընդ դուռն 'ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ, նա գող է, և աւազակ. իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց. Յոհ. Ժ, 9։

*Տեսաւ* Բանջը խառարը, *որ իրեն հնարքները ոչինչ եղաւ. իսկոյն արձակեց* Գէշէրթաշը *արտաքին խաւարներուն մէջ, Բալու, Յամիթ, Քիւրդիսթան, կամ իսկ Պօլսոյ մէջ. կը խնդրէր իրեն մթութեան օգնութիւն։*

*Ուստի շրջեցաւ* Գէշէրթաշը, *գտաւ քանի մը* Թէքէա (Քէր-ձանէ). *առաւ բերաւ* խառարին, *որպէս թէ ատ* Թէքէաները *կը խոստանան ճրագին բոլորտիքը շրջելով մարեն լոյսը. Մկրտիչ վարդապետի համբաւը։*

*Արախացաւ սնոտի* խառարը, *որպէս թէ* Թէքէաներու *զօրութիւնը հաստատուն և դիմացկուն բան մը իմացաւ. իսկ՝ երբոր մօտեցան ճրագի լուսին, իսկոյն թևերնին ատ-*

**1864**. Սէրոբէ Վարդապետի համբերութիւնը կը կտրէ, փորձէ չերկարէն, նոր ճնշումներ կը գտնէն Վանեցիք։

---

քերթին գլուխին այրեցաւ, Թափիւցան աշտանակին բոլորտիքը, անատեն խաւարը տրամեցաւ, Գիշերահաւը լացաւ։

Սա գործողութիւններն ալ ունայնացաւ, և սկսաւ խաւարը և իրեն արբանեակ Գիշերահաւը 'ի միասին գիմել փոխարէն Լուսինն, ու անոր հետ Աստղերուն, այսինքն՝ փոխանորդ Թշնամոյն ... ով էնէ ... խօսք տուաւ Լուսինը, որ համբերեն սակաւ ինչ հնութեան օրերուն, որ մարդ չիտեսնայ զինքը մթութեան մէջ, խաւարը նստաւ Գիշերահաւն ալ գնաց ինչ քան փորթ ու կէսայ կայ՝ ժողովից եկաւ։ Ժողովեցան 'ի միասին վասն Մկրտիչ վարդապետի, և վասն որոգայթելոյ նորա։

Սոյն ժողովուին, նայինք ինչ պիտի ընեն. այժմեան Մարշուդութիւնը երկու ունկն ունի. մինն՝ քաղաքացիներուն, և միւսը՝ գաւառացիներու, զերկուսին ալ պիտի լսէ և իմանայ։

Սէպէտ Դաւիթ մարգարէն մեզի խմաց կուտայ լսել. "Խորհեցան միաբանութեամբ 'ի միասին, և վասն Սէրոբէ վարդապետի ուխտ արարին,,. Սաղմ. ՁԲ. 6։ "Եւ նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել մինչև սպանցեն զՊօղոս,,. Գործ. ԻԳ. 12։

Իսկ մեք Մկրտիչ վարդապետին խմաց կուտամք լսել, հոգ մի՛ ըներ. "Ընկեա՛ 'ի Տէր զհոգս քո, և նա է՝ որ հոգայ վասն ձեր,,. Սաղմ. ԾԴ. 23։ Ա. Պետ. Ե. 7։

Ընծի նայէր քեզի զրուցեմ, Պօղոս առաքեալին Աստուած Հազարապետը զրկօղ ՓՐԿԻՉԸ, Մկրտիչ վարդապետին ալ Աստուած Հարիւրապետ մը, կամ Էֆէնտի, կամ Աղայ մը պիտի յղէ. Որ անոնց չճշմարտութիւնն գայ առ լոյս։

Մտիկայ ուրիշ խօսք է, ահա տես՝ չորս կողմէն կ'աշխատին տոր մեծամեծ փնաներ հացունել, ահաւասիկ Տէրտէրներու դէմէն կրկին՝ կարծ գլուխը հաներ դուրս,

**1864**. Մկրտիչ վարդապետ համբերութիւնը կը սիրէր, բարձր կերկերէն, Նոր Նշանտներ կը գտնէն հանելու։

---

քեղինին գլուխնին այրեցաւ, թափեցան աշտանակին բոլորտիքը, անատեն խաւարը տարածեցաւ, Գիշերահաւը լացաւ։

Մո գործողութիւննին ալ ունայնացաւ, և սկսաւ խաւարը և իրեն արբանեակ Գիշերահաւը 'ի միասին դիմել յաղթանակի Լուսնին, ու անոր հետ Արուսեակին, այսինքն՝ յաղթանակ թշնամոյն ... ով է նէ ... խօսք տուաւ Լուսինը, որ համբերեն սակաւ ինչ հնութեան օրերուն, որ մարդ չիտեսնայ զինքը մթութեան մէջ, խաւարը նստաւ Գիշերահաւն ալ գնաց ինչ քան զօր ու կէսօր կար՝ ժողովից եկաւ։ Ժողովեցան 'ի միասին վասն Մկրտիչ վարդապետի, և վասն որոգայթելոյ նորա։

Մող ժողովուին, նայինք ինչ պիտի ընեն. այժման Մարչութիւնը երկու ունկն ունի. մինն՝ թողութեանը, և միւսը՝ դատախազները, զերկուսին ալ պիտի լսէ և իմանայ։

Մեկպէտ Դաւիթ մարգարէն մեզի իմաց կուտայ ըսելով. «Խորհեցան միաբանութեամբ 'ի միասին, և վասն Մկրտիչ վարդապետի ուխտ արարին»։ Սաղմ. ՁԲ. 6։ «Եւ նորոգեցին զանձինս ուխտել և ուխտիլ՝ մինչև սպանցեն զՊօղոս»։ Գործ. ԻԳ. 12։

Իսկ մեզ Մկրտիչ վարդապետին իմաց կուտայ ըսելով, հոգ մի՛ ընեք. «Ընկեա 'ի Տէր զհոգս քո, և նա է՝ որ հոգայ վասն ձեր»։ Սաղմ. ԾԴ. 23։ Ա. Պետ. Ե. 7։

Ինձի նայիր քեզի զրուցեմ, Պօղոս առաքեալին աղաւաղեր Հաւատացելոց զՊօղոս ՓՐԿԻՉԸ, Մկրտիչ վարդապետին ալ աղաւաղեր Հաւատացելոց Պէյ, կամ Էֆէնտի, կամ Աղայ մը պիտի յղէ. Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն։

Մտիկայ ոչինչ խօսք է, աչա տես՝ չորս կողմէն կ'աշխատին ատոր մեծամեծ փնտուներ հասցունել, աչաւասիկ Տէյարդէքէրու թաղին կէսէն՝ քանի գլուխը հանեք դուրս,

կեացես ,, · Յօբ · Բ · 7 ։ Նոյն Մկրտիչ վարդապետն ալ իմա-ցաւ ատ լուրը · ինքն ալ բարձր ձայնով ըսաւ · Ե՛րթ զոր ինչ առնելոց ես , արա վաղվաղակի ։ Ըստ այն "Ե՛լ յայնժամ արտաքս և էր գիշեր ,, · Յոհ · ԺԳ · 30 ։ Նման որոյ՝ "Եւ ել սատանայ յերեսաց Տեառն , և եհար զՅօբ չարաչար կեղով , յոտից մինչև ցգլուխ ,, · Յօբ · Բ · 7 ,

Ասկաւ գործերը օրէ օր ետ ձգուիլ, շաբթէ շաբաթ երկարիլ · հին ու մին թղթեր հանել , առօրեայ կեցու-թեան անձին աշխատող անօթի անօտի կոյսով թշնամիներ գտնալ, խաւարին չարութեան օգնելու , որով Մկրտիչ վարդապետին մնալսլու ։

Մինչև ցայս վայր ըսածնուն և ըարածնուն որոգայթնե-րը Ըրիին վարչութեան արթնութեամբը , անոնց բոլորն ալ սուտ ըլլալը յայտնեցաւ և աներևոյթ խաւարին սևութիւնը խայտառակեցաւ ։

Այս անգամ խաւարը Գէչէրհանին հետ խորհուրդ ընե-լով, անանկ գործակատար մը գտնան , որ ուրիշ գործ մը չունենայ , և զբաղմանց մէջ չըլլայ , որ մինակ խաւարին գոր-ծին պարապի ։

Ըստ որ գնաց Գէչէրհանը չորս կողմ աշխարհին շրջե-ցաւ չկարաց անանկ անձ մը գտնալ, որ զբաղմանց մէջ չըլ-լայ , վերադարձաւ Պոլիս · երբոր Նեփի—փոլէն եկաւ որ ներս պիտի մտնար , տեսաւ մէկը որ հիչ զբաղմունք չու-նէր , միշտ ուրախ սրտիւ , զուարթ երեսօք , բերանը ծաղր , լեզուն դատարկախօս կը շրջէր ։ Սէրը անմաքի 'ի դառն տարա-խաւնեան ։

Երբոր խաւարը տեսաւ ատ մարդուն բերանը բաց է , իսկոյն ինքը և Գէչէրհանը մտան ատ խեղճին բերանը և ի-ջան սրտին մէջ · սկսաւ Գէչէրհանը իրեն թևերով խառնել ատոր մաղձոտ սիրտը , ու տակնուվրայ ընել ։

**1864. Մաքրուհի և Պարտիզպանի քոյրը Տօն Խաչը և Գէ-ղերահանը. Տարդէ Խաչը կը սիրեն լուսէն առնել։**

---

Ուստի անմիտ խղճալին ալ չդիմանալով, կամայ ակամայ՝ սրտին մէջ թթուած և հոտած հիւթերը եա գալով, բերնէն դուրս թափելով, լցուեցաւ մեղուի յաւելուածին. ու աղետըց յաւելուածին մէջ, և գէշ հոտերը առնողը տանը դուռը գոցեց. մինչև անգամ իրեն դուռն ալ գոցեցին. գինքը տանը վռնտեցին որն որ՝ մինչև ցայսօր իրեն կնոջմէ տունէն վռնտուած աջախները մնալը աշխարհին յայտնի է։

Նոյ Խաչը ինչպէս որ աս Մաքրուհին փորը մտաւ, իրեն Գէչէրահատումը. սանկ ալ՝ 1861 Հոկտեմբերին խղճալի պարտիզպանի փորը մտաւ, մեր Նախամայր Եւայի օձին նման. ուր որ թևը թոթուեց Գէչէրհանը. նոյն տեղը տարաւ, բերանը բացեց իրեն սրտին ուզածը ըսել տուաւ, որպէս թէ իրեն չար կամքը կատարել տուաւ պարտիզպանի ձեռքով։

Ինչպէս որ 1863 Յունիս 12. նոյն պարտիզպանը իրեն Յեսաքէր Անտրաքէրօվը, եկաւ Տէյարղէօէր Մկրտիչ վարդապետի ոտքը ընկաւ, ամենայն ճշմարտութեամբ խոստովանեցաւ, ինչ որ իրեն սորուեցուցեր և զրուցնել տուեր են։

Նսորւոց Արքազան Կաթուղիկոսին, Գէորգ եպիսկոպոսին, Նուագ Տէր Գաբրիէլին, Գերապատիւ Մուրատ Աղային, Փոխաղ—օղլու Յակոբ Աղային, Խորղան—Սերրաքէ մահտեսի Կիրակոսին. և այլ Երևելեաց առջև բերանով և գրով խոստովանեցաւ. որոյ յիշեալ անձանց ստորագրութեամբ պարտիզպանի խոստովանութեան ձեռագիրը Մկրտիչ վարդապետին քովն է։

Նա գէշութիւնները բոլորն ալ ընողը, Խաչը ու Գէղերհանն են. և իրենց մէջ գտնուած Մօր Աղաչէրը. Արքազան Նուաքեւլոյն ըսածին պէս. «Թողքէւլ ղողղուր Տանու-

1864. Գեղ մարդոց ֆրաձները ղնարդաւ, այլ օգտակար Լրագիրներ և գրքեր կարդալու է։

---

ղործն, մոլորեցան զհետ ճանապարհին Բաղաամու Բէօրեայ,, Բ. Պետ. 15.

Վասն որոյ մեր Տէր Յիսուս, այդպիսի կոմապաշտ մարմին անհոգի մարդոց համար ըսաւ. «Եւ այս է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս։ Ինչու համար մարդիկ խաւարը լուսէն աւելի կը սիրեն, ով Տէր իմ Յիսուս։ Ահա «Զի էին գործք նոցա չարութեան,,. «Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս. եւ որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն,,. Յով. Գ. 21։

Որդ՝ «Գիշերն մերձեցաւ... — Ի տարէ ես ոչ երկեայց... — Զի լոյս եկն յաշխարհ... — Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց,,։ Հռով. ԺԳ. 12. Սաղմ. ԾԱ։ Յով. Գ. 19. Սաղմ. ԻԶ։

Սերեմ սիրտը մաղձոտ, բերանը հոտած մարդոցմէ հեռի մնալու է, ըստ առածին. Կէս ամբարշտէն՝ հեռու փախիր. Ճիշդ ամբարշտէն՝ ճիշդ փախիր։

Գուն՝ բարեմիտ ընթերցող, այդպիսի ձեռ, հոտած և ներսած դարձուածներէն քեզի ազատ պահելու համար՝ կը հրաւիրեմ քեզի աղաչելով թէ՝ կարդա քեզի Աստուածաշունչ, կարդա քեզի ընտիր Մատենագիր, կարդա քեզի Աշխարհագրութիւն, կարդա քեզի բարի օրինակներով լեցուն բարոյականի լուսնելու վերաբերեալ վեհանձն հեղինակներէն հրատարակուած Լրագիրներ. գոնէ թէ հոգւոյդ և թէ մարմնոյդ մէկ օգուտ մը վաստկիս և շահիս։

Մի կարդար անանուն և աննշան տունէն վնասուած մարդոց գրուածները. որուն մէջ դեղ կը հոտի, և վնասակար խոյթ խղճմտանքներուն կ'ընծայի. որ այսպիսեաց համար Մովսէս կ'ըսէ. «Կայ զղջնջեցէն բերանոց խոր-

**1864**. Օձերուն գլխուն կոխել, Հայկին նմանիլ. ճշմարիտ ժառանգ ըլլալ Նախահարց:

---

խանց, և նման է 'ի յընման նոցա,,. Սաղմ. ԾԱ. 8.

*Այդպիսի մարդը գիտնական մի՛ ճանչեր. անոր քովը գտնուած գիտութիւնը* փուչ ու փուշ *է ըստ առածին. տե՛ս ինչ կ'ըսէ Յակոբոս սրբազան Առաքեալ այդպիսի մարդոց գիտութեան համար. կուզէ* աշխարհական *ըլլայ, կուզէ* եկեղեցական. "Իմաստութիւն այս ո՛չ է իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր, շնչաւոր և դիւական,,. Յակ. Գ. 15. *Սաղմոսն այ՝ նորին՝* "Ո՛չ իմացան և ո՛չ 'ի միտ առին. 'ի խաւարի գնացին,,. Սաղմ. ՁԱ. 5. *Ուստի՝* "Չէ ո՛չ ինչ 'ի բերան նոցա ճշմարտութիւն, և սիրտ նոցա նանրացեալ են. Որպէս գերեզմանք բաց են կոկորդք նոցա, և լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն,,. Սղմ. Ե. 16:

*Սրբազան Առաքեալն ալ կ'ըսէ.* "Սոքա են շփոթք երթեալք ըստ իւրեանց անձանց ցանկութեանց, և բերանք նոցա գոռ-բարբառանս բարբառին, առնուն աչս երեսաց վասն շահի... Նշաւակեալք շնչաւորք են. որք զհոգին ո՛չ ունիցին,,. Յուդ. Ա. 16:

*Ուրեմն՝* "Որ ասէ զամբարիշտն թէ արդար է, անիծեալ 'ի ժողովրդոց եղիցի. և ատելի ազգաց,,. Առակ. ԻԴ. 24.

*Այդպիսի մարդը կը նմանի* օձի *և* քարբի, *որ աշխարհի պոչովը գոցեր ականջին ծակը. ինչպէս որ կ'ըսէ Մարգարէն.* "Որպէս իժի և քարբի որ խցեալ է զականջս իւր. որ ո՛չ լուիցէ նա զձայն թովչէ ճարտարէ և մ'առցէ դեղ 'ի դեղատուէ իմաստնոյ. վասն որոյ Աստուած փշրեսցէ զատամունս նոցա 'ի բերանս իւրեանց,,. Սաղմ. ԾԷ. 8:

*Ահա այդպիսի* օձ *և* կարիճ *գործով մարդը իրեն գրուածներովը ոտաց ներքև առնելու իշխանութիւնը, մեր Տէրոջմէ տրուած, է ինչպէս որ կ'ըսէ.* "Ահա ետու ձեզ իշխանութիւն, կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն,,. Ղուկ. Ժ. 10:

1864. Սերկեւիլին ծաղիկը կ'անցնի, ծածկոյթը կ'օրհնուի:

---

Թէպէտ Մկրտիչ վարդապետը աս տեսակ փնտռակարներուն համար աղօթող է, միշտ դարձի գան. բայց մենք պիտի կոխենք անոր գլխուն երբոր դարձի չգան և չզղջան եւ կենալով իրենց չարութիւնէն: Քանզի մեզի կ'ըսէ Մարգարէն. "Ի վերայ իժից և քարբից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառեւծն և զվիշապն. —Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա, հովանի եղեց նմա, զի ծանեաւ զանուն իմ". Սաղմ. Ղ. 14: Քանզի Այս են յաւիտենական կեանք զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս: Յոհ. ԺԷ. 3:

## ԳԼ. ԺԸ.

Քանի որ Մկրտիչ վարդապետը ազգութեամբ իրեն Նախահօր Հայկին և Յաբեթին ընթացից հետեւիլ կ'աշխատի և կրօնիւք ալ Քրիստոսի Աստուծոյ մերոյ քարոզած Սուրբ Աւետարանի պաշտօնը գլուխ տանելու կը ցանկայ և կը փափագի. արդարեւ շատ քիչ ազգայիններու փորը պիտի պատռի, և ատամունքնին մանրուի, և ճանկերնին խորտակի. և շատ թիւնալի սողունքներ ալ իրեն ոտքին ներքեւ պիտի խոնարհին ճշմարտութեան համար, քանզի "Հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա: զխաշն և զարջառ և զանասուն բնաւ". Սաղմ. Ը. 8.

Քանզի ամէն մէկ ծնունդ՝ իրեն հօր նմանութիւնը իրեն քով պիտի գտնուէ, ինչպէս որ Իմաստունը կ'ըսէ. Երբէք հողաղաղ՝ զնմանութիւն հօր յինքեան բերէ:

Ասպա ուրեմն ամէն մէկ անձը՝ որ կ'ըսէ ես Հայ եմ, ես Արմէնի եմ, պէտք է, թէ մասամբ ինչ, և թէ բոլորովին. իրեն հօր նմանութիւնը քովը կը գտնուի:

Հայկը չի զիջաւ ամբարտաւան Բէլի խնդիրը կատարե-

լու. իրեն մասնաւոր մինակ անձի օգտին և շահու համար. և չմտնեց իրեն անմեղ զաւակները անոր անաստուած մոլորութեան: Այլև Աստուծոյ դէմ դրաւ անոր ամբարտաւան անհաւատութեան, և Աստուած ալ օգնեց իրեն. որ կործանեց Բէլը յերկիր, և ազատեց իրեն զաւկները անաստուած մոլորութեան պաշտող Բէլի ժանիքներէն, և եղաւ տէր երկրին. անխարդախ քաջութեամբ, և աննենգ սրտով, և անկեղծ հաւատով և սիրով:

Հայկը չխոնարհեցաւ ինքնախնդիր և ոխակալ ուղտերուն, չընկերացաւ գէշակեր գազաններուն, և չպատուեց շողոքորթ աղուէսները, և չսիրեց կեղծաւոր կապիկները, և ներս չառաւ թունաւոր սողունները, և չսիրեց աղբակեր թռչունները և ականջ չտուաւ գիշերահաւուն, և մտիկ չըրաւ Անգեղին և Ագռաւին, և չմոլորեցաւ Խաւարին, վասն որոյ հռչակեցաւ անուամբ, բարձրացաւ համբաւով, պսակեցաւ գործով, փայլեցաւ Պայազատ անունով: Քանզի դիւցազն էր. Աստուծմէ վկայեալ արդար Նոյ—Նահապետի հարազատ Յաբեթ զաւկի օրհնեալ շառաւիղէն յառաջ եկած բարի և հաւատարիմ ծնունդն էր:

Արդարև օրհնեալ ծնունդ և հաւատարիմ զաւակ արդար Նոյին, որոյ Քամ որդւոյ յայտնած մերկութեան, ծածկող գտաւ, անբան անասուններուն նման ամօթանքը չբացաւ նստաւ, և չնմանեցաւ նոցա. ինչպէս որ Քամ նմանեցաւ. և հօրը մերկութեան քարոզիչ ցուցաւ:

Երբոր արդարն Նոյ 'ի գինւոյ թմրեալ, մերկութիւնը բացուած կը քնանար. և Քամ սկսաւ աղաղակել և քարոզել երկու եղբարց հօրը մերկութիւնը, յանկարծ զարթեաւ առիւծն Նոյ 'ի թմրութենէ գինւոյն, և իմացաւ հոգւով. եթէ Քամ հեգնած և ծաղրած և յայտնած է իրեն մերկութիւնը: Աստի սկսաւ առիւծօրէն անիծանել

1864. Մարդոյ չէ՛ր ուրեք, և Քրիստոս ի՛նքն, Միջնորդն է Հօրը՝

---

զԲամ և ասել: "Անիծեալ Քանան ծառայ, և եղիցի ծառայ եղբարց իւրոց. և Յաբեթի ծաղկելն ալ՝ գիտնալով օրհնեց զանիկայ ըսելով՝ "Ընդարձակեսցէ Աստուած Յաբեթի, և բնակեսցէ ի տուն Սեմայ. այսինքն՝ ի հաւատս Քրիստոսի": Ծննդ. Թ. 27.

Հիմայ մեր Նոյ Նահապետ Նախահայրերնուս սորվեցար մերկութիւնը խայտառակող և յայտնողը անէծքի ներքև ըլլալը, և մերկութիւնը պահող անձին ալ օրհնուիլը:

Նոյնպէս՝ Եղիսէ մարգարէի գլխոյ կնտակութիւնը յայտնող մանկունքները երկու արջերէն պատառ պատառ ըլլալնին կը տեսնամք. Դ. Թագ. Բ. 23. Աստուածաշնչա-կան Քերթէն Վէլ:

Ե՛լ կնտակ, ե՛լ կնտակ ձայնելովնին. Եղիսէէն անիծուելով մատնեցան արջերու բերանը, և մեռան. որովհետև Աստուած ըսաւ. "Մի՛ մերձենայք յօծեալս իմ, և ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք": Սաղմ. ՃԴ. 15: Ու իշխանաց համար ալ ըսաւ. "Մի՛ բամբասեսցես և մի՛ հայհոյեսցես զիշխան ժողովրդեան քո": Ելից. ԻԲ. 28: Գործ. ԻԳ. 5: Ու առհասարակ ժողովրդին համար ալ ըսաւ, "Սիրեցէք զմիմեանս. Եւ որ ասիցէ ցեղբայր իւր յիմա՛ր՝ պարտաւոր լիցի գեհենին": Մատթ. Ե. 22.

Հիմայ աս մարմին անհոգին՝ իրեն մատուըններէն թափած սեէն, ո՛չ Պատրիարք, ո՛չ Կաթուղիկոս, ո՛չ Եպիսկոպոս, ո՛չ Քահանայ, ո՛չ Ամիրայ, ո՛չ Պէյ, ո՛չ Էֆէնտի, ո՛չ Աղայ, ո՛չ Ժողովուրդ ազատեր, ամենուն վրայ սեը կաթեցուցեր. ա՛լ ապագայ տարիներուն, Պատրիարքցու, Վարդապետացու, Քաղաքական և Կրօնական ժողովներուն անգամակից ընտրուելու մարդ չէ թողեր իրմէ 'ի զատ, երեք տարիէն ետքը բոլորն ալ իրեն յանձնել՝ դուրս ելլե-

շու է · յաւիտեանս ամէն :

Երբ կարդացիք և իմացաք որ՝ մէկու մը եղած մեղքը պակասութիւնը յայտնողը՝ անէծքի և պատժոյ ներքև Աստուած մատնէր, որպէս Քամ և մանկունքները · հապա՛ ո՞ւր պիտի մնայ ան մարդը՝ որ չեղածը՝ իբրև եղած, և չտեսածը՝ որպէս տեսած · չէ թէ բանիւ, այլև գրչիւ և Մամուլի ներքևէն հանել հրատարակել հեռաւորաց և մերձաւորայ :

Քամ իրեն հօր մերկութիւնը միայն երկու եղբօրը իմացոյց · մանկունքները Եղիսէ մարգարէի կնտակ ըլլալը միայն իրենց Հենի մէջ յայտնեցին · որ ատքան անիծուեյան և պատժեցան · իսկ՝ ասիկայ յարևելից մինչև ցարևմուտս հռչակեց և պոռաց · և արդեօք ատոր տեղը ո՞ւր պիտի ըլլայ · և ինքը ի՞նչ տեսակ պատիժ պիտի տեսնայ, որ իրեն առօրեայ հաց ցաւոց ուտելու երկու դրամ շահուելուն համար՝ ատ մատնութիւնները և զրպարտութիւնները ըրաւ և կ՚ընէ, և պիտի ընէ ալ իրեն չար սովորութեան համեմատ :

Ուստի մենք ալ հիմայ կիմացունենք որ, վերը գրուած Սուրբ գրքին մէջ Աստուծոյ վճռած հրամաններուն համեմատ՝ ատ Միհրդատը չէ թէ միայն Նոյ—նահապետէն, Յաբեթէն և Հայկ մեր Նախահայրերէն անիծուած է · այլև մեր Տէր Յիսուս Քրիստոս Աստուածէն ալ անիծուած և բանադրուած է, ինքը ու իրեն պիղծ անիծեալ տեղակները :

Կ՚իմացունեմք մեր բոլոր Հայազգին, հեռաւորաց և մերձաւորաց · ատ Միհրդատի տեղակը զրպարտիչ և ստախօս է · որուն մէջ՝ որ Հայոց Մեծանուն տանը չեղած մերկութիւնը և չեղած պակասութիւնը, չգիտցածը և չտեսածը ինքնիրմէ հնարելով շինելով՝ իրեն երկու փարայ շահուն

**1864 · Մարդոց յիմար ըսել, և Քրիստոսի ի՛նչ ըսել · Միհրդատէ Վարդը։**

---

համար Յուդային պէս մատնութիւն. Բուշանի շնծներուն պէս սուտ վկայութիւն. և զրպարտութիւններ գրեր լցեր է տետրակը։ Որ աս տեղը նորին ստութիւնները զրպարտութիւնները արժան չեմ սեպեր յիշելու. և անոր համար ժամանակ անցունել թուղթ և մելան և դրամ ծախս ընել. քանզի կարդացողները կարդացին և գիտեն։

Մարդ թող չըսէ որ՝ անէծքն ի՛նչ է, բանադրանքը ի՛նչ է. չէ՞ որ Քրիստոս ըսաւ. "Օրհնեցէք և մի՛ անիծանէք. Ղուկ. Զ. 28։

Այո՛, վայելուչ բան մը չէ զմարդ անիծել. և մինչև անգամ եղբօրը յիմար, մորոս ըսելը՝ պարտաւորութեան ներքև մնալը յայտնեց Յիսուս։

Իսկ հարկը ստիպած ժամանակին, ստոյգ յիմար, մորոս և անիծած եղածը, երբոր իրեն յիմարութենէն և մորոսութենէն և անիծանելի գործքերէն անզեղջ և անդարձ մնալով հասարակութեան գայթակղութեան պատճառ եղողին, ինքը Յիսուս խսկ ըսաւ. "Մորո՛սք և կո՛յրք. զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն. որ սրբէ զոսկին,,. Մատ. ԻԳ. 17։ "Օձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցուք ՚ի դատաստանէ գեհենին,,. 33։ "Ետ նա դարձեալ ՚ի Պետրոս և ասէ, Երթ յետս իմ սատանայ,,. Մատ. ԺԶ. 23։ "Տակաւին դուք անմի՞տք,,. Մատ. ԺԵ. 16։ "Ասէ ցնա Աստուած. անմիտ,,. Ղուկ. ԺԲ. 20։ "Որք ունին հարբեալ զգահացութեամբ. մանկունք անիծից,,. Բ Պետ. Բ. 14։ Որմ բռեալ,,. Գործ. ԻԳ. 3։

Ահա՛ տես մորոս, կոյր, օձ, իժ, սատանայ, անմիտ, մանկունք անիծից, որմ բռեալ։ Ըսաւ. թէ Յիսուս՝ և թէ Առաքեալք. ինչո՞ւ ըսին, երբոր իրենք պատուիրեցին թէ մի՛ ըսէք. ահա՛ տես ի՛նչ կ՚ըսէ Յիսուս. մինչև անգամ գայթակղութիւն տուողը ծովը ձգելու հրաման կուտայ, ըսե-

1864. Հաստատացեալներուն Քրիստոնէից նշանները ճարտարութեամբ։

---

Լոմ. «Թէ գայթակղեցուսցէ զմի... լաւ է նմա... ընկղմեսցի ՚ի խորս ծովու». Մատ. ԺԸ. 6։ Նաև կամ՝ «Եղիցի քեզ իբրև հեթանոսն». 18։

Հիմայ աս անհոգի մարդը՝ բոլոր Պօլսեցւոց յայտնի է, ինչ վարքի և բարքի տէր ըլլալը մեզ չէ փոյթ. բայց տետրակին մէջ գրած զրպարտութիւնը և մատնութիւնը մեզ յայտնի ըլլալուն համար, և մանաւանդ անմեղ սպանումնե-րը որ բանիւ ըրած է, տետրակին մէջը որ մեք ալ իրեն գործքերէն առնելով, կը ցուցընեմք Նոյեան և Մաստուծոյ անիծից ներքև ըլլալը։

Արդ, ինչպէս որ ինչը զինքը Քրիստոնէից մէջ հաստատացեալ քրիստոնեայ ցոյց կուտայ, և շատ մարդ ալ զինքը քրիս-տոնեայ կը ճանչէ. իսկ՝ մեք աս տեղս տեսնամք քրիստոն-եայ եղողի նշանները ինչ է. թէ որ քրիստոնէութեան նշանները քովը գտնուինէ՝ իրաւ է որ անէծքի ներքև չէ. և եթէ չգտնուինէ՝ կրկին անէծքի ներքև պիտի երևի։

## ԳԼ. ԺԹ.

Հաստատացեալ անձի մը նշանները՝ ներքոյ գրեալքն են։

1. Ողորմած ըլլալ. «Երանի ողորմածաց՝ զի նոքա ողորմութիւն գտցեն». Մատթ. Ե. 7։
2. Սիրտ սուրբ ունենալ. «Երանի՛ այնոցիկ՝ որք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն». 8։
3. Երդում չընել, սուտ չխօսիլ և սուտ չվկայել. «Մի՛ երդնուցուք, մի՛ սուտ վկայեր». 34։
4. Մարդ պիտի չբամբասէ. «Մի՛ բամբասէք զմիմեանս». Յակոբ. Դ. 11։
5. Իրեն իշխանը չպիտի հայհոյէ. «Մի՛ հայհոյեսցես զիշխան

ժողովրդեան քո ,, . Գործ . ԻԳ . 5 .

6 . Ընկերը և զթշնամին պիտի սիրէ իրեն անձին պէս . "Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո ,, . Մատ . ԻԲ . 31 . "Սիրեցէք զթշնամիս ձեր ,, . Մատթ . Ե . 44 :

7 . Խնամք պիտի տանի իրեն ընտանեացը . այսինքն՝ Կնոջը , Զաւակներուն . Բ . Ազգականներուն . Գ . Ազգայնոցն . որոնք մարդուս ընտանիքներն են . Թէ որ խնամք չի տանի՝ իրեն հաւատքէն ուրացած է . կ'ըսէ Պօղոս աքեալը . "Իսկ եթէ ոք իւրոց՝ և մանաւանդ ընտանեաց խնամ ոչ տանիցի , 'ի հաւատոցն ուրացեալ է . և չար ևս քան զանհաւատն է ,, . Ա Տիմ . Ե . 3 :

8 . Խրատու բեռը պիտի վերցունեն . "Զբեռս միմեանց բարձջիք ,, . Գաղատ . Զ . 2 .

9 . Բերանը մաքուր պիտի պահէ . "Ամենայն տգեղ բան 'ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ ,, . Եփես . Դ . 20 .

Ասոնց պէս այլ ևս շատ նշաններ կան , որ ամէն հաւատացեալներուն յատկացած է ունիլ . "Չի՛ք խտիր . ո՛չ Հրէի և ո՛չ Հեթանոսի ,, . Գաղատ . Գ . 28 .

Ու եկեղեցականներուն ալ՝ թէ լիովին , թէ մասամբ նշանները ասոնք են .

1 . Յանուն իմ դևս հանիցեն .

2 . Լեզուս խօսեսցին .

3 . Ի ձեռս իւրեանց զօձս բարձցեն .

4 . Եթէ զմահացու դեղ ինչ արբցեն , նոցա ինչ ոչ վնասեսցէ .

5 . Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշկեսցեն . Մարկ . ԺԶ . 7 . Հեզ , ցած , հիւրասէր , պարկեշտ , ուսուցիչ . և այլն : Ա Տիմ . Գ . 2 . Որոց տեղուանքը կարդա և տես .

Վերյիշեալ նշանները չգտնուելէն ետքը՝ անոր հակառակը որ գտնուի հաւատացեալի մը քով , անոր ի՞նչ ըսելու ենք . յայտնի անհաւատ է , որ ատ նշանները քովը

չունի ։ "Նշանք այնոցիկ՝ որք հաւատան, և երևեսցին ընդ այնոցիկ ըստ Յիսուս մեր Տէրը · Մարկ · ԺԶ · 17 ։

Ու վերջին նշանն ալ Քրիստոնէութեան, և Աստուածպաշտութեան վասն ճշմարտութեան և արդարութեան հալածուիլն է · ինչպէս որ ըստ Յիսուս · "Եւ հալածեսցեն զձեզ··· զի այսպէս հալածեցին զմարգարէս որք յառաջ քան զձեզ էին,, · Մատթ · Ե · 11 ։ Վասն որոյ երանութիւն կուտայ Քրիստոս արդարութեան համար հալածուողներուն · "Երանի որք հալածեալ իցեն վասն արդարութեան,, · Վ · 10 ։

Ուստի՝ կը գրէ Առաքեալը · "Եւ ամենեքեան որք կամիցին Աստուածպաշտութեամբ կեալ ՚ի Քրիստոս Յիսուս, ՚ի հալածանս կայցեն,, · Բ Տիմ · Գ · 12 ։

Երբոր վերոյիշեալ նշանները՝ յետ մկրտութեան և կոչման, անձի մը քով թէ շատ և թէ քիչ չգտնուի, անիկայ Քրիստոնեայ չէ · և Մկրտութեան ժամանակին առած հաւատքը ուրացած է · Վա՜յ իրեն երաշխաւոր կնքահօրը ։

Որովհետև՝ երախայն մկրտութեան ժամանակէն յառաջ կնքահօր գիրկը բազմած՝ Մկրտող քահանայն կը հարցունէ կնքահօրմէ · Ի՞նչ է, ինչո՞ւ այս երախայն բերած ես · Զի՞նչ խնդրէ Երախայն · — կնքահայրն ալ իրեն և ծնողացը հաւատով կը պատասխանէ · Հաւատ, Յոյս և Սէր · և այլն ։

Նոյն Հաւատովը, նոյն Յուսովը և նոյն Սիրովը կը մեծնայ կատարեալ մարդ կը լինի · գրեանք կը կարդայ, հարկաւոր եղած դաւանութիւնը կը սորվի և այլն · և կը լինի քրիստոնեայ շնորհօք Հոգւոյն սրբոյ · որ ամէն մէկ անձին շնորհ մը կուտայ, ինչպէս որ Առաքեալը կ՚ըսէ · "Ումեմն՝ բան իմաստութեան · այլում՝ բան գիտութեան · միւսումն՝ հաւատ · այլում՝ շնորհ բժշկութեանց · այլում՝ յօրինուածս զօրութեանց ։ Այլում՝ մարգարէութիւն · այլում՝ ընտրութիւն հոգւոց · այլում՝ ազգք լեզուաց · այլում՝ թարգմանութիւն լեզուաց ·

դու լայց ամենայն յոլովէ մինչև յաւիտեան,, · Ա Կոր · ԺԲ · 8 ·

Քրիստոնեայ մը թէ որ այս գիտութիւնները ունի՝ և սէր չունենայ առ Աստուած և առ ընկեր, ոչինչ է և անհաւատ · ինչպէս որ սրբազան Առաքեալը կ'ըսէ ·

"Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ, և հրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ · · · ոչինչ եմ,, · Ա Կոր · ԺԳ · 1 · Տես այս գլուխը կարդա ·

Կատարեալ գիտնական Աստուածապաշտ անձը՝ ամէն բանէն յառաջ Աստուծոյ երկիւղը իրեն սրտին մէջ պիտի ունենայ · ինչպէս որ Սողոմոն կ'ըսէ · "Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է,, · Առակաց · ԻԲ · 4 · Հիմայ յայտնի կ'երևի, առ Աղէտից — Տեարանց և Մեղաւոր—Յաւիտենի գրոցը, Ադամայ երէց—որդւոյն պէս՝ շատ տեսակ պատիժներու տակ ընկած մնացած է ·

Ա · "Յաւիտենից ողորմին, և ի մարդկանէ ողորմացէ,, · Ղուկ · ԺԸ · 4 · տունէն վռնտուած երերեալ և դեգերեալ կը շրջի ·

Բ · Անկրտուած աւուր առած քանքարը, այսինքն՝ շնորհքը · ծրարեր հողին ներքև թաղեր, այսինքն՝ աշխարհի շահախնդրութեան և զբաղմանց մէջ ընկղմեր, ձեռք զարկեր Գողիաթու նիզակին, որով ասոր անոր դուռը կը չալէ զանազան զրպարտութիւններով՝ կտոր մը չոր հացի համար ·

Գ · Անհաւատութիւնը յուսահատութիւնը զինքը զրկեր Աստուածային բարձր պատմութիւններ և բարոյական բարի և սուրբ խրատներ գրելէն, մտներ աղբանոցներու անարժան խօսքերը գրելու ·

Դ · Մարդկութենէն զրկուած, անասունի նման աս և ան խայթելու, պատառելու արժանաւորութիւնը գտեր, առօրեայ ապրուստին համար ·

Ե · Զրկուածէ հայրը և մայրը, կինը և զաւակը, եղ-

---

բայրը և քոյրը, և ընտանիքները սիրելէն · և Աստուծոյ պատուիրանը պահելէն, մասնաւոր հայրը և մայրը բամբասելու, անարժան գնայքներու խոնարհելու · որով իրեն կնոջն ալ մինչև անգամ տանը երևնալով՝ տունէն վռնտուելու արժանաւորութիւնն ալ ստացեր և կը շրջի ։

Զ · Զրկուած է Աստուածային սիրոյն, միայն լոկ ստացկան վասն շահու սիրով կը կենցաղավարի մարդկանց հետ՝ իբրև անասուն · ո՜հ, Մարդ 'ի դատարկ էր և ունայնացաւ ·

Է · Այն մարդու սրտին մէջ հաստատուած է իրեն թշուառութիւնը, և այսքան պատժոց ներքև ըլլալը, թէ և իրեն սրտակից բարեկամներէն ալ հարցուելու ըլլայ՝ անոնք ալ ճշմարտութիւնը չեն ուրանար, և կը վկայեն թէ՝ զանազան պատիժներով դատապարտեալ է ։

Ինչու որ իրեն ցոյց տուած պտուղներէն յայտնի կ'երևի անհաւատ ըլլալը · և անհաւատներուն համար ալ Տէրն մեր Յիսուս կ'ըսէ · "Արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն Որդւոյն Աստուծոյ„ · Յովհ · Գ · 18 ·

Ասիկայ սկիզբէն հաւատաց, և ուխտ ըրաւ որ՝ մինչև ցմահ հաւատով, յուսով և սիրով մնալ, և ապա մկրտուեցաւ · հիմայ՝ ոչ յոյս և ոչ հաւատք և ոչ ալ սէր կ'երևի քովը, վասն որոյ դատապարտեալ է ·

Ասոր նման հաւատքէն ընկածներուն համար կ'ըսէ սրբազան Առաքեալը · "Լաւ էր նոցա թէ չէր ճանաչեալ զճանապարհն արդարութեան, քան թէ ծանեան և յետս կացին 'ի սուրբ պատուիրանէն„ · Բ Պետր · Բ · 21 ·

Վասն որոյ այսպիսիները ծանր պատիժներ կրելու արժանի կ'ըլլան, քանզի այդպէս կ'ըսէ Տէր Յիսուս ·

"Նա ծառայ որ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ, և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում„ · Ղուկ · ԺԲ · 47 ·

Նոյնպէս Յակոբոս առաքեալ կ'ըսէ · "Եւ որ ոք գիտիցէ

չքաւորին և ողորմելիին մեղք են նմա ,, . Յակոբ . Դ . 17 .

Որովհետև աս Եւագէոսի ըրած գործն ալ անհաւատալի նման է . և անաստուածի գործ . որն որ աչօքը չտեսած , և օրինաւոր ժողովքներով չքննուած անգոյ յանցանքը , չինծու գրերով և իրեն ջախջախեալ գրչի բերանով հաստատելու կ՚աշխատի :

Իրեն խղճմտութիւնը չիմեղ.քընար . և իրեն վշտալի կի-նը չի հոգար , Արմաշու վանից մէջ ըրած մեղքը չապաշխարէր , իրեն աւուր ցամաք հացը ճարելու չի պարապիր , պաշտօնները ողորմելի ըրեր , ընկեր ապարէգի մը մէջ , ինքն իր դրչովը կը լողայ և կը դողայ :

Որպէս թէ ինքը զինքը ոմն կը կարծէ . հիմա կը հարցընեմք ազգայնոցմէ , գիցուք թէ՝ Սուրբ Երուսաղեմի Պատրիարքը՝ և այլ երևելիները տետրակին մէջ գրած է , գուցէ անոնցմէ կուծելիք ոսկի մը կը յուսար առնելու , իսկ՝ Մկրտիչ վարդապետէն ի՞նչ կը յուսար առնել :

Որ անոր համար ալ՝ յաւելուածներ գրեր , ճիտ կախելիք թուղթեր ցոյց տալով : Եւշուառական , թէ որ ատանկ չինծու թղթերով մարդ դատուելու ըլլար , աշխարհիս մէջ մարդ չպիտի մնար անդատապարտ :

Որովհետև ամէն մարդ հակակրական կերպով մէյմէկ թշնամի ունի , առանց թշնամի մարդ չկայ . իւրաքանչիւր ոք իրեն սրտին և կամքին ուզած մեղքերը և յանցանքները կրնայ գրել , և Սուլթան—Պէյազիտէն ալ հարիւրաւոր մէօհիւրները կարնել , տանիլ Բարձրագոյն դուռը տալ , ուզածը պատժել . թէ որ օրինաւոր քննութիւնները՝ խօճէնէօքները չըլլան նէ :

Մէկ մարդ մը յանցաւոր դատուած ստոյգ ըլլալը , մէկ քանի գործողութիւններէն յայտնի կրնայ ըլլալ . որն ստորև կը յայտնեմք :

1864 · Օրինաւոր քննութիւն յանցաւորի :

Նախ՝ յանցաւոր կարծուելիք անձը, ինչ տեղ որ յանցանքը գործեր, նոյն տեղի Ազգային և Տէրութեան ժողովքին և դատարաններուն մէջ երկարօրէն քննութիւն ըլլալէն ետքը՝ անկողմնապահ հաւատարիմ վկայներով պէտք է որ հաստատուի․ և ապա նոյն ժողովքին տեղեկագիրը կը գրուի և կը կնքուի, և ապա թէ որ հասարակութենէն ալ հարկաւորի ճառէ մը, կրնայ շինուիլ իբրև հաստատ վկայութիւն, և կամ բողոք մը, բառնալ զչարն ՚ի միջոյ ընելու համար․

Երկրորդ՝ թէ որ յիշեալ յանցաւոր դատուելիքին երկրին մէջ օրինաւոր կերպիւ ժողով չգտնուի․ անոր կեդրոնը․ այսինքն՝ Տէրութեան Կուսակալը՝ և Ազգային արքեպիսկոպոսը ուր կը նստի՝ այն տեղը երթալու բողոքելու է, վերոյ յիշուած կերպով յանցաւորը դատելու է․

Երրորդ՝ թէ որ յանցաւոր կարծուելիք անձը անիրաւ է՝ և կողմնականներ շատ ունենալուն համար՝ ուղիղ դատը չեն կարող տեսնալ․ անատեն կը գրեն, Պօլսոյ քննիչ մը կը խնդրեն, կուգայ կը քննէ․ ո՛ր կողմը սուտ ելաւ, նոյն կողմը վնասը և ծախքը պիտի վճարէ և պատժուի ալ․

Չորրորդ՝ եւ եթէ ատ ալ՝ չեն կրնար ընել, կ'ելլեն քանի անձինք կուգան Պօլիս, և կը յղեն յանցաւոր կարծուելիքն ալ կը բերեն, երես առ երես դատերնին կը տեսնուի․

Չէ նէ՝ անանուն և աննշան մօհրերով, և կամ անուանի և նշանաւոր մօհրերով․ առանց քննութեան մարդ չի դատապարտուիր, և չի պատժուիր․ Սրովհետև ազգային խառնափնթոր ժամանակը չէ որ ուզածնուն պէս գործին հարցնող չըլլայ․

Մկրտիչ վարդապետի վրայօք եղած ճառերը որ մէկը օրինաւոր քննութեան ներքև ընկած է, և վճռուած․

1864 . Սուտ Մահուէր՝ և Աստուծոյ հակառակ գործ ,

---

Սրբազան Մատթէոս պատրիարքէն սկսիլ , Յակոբոսէն և Սրբազան Գէորգ , և Սրբազան Սարգիս , այժմեայ Սըրբազան Պօղոս Պատրիարքներու առջև երբ յանցաւոր գըտնուած է , և վճռուած է ։

Արթուն Վարչութիւնը լաւ տեղեկացնէ Քրիստոնէութեանու և Իսլամայ երկրի վրայօք , որուն մէջ առատուն շուտքունէն ելլողը ազգասէր և ժրաջան է ։ և անոր գրած հառաչքն ալ այնքան զօրութիւն ունի , մինչև Պատրիարքարանը մտնայ լուսին առջև ելլէ ։ անկէց ետքը ոչինչ կըլլայ , քանզի հիմն ի վերայ աւազոյ է , արմատը սուտ է ։ Ահա՛ այդպիսի թղթերն է՝ որ փորերնին դատարկ ոմանք սնոտի յուսով վեր կառնուն և կպահեն , անկէց օգուտ մը քաղել , բայց ոչինչ և զուր մտածմունք ։

Անխելք զուր ջան Թէոդէոսն ալ , երբոր տեսաւ առաջին աղետից յաւելուածէն իւրեն ձեռքը հինգ փարայ դնող չեղաւ , այս անգամ իւրեն արբանեակ Մողեսէն , ինչ քան որ կրցաւ առաւ թօյնը սրտին մէջ , սկսաւ թափել մեղուի յաւելուածին մէջ , որպէս թէ հին ըռամները ծածկուի , ալ չյիշուի , և գուցէ քանի փարայ տուող ալ ըլլայ իւրեն ։

Խղճալի՛ , լուսաւոր աչքերը շուտով աւետարանը կարդացեր են ։ թէ՝ "Ոչ է արժան առնուլ զհաց մանկանց և արկանել շանց Մարկ . Է . 27 ։

Չէ թէ յաւելուած՝ կուղէքնէ , այսմաւուրներ գրեցէք , թէ որ բան չունիք ։ մարդ ձեզի բան տալիք չունի , մանաւանդ Տիգրանեան Մկրտիչ վարդապետը որն որ կըսէ , ատանկ մարդիկ կզարմանամ որ Աստուծոյ ինչպէ՞ս պատասխանատու պիտի ըլլան ։ երբոր՝ Աստուծոյ ստեղծած արևին լուսով իրենց աչքը կըլուսաւորի , կըթողուն Աստուծոյ գործը Աստուծոյ հակառակ սատանայի գործին օգնել կ'աշխատին ։

1864 · Ազատութիւն է, բայց ինչ բանի համար :

---

Աստուծոյ տուած բարիքը կը վայելեն, հացը կուտեն, ջուրը կը խմեն, օդը կառնեն կուտան, հրով կը տաքնան, հովերով կը զովանան, Աստուծոյ պատուէրները բանելու տեղը զԱստուած կանարգեն : սատանայի կամացը կը հետևին իրենց գործքերով : քանզի '' ասաց անզգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած · Սաղմ :

Ու ոմանք անխելք մարդիկ ալ՝ ընդ դէմ Աստուծոյ մեղանչելու անուն ալ ազատութիւն դրած են :

Մարդկային բնութիւնը այսօր 1864 տարի է որ ազատութիւն գտած է Սուրբ աւետարանով : թէ որ լսեն աւետարանին :

Որդարև ազատութիւն է : իրարու բարերարութիւն ընելու : իրարու պատիւ ճանչնալ : զրկեալը զրկողի ձեռքէն ազատելու : ամէն մարդ իրեն չափը ճանչելու : չէ թէ՝ զիրար հեգնելու ծաղրելու, ծանակելու և նախատելու և կրցածին չափ վնաս հասցընելու : Մի՛ զրկէք զմիմեանս : Ա · Կոր · Է · 5 ·

Ազատութիւն է՝ կրօնքդ, հաւատքդ, եկեղեցիդ յայտնի պաշտելու և փառաւորելու : համարձակ արարողութիւնները ընելու : եկեղեցականներդ և ազգապետներդ, և գիտնականներդ, պատուելու և յարգելու : Զամենեսեան պատուեցէք Ա : Պետ · Բ · 17 :

Ազատութիւն է՝ հեռաւոր տեսութիւններ ընելով ապագայ զաւակներնուս ժամանակաւոր ապրուստներ ճարելու արհեստներ հնարել, կարգի դնելու՝ օտարներուն բարի օրինակ ըլլալու :

Քանի որ Աստուած մեզի կողորմի զանազան յաջողութիւններ կուտայ · երբոր մեք չենք իմանար · ան ատեն կսկսի տեղեխ տեղեխ պատիժներ ալ յայտնել · ինչպէս որ կ՚ըսէ այգեգործը : '' Տէր թող դմա յայս ամ ևս մինչև զշուրջ դովա բրեցից՝ և արկից աղբ ,, · Ղուկ · ԺԳ · 7 ·

1864. Զանազան պատիժներ, ԲԷ Բուլա և ԲԷ Սելէրա.

Երբեմն զանազան հրդեհմունքներով, և երբեմն երկրաշարժութիւնով, և երբեմն սովու և սղութենով. և զանազան հիւանդութիւններով, և երբեմն առ և տուրի ձախորդութիւններով, ինչպէս որ կերևի.

Մի թէ՝ մեծ պատիժ չէ բաղուեցւոց. որ այսօր երկու տարի է՝ սերմը կը նետեն, չի բուսնիր. յետին խղճութեան մէջ կը նեղին և կտառապին. մեծ պատիժ չէ՞ առ սով սղութեան մէջ երկրաշարժութիւն ալ՝ կըլլայ, մեծ արհաւիրքներով կը պատին. մեծ պատիժ չէ՞ տակաւին առ նեղութեան մէջ իրարու միս կուտեն, և գերեզմաններուն ալ ժամանակ չեն ունենար օգնելու.

Ինչպէս որ Թաւրալեան պարոն Կոստուրի ամուսնան Յօնիկը, և Մանկասարը սպաննուեցան. 30000 ղրուշի ապրանք և դրամը տարին, գողը բռնուեցաւ Տէրութեան բանտին մէջ Խարբերթ դրուեցաւ. երթող հարցընող չըլլալնուն համար, տակաւին գողը անպատիժ և տարած դրամն ալ վճար կը մնայ.

Նոյնպէս Բիւրտիսեան Աղեքսան մէջ՝ մեծ պատիժ չէ՞ սով և սղութիւնը տիրած է. թող Կարնոյ երկրաշարժութիւնը, և հրդեհը. նոյնպէս Պրուսայի անտանելի երկրաշարժութիւնը, և մեծ հրդեհը. որ յետին խղճութեան հասոյց իրեն բնակիչները. Զար—սանճագի, և Երերինու հայոց խղճութիւնը. Որ առ ցաւալի խղճութեան հոգը մէկդի ձգուած՝ իրարու միս ծամելու ելեր են, Միհրդատին պէս գիտնական եմ ըսող տգէտները. որ իրենց յատկացած պատիժն է. անարժան բաներ գրել. ինչպէս որ կըսէ Առաքեալը. "Եւ որպէս ոչ ընտրեցին զԱստուած ունել ՛ի գիտութեան. մատնեաց զնոսա Աստուած ՛ի միտս անընտրութեան գործել զանարժանս. Հռոմ. Ա. 28.

Արդեմն՝ առ գէշութիւններէն հեռի կենալու աշխատիմք.

ճշմարտութիւնը գրկենք, որ նա կարող է զմեզ ազատել յամենայն չարէ «Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» Յովհ. Ը. 32։

Ճշմարտութեան հետևողը զՔրիստոս, հրէից չի հարցըներ· անոնք կամովին առ նախանձու կը պօռան «Գիտեմք զի այրդ այդ մեղաւոր է» Յովհ. Թ. 24։

Նոյնպէս ալ Աբէլը՝ Կայենէն. Յակոբը՝ Եսաւէն. Յովսէփը՝ եղբարցմէն. Դաւիթը՝ Սաւուղէն. Դանիէլը՝ Բաբելացոցմէն. Հայկը՝ Բէլէն. Սահակ—Պարթևը՝ Սուրմակէն և Բրքիշոյէն. Պօղոս առաքեալը՝ Տէրտուղիանոսէն և Անանիա քահանայապետէն չեն հարցներ. ահա՛ բայց տեղուանքը տես ի՛նչ կը պատասխանեն. Ծննդ. Դ։ ԻԷ. 41. ԼԷ. 18։ Դ Թագ. ԺԸ. 8։ Դան. ԺԳ. 27։ Ա Հատոր Հայոց Պատ. 586։ Գործոց. ԻԴ։

Նոյնպէս ալ Մկրտիչ վարդապետը՝ և կամ ով ոք որ ըլլայ, իրեն թշնամիներուն գրած գրերուն առանց քննութեան հաւատ ընծայելու չէ, և անոնցմէ գործին որպիսութիւնը հարցնելու չէ։

Քանզի այժմեան ժամանակիս ներկայի ըմբոստ մտածումը, ապագայի մեղքին տեղ ընդունող շատ կան. վասն որոյ ճշմարտութեան հետևիլը քիչ մը դժուար կուգայ.

Բայց՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Որ առնէ զճշմարտութիւն գայ առ լոյսն. զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան», Յովհ. Գ. 21։

Ուրեմն՝ կ'աղաչենք որ, ամէն մարդ իրեն չափը ճանչելով՝ իրարու պատիւ պահելու շինութեան ետևէ ըլլալ· հայրը՝ որդւոյն խնամքը ընէ. որդին՝ հօրը հնազանդութիւն ընէ, փոքրերը՝ մեծերը ճանչեն, գիտնականներու յարգ և պատիւը տեղը պահեն. իրարու միշտ օգնութիւն ընելու աշխատինք։

Ամէն բանի մէջ ուրիշը, կոտրելը շուտ կը լինի, բայց շինելը շատ դժուարին է. վերէն 'ի վար իջնալը շատ հանգիստ է. բայց վարէն 'ի վեր ելլալը դիւրին բան չէ ։

Բանի որ քու քովդ պակասութիւն կայ, ուրիշի պակասութիւնը յայտնելու մի՛ համարձակիր ։

Ազգիդ, եկեղեցւոյդ, քաղաքացւոյդ, գեղացւոյդ; դրացնոյդ և ընտանեացդ մէկ պակասութիւնը տեսար, ինչքան կրնաս ջանի գաղտնի կերպով խրատէ յորդորէ, շիտակ ճամբու վրան բեր. որ ատիկայ է մեծ առաքինութիւն ։

ԳԼԽԱՒՈՐ ԱՆՑՔԵՐ

Գերապատիւ Պէշլէրեան Յակոբ Էֆէնտին՝ Կեսարիոյ Սուրբ Կարապետ վանից վրայ 2 բեռի չափ պարտքը տուաւ և մէկ ձեռք ծանր Պատարագի զգեստ՝ իրեն բոլոր Նախշովը ։ Թալաս գիւղի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ Յէշլապոլ տուաւ ։ որով անմահացուց իրեն անունը և ընտանեայը ։

Վարդապետ Պօղոս Պէյի մարմինը ամփոփեցաւ Մայր եկեղեցին. 1863 Դեկտ. 22 շքեղ փառաւոր մեծ հանդիսիւ ։

Նորատունկեան Յակոբ Աղայի ազնիւ Պաղտասար որդւոյ մարմինը ամփոփեցաւ Պէյ—օղլու ։ 1664 Յունվար 12 փառաւոր հանդիսիւ ։

Մայր—եկեղեցւոյ Աւագ Տէր Գէորգը վախճանեցաւ ։ փառաւոր յուղարկաւորութեամբ Պալըգլը տարուեցաւ, 1864 Փետրվար 7 ։

Գրեցաւ 1864 Մայիս

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 'Ի Պատրիարքարանն ամենայն Հայոց:



Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա · Սաղմ. կէ:

*Քանզի՝*

Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի:

*Վասն որոյ՝*

Եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց · Փիլիպ · Բ · Թ:

# ՎՐԻՊԱԿՔ

| Սխալ | Ուղիղ | Թղթահամար |
|---|---|---|
| Ա.մ | այր մի | Գ |
| Տիրոչ | տիրոջ | Գ |
| Գաստատա | գաստատանաւ | Է |
| Գումարներ | տումարներ | ԺԳ |
| Ուղոտի | ուղուի | ԺԵ |
| Խնդարգրուլ | խնդրագրով | 8 |
| Քչութեան | .քարոզչութեան | 12 |
| Ժողովուրը | ժողովուրդը | 18 |
| Աշխարհակնաի | աշխարհականի | 28 |
| Անգուտ | անգութ | 32 |
| Ասոի | ասորի | 41 |
| Հենայք | հրէայք | 69 |
| Ողուրմութիւն | ողորմութիւն | 7[illegible] |
| Հետերնիս | հետերնին | 85 |
| Հոգեւր | հոգեւոր | 90 |
| Բերեոլ | բերելու | 91 |
| Յոկոբ | յակոբ | 92 |
| Առաքկլ | առաքել | 92 |
| Ածնէ | առնէ | 92 |
| Մկրտնչ | մկրտիչ | 92 |
| Լըիցէ | լուիցէ | 97 |
| Լուիցես | լուիցէ | 97 |
| Սնոնտ | սնունդ | 109 |
| Անդրագիր | խնդրագրովը | 127 |
| Մոքարէն | մարգարէն | 128 |
| Կոմապաշտ | կամապաշտ | 128 |
| Վ նասելու | վնասելու | 126 |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Վերջերըրդ թերթի երեսի թիւը 37 դրուելու տեղ՝ սխալմամբ 67 դրուեր և շարունակուեր է մինչև 74 թիւը։

Վերջերըրդ թերթին 52 թուոյն մէջ՝ Գլուխ Է. ին տեղը՝ սխալմամբ Ը. դրուեր է. և 56 թուոյն մէջ ալ Զ. ի և ... տեղն դրուեր է։